

K'arasown tarowan
Asxataworë Mkrctic
P'ort'owgalean :
K'arasnameay
Yobeleani Art'iw

K'arasown tarowan Asxataworë Mkrtic P'ort'owgalean : K'arasnameay Yobeleani Art'iw. 1914.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՆ ԱՇԽԱՏԱԻՈՐԸ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՅԱՐԳԱՆԲԵՐ ՊՍԱԿ

ՀԻՒՍԵՑԻՆ՝

ԱԿՆՈՒՆԻ Է.
ԳԱԼԵՍՔԵԱՐԵԱՆ Զ.
ԵՍԱՑԵԱՆ ԶԱՊԷԼ
ԵՐԱՄԵԱՆ Շ.
ԶԱՐԴԱՐԵԱՆ Ռ.
ԹԵՆԴԻԿ ԱՐՇԱԿՈՒՇԻ
ԹԵՔԵԵԱՆ Վ.
ԽԱԺԱԿ Գ.
ՇՐԱՆԴ
ՆԱԹԱՆԵԱՆ ՄԻՔ.
ՇԱՇՊԱԶ Բ.
ՇԱՇՊԱԶԵԱՆ Ց.
ՇԱՇՐԻԿԵԱՆ Ց.
ՇԱՇՐԻՄԱՆ Վ.
ԶԱՎՈՒՇԵԱՆ Ե.
ԶԵՕԿԻՐԵԱՆ Ց.
ԶԶԵԱՆ Ա.
ՊԱԶԻԼ ԽԱՆ, ՏՈՔԹ.
ՍԻՊԻԼ
ՎԱՍԻԼԵԱՆ Պ.
ՎԱՐՈՒԺԱՆ Դ.
ՎՌԱՄԵԱՆ Ա.
ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Գ.

Հոգի Հուշարժան Երևանում

Այբուբեն 15-2-1974

Պետրոսյան

M 905 / 74 իմ

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԱՆԻ ԱՌԹԻԻ



04 729

2008-92 01331

2008-123423

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 231

Քսար Տարոհար Աշխատար

Կ Ե Ն Ս Ա Ք Ի Ր Ա Կ Ա Ն Ք Ծ Ե Ր

Ե Ի

Ք Ն Ա Հ Ա Տ Ո Ւ Մ Ն Ե Ր

Տ . ՁԷՕԳԻԻՐԵԱՆ

ԱԿՆՈՒՆԻ Է .

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ Ձ .

ԵՍԱՅԵԱՆ ՁԱՊԷԼ

ԵՐԱՄԵԱՆ Հ .

ՁԱՐԴԱՐԵԱՆ Ռ .

ԹԷՈՂԻԿ ԱՐՇԱԿՈՒՀԻ

ԹԷՔԷԵԱՆ Վ .

ԽԱԺԱԿ Գ .

ՀՐԱՆԴ

ՆԱԹԱՆԵԱՆ ՄԻՔ .

ՇԱՀՊԱՁ Բ .

ՇԱՀՊԱՁԵԱՆ Յ .

ՇԱՀՐԻԿԵԱՆ Յ .

ՇԱՀՐԻՄԱՆ Վ .

ՁԱՎՈՒՇԵԱՆ Ե .

ՁՁԵԱՆ Ա .

ՊԱՁԻԼ ԽԱՆ , ՏՈՔԹ .

ՍԻՊԻԼ

ՎԱՍԻԼԵԱՆ Պ .

ՎԱՐՈՒԺԱՆ Գ .

ՎՌԱՄԵԱՆ Ա .

ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ Գ .

Կենսագրական գծեր

Հանրային եսը

Մ . Փորթուգալեան

Հայ կնոջ կողմէ

Վասպուրականի մէջ

Պայքարողները

Վերլիշում մը

Անձնական յիշատակներ

Տոկուն Մարդը

Իր դաւանանքը

Յիշատակաց բովերէն

Հայաստանի կամքը

Յուշեր անցեալէն

Նախակարապետը

Մարանջողը

Ուսուցիչը

Յիշողութիւններ

Քառասուն տարի

Հերոսը

Յորելեարը եւ Արարատեան ընկերութիւնը

Ռահվիրաները

Ողջոյն Սերմնացանին

Մօտաւոր անցեալի յիշատակներէն



Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ Կ Ր Տ Ի Չ Փ Ո Ր Թ Ո Ւ Գ Ա Լ Ե Ա Ն

(Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Գ Ծ Ե Ր)

Մկրտիչ Փորթուզալեան ծնած է 1848 Հոկտեմբեր 9/21ին Կ. Պոլիս, Գում-Գարու, Լանկա, Եալընըզ Պազալ փողոց, իր հօրենական տան մէջ: Հայրը՝ Ռափայէլ Փորթուզալեան սեղանաւոր էր. իբրև բարերարոյ և ուսումնասէր անձնաւորութիւն յարգուած էր, ունէր բաւական կոկիկ գրադարան մը՝ ուրկէ մեծապէս պիտի օգտուէր զաւակը:

Փորթուզալեան՝ իբր տարրական ուսումնարան ունեցաւ Գում-Գարուի Մայր վարժարանը՝ ժամանակին լաւագոյն ուսումնարաններէն մին՝ ուր կը դասախօսէին ատենին ջոջ ուսուցիչները. Յ. Մալէզեան Հայերէն լեզուն և Ընդհ. Պատմութիւն կ'աւանդէր, փրանսերէնը Յակոբ Ոսկան, Հերեթիկ Հոճան Թուրքերէն, Ուսողական Գիտութիւնները Միւսիւ Բասթալը (Յ, Թիւլեան):

Աշակերտական այդ օրերուն իսկ՝ ազգային եղելութիւնները անտարբեր չեն ձգած զինքը. արդարև եռանդագին պայքարի մը շրջանն էր որ կ'ապրէր այդ միջոցին Պոլսոյ հայութիւնը. արդէն 1847ին (Մայիս 20) ամիրայական շէնքը կը սարսէր Գերագոյն ժողովին գումարումովը: 48ի Քրանսական յեղափոխութեան յաղթանակը՝ որ ուամկավարական ազնիւ սկզբունքներով կը զինէր Փարիզի հայ մտաւորականութիւնը, անոր միջոցաւ կու գար Հայ ազգային կեանքին մաքրագործմանը. Ն. Ռուսինեան, Ն. Պալեան, Գ. Օտեան, Կ. Իւթիւճեան և ուրիշներ 1853էն մինչև 1860 կը կազմակերպէին Ազգային Սահմանադրութիւնը: 1860ին արդէն իսկ կը սկսէր այդ դրութեան կիրառութիւնը: Ամիրաներէն շատերն ու մոլեռանդ յետադէմներ անոր մէջ կը տեսնէին, չէ թէ իրենց ազդեցութեանն ու տիրապետութեան չքացումը՝ հապա և եկեղեցական և ազգային քայքայում, մինչ նորերը ճշմարիտ վերածնունդի մը նախօրեակը կ'ողջունէին անով: Ու ահա պայքարի շրջանը կը սկսէր, Մաւիս ախոյեանը կ'ըլլար երիտասարդութեան՝ մինչ Տէրոյնցի Երեւակը պահպանողականներու զինարանը կը դառնար: «Լուսաւորեալ»ի և «Խաւարեալ»ի կռիւները ծայր կուտային:

1861ի Սահմանադրական մարմինը իր նիստերը կ'ընէր Մայր վարժարանին մէջ, որով ուսանողները կը փոխադրուէին շրջափակի Ս. Խաչ ժամը: Մ. Փորթուզալեան յուզումով կ'երթայ անկիւնէ մը գաղտագո-

դի ականջալուր ըլլալ աղմկալի այդ ժողովներուն՝ ուր երկու կուսակցութիւններ բուռն կերպով կ'ընդհարէին իրարու :

Իպրոցին կառավարիչ Պ. Յովհաննէս՝ նմանօրինակ ժողովներու միջոցին, ազոց ծնկաչոգ «Տէր Ողորմեայ» ըսել կուտար, «Ազգիս Հայոց սէր միութիւն» խնդրելով :

1861ի այդ օրերուն՝ աւելի կ'ուժովնան Լուսաւորեալի և Խաւարեալի կուսակցութիւնները՝ որովհետեւ Երուսաղէմի յաւիտենական խնդիրը նորէն կ'արթննայ : Պատրիարքը կը մեռնի տարի մը առաջ՝ ու խնդիր կը ծագի թէ Պատրիարքը ներսէն թէ դուրսէն ընտրուի . «Լուսաւորեալ»ը «ներսէն ալ՝ դուրսէն ալ» կը պատասխանէ, նաև առաջարկ կը դնէ վարչական քօնթրօլ հաստատել Վանքին վրայ, «Խաւարեալ»ները կը մերժեն : Ամբաստանութիւն, ծեծ, կռիւ, նոյն իսկ արիւնհեղութիւն ժամերուն մէջ . կառավարութիւնը կը միջամտէ : Բ. Դոնէն անվաւեր Սահմանադրութիւնը կը դադրի գործադրութենէ : Առժամապէս «Խաւարեալ»ը յաղթանակած է :

Մայր վարժարանն ու Եկեղեցին «Խաւարեալ»ները ձեռք կ'անցնին, և ուսումնարանին տեսուչ կը կարգուի Տէր Գէորգ քահանայ, որ աւելի իր կուսակցական գործովը կը զբաղի քան կրթական : Մ. Փորթուզալեան վերջին տարին (1862) կը ձգէ Մայր վարժարանը ու կ'անցնի Սամաթիոյ Ս. Սահակեանը՝ ուր Սահմանադրականներն (Լուսաւորեալ) կը վարէին թաղին գործերը : Ամէն օր իր թաղէն մինչև Սամաթիա հետիոտն կ'ընէր այդ ճամբորդութիւնը՝ քանի որ ուրիշ միջոց չիկար այն ատեն :

1863ին, այն տարին երբ Բ. Դոնը վաւերացնելով կը վերահաստատէ Ազգային Սահմանադրութիւնը, Փորթուզալեան շրջանաւարտ կ'ելլէ Սամաթիոյ Սահակեանէն :

Իպրոցէն մեկնելէն յետոյ՝ Փորթուզալեան կը մտնէ գրավաճառ-թղթավաճառ և ուսուցիչ Pierre Troyի վաճառատունը՝ որ կը դաժնուէր Մաքասըլար փողոց : Փիէր Թրուա հայասէր մըն էր, ջերմ բարեկամ «Լուսաւորեալ»ներուն՝ որոնց դատին արդարութեան նուիրուած տեսրակ մըն ալ հրատարակեց «La question arménienne» անունով : Անոր քով Փորթուզալեան ինքնազարգացման ալ հետամուտ կ'ըլլար, արհեստին հետեւելով հանդերձ :

1859ին մեռած էր հայրը . 1865ին՝ մայրը կորսնցնելու դժբաղդութիւնն ալ կ'ունենայ :

Գրավաճառութեան գործին ծանօթանալէ յետոյ՝ 1866ին կը ձեռնարկէ սեփական գրատուն-թղթավաճառանոց մը բանալ՝ Բարիզի նմանօրինակ հաստատութեանց հետ յարաբերութեան մտնելով : Տարի մը մը յետոյ կը ստիպուի լքել այդ գործը, ժառանգական խնդիրներու առթիւ ծագած տեւական դատավարութեանց հետեւանքով :

1867ին կը սկսի իր ուսուցչական աւարտեզը : Պաղճեան կարապետ վարժապետի (յետոյ Բարթողիմէոս վարդապետ) առաջարկութեամբ, դաստիարակի պաշտօն կը ստանձնէ Ենիքէօյ Րէիզեաններու ընկարա-

նին մէջ՝ կը լքէ այդ աշխատութիւնը հեռաւորութեան պատճառաւ ու թ. Թերզեանի թելադրութեամբ՝ կը մտնէ Պէշիկթաշ Զօպանեան Յակոբ աղայի տունը նոյն պաշտօնով՝ իբր անոր երկու զաւակներուն դաստիարակ:

«Պեճի Կ ըսէ որ, կ'ըսէ Մ. Փորթուգալեան, համեստ ինքնակենսագրութեան մը մէջ. այդ երկու հարուստ եւ ազնիւ ընտանիքների տուներին մէջ ալ, ուր պաշտօն վարեցի, աշխատանքս թեթեւ էր եւ շատ հանգիստ վիճակ մը ունէի, բայց այդ հանգստութիւնը արդէն անհանգիստ կ'ընէր զիս, որ կը փափաքէի հանրային գործունէութեան շարժման մէջ մտնել»: Կը թողու այս վերջին պաշտօնն ալ ու իր մեծ եղբօր Պետրոսի, որ Բիէր Թրուայի գործին ընկերակից էր, քով պահ մը մնալէ վերջ՝ Կարապետ Պարոնեանի և Յովհ. Թողլեանի հետ կը կազմէ Հրատարակչական Ընկերութիւն մը: Սյոգ միջոցին թարգմանական գրականութեան շրջան մը կը բացուէր՝ որուն ազդանշանը կու տար Իզմիր՝ Տէտէեան տպարանը. ատիկա նոր լոյսի դարձող մանուկ հասարակութեան մը անյազ պէտքին արձագանգն էր: Մկրտիչ Փորթուգալեան կը սկսի թարգմանել Ա. Տիւմայի Տիկին Մոնստրոն, զոր պրակ առ պրակ կը հրատարակեն: Փորթուգալեան նոյն ատեն գործակից է «Գործասեր» հրատարակչական խումբին, ու կ'անդամակցի նորակազմ «Լուսաւորչեան» ընկերութեան, որ ինչպէս ինք կ'ըսէ «Բարենորոգչական նպատակ ունէր եւ հետաքրքրական պատմութիւն մը, թէեւ անյաջող եղաւ վախճանը»:

Մինչև հոս բնականաբար Մ. Փորթուգալեանի դերը փոքր է իբր ազգային կեանքի մէջ գործող: 1963էն 1869 տեւող տարիները նախապատրաստութեան տարիներ կ'ըլլան իրեն համար: Արդէն Ազգային Սահմանադրութիւնը յաղթանակած է. ազգասիրական գրականութիւն մը Մխիթարեան աշակերտներու՝ Ս. Հէքիմեանի, Մ. Պէշիքթաշլեանի և ուրիշներու միջոցաւ հրատարակ կու գար. հայ պատմութենէն ու դիւցազնական օրերէն քաղուած թատերգութիւններ բեմ կը բարձրանան, Հայաստան անունը երկարատեւ մոռացումէ մը յետոյ խանդավառ ու գերազրգիւ հասարակութեան մը ծափերով կ'ողջունուի. զգացական հայրենասիրութիւնն էր որ հողիները կը խռովէր: Այս զգացումի, խօսքերու ուռացիկ շրջանէն պիտի ծնէր գործի շրջանը, ուրուն նպատակակէտը Հայրենիքը պիտի ըլլար:

Մկրտիչ Փորթուգալեան խանդավառ հողի՝ այլ միշտ գործնական ու դատող միտք՝ բնական էր որ ուզէր Հայրենի հողը ճանչնալ ու գործել անոր մէջ:

1869ին առիթը ներկայացաւ:

Պոլսեբնակ Եւզոկիացի երկու հարուստ Հայեր՝ Սուքիասեան Յովհան և Գէորգ Սէֆէրեան՝ որոնք Պոլիս գրասենեակ ունէին, կ'որոշեն Եւզոկիոյ ազգային վարժարանին համար իրենց ծախքով ուսուցիչ մը դրկել:

Մ. Փորթուգալեան, լրագրին մէջ կարդալով ծանուցումը, կը ներկայանայ Գէորգ Սէֆէրեանին. թէև ներկայացող թեկնածուներու կրթութեան անբարձրը՝ սակայն նախապատուութիւնը իրեն կը տրուի:

Ճանապարհածախս, վարժարանին մէջ բնակութեան սենեակ, հինգ ոսկի ամսաթոշակ. ասոնք կ'ըլլան փոխադարձ պայմանաւորման հիմերը: 1869ի Յուլիսին Մ. Փորթուգալեան իր պաշտօնատեղին կը մեկնի: Այդ միջոցին քսանըմէկ տարեկան էր:

Եւդոկիայի դպրոցը «Ոսկեան ձեւարան» պերճ տիտղոսը կը կրէր, սակայն իսկապէս տիրացուական դպրատուն մըն էր: Նախորդ ուսուցիչները, իրենց ամսականին ու ապրուստին կապուած մարդիկ, աղաները շողոմելով՝ անոնց քմահաճոյքներուն կապեր էին իրենց գործը:

Այդ թուականին՝ դաւառներէն շատեր տակաւին Սահմանադրութեամբ չէին կառավարուէր. ազգային կենսարար դրութիւնը՝ աղաներու և կղերականութեան մերժումին ու ատելութեանը հանդիպած էր: Ազգ. կեդրոնական իշխանութիւնը գործադրել տուող ոյժ չունէր. երիտասարդութեան կը մնար միայն նոր կարգերը հաստատել ու ժեղ պայքարով մը:

Իրերու դրութիւնը նոյնն էր նաև Եւդոկիոյ մէջ: Այի մը մարդիկ անպատասխանատու և սանձարձակ կը վարէին Եկեղեցին ու Առաջնորդարանը, դպրոցները, վանքերն ու ազգային կալուածները: Համարառու և համարատու էին միանգամայն: Ժողովուրդը անտարբեր էր կամ անհամարձակ: Բնականաբար Մ. Փորթուգալեան չպիտի հանդուրժէր այդ կացութեան:

Պայքարը կը սկսի. անիկա քայքայիչ և շինարար պիտի ըլլար միանգամայն: Ուսուցիչը դպրոցը բարեկարգելէ ու անոր օրինաւոր հոգարարձութիւն մը երաշխաւորելէ վերջ, ձեռք կը զարնէր հասարակութեան զարգացման գործին:

1869ին Պոլսոյ մէջ «Անձնուհր» անուն ընկերութիւն մը հիմնուած էր: «Անձնուհր»ին նպատակն էր գաւառացի չափահաս պանդուխտ ազգայիններուն կիրակի օրերը Հայերէն, Ազգ. պատմութիւն և այլ նախագիտելիք ուսուցանել: Այդ կիրակնօրեայ դպրոցը Սերաստացի կարող աշակերտներ հասցուցած էր, որոնք հայրենիք վերադառնալով Սերաստիան «Անձնուհր»ին Փոքր Հայքի կեդրոնավայրը դարձուցած էին: Սերաստացիք Եւդոկիոյ մէջ ալ կ'ուզէին ճիւղ մը երկարել, սակայն նախաձեռնող չիկար:

Երբ «Մասիս» Փորթուգալեանի Եւդոկիա մեկնիլը համակրական տաղերով կ'ողջունէր, Սերաստացիք իրեն կը դիմեն «Անձնուհր»ին համար: Փորթուգալեան քանի մը հոգիով կը յաջողի կազմակերպել ընկերութիւնը: Եւդոկիոյ մտաւորական կեանքին սկիզբը դրուած էր: Ժողովրդական դասախօսութեանց հետ կը սկսին կիրակնօրեայ բանախօսութիւններն ու ազգային զանազան խնդիրներու շուրջ վիճաբանութիւնները, որոնք կ'ոգեւորեն երիտասարդութիւնն ու հասարակ դասերը: Աղաներու հեղինակութիւնը կը զգայ վտանգը. միջոցներ ձեռք կ'առնեն: «Անձնուհր»ը քայքայելու համար ամէն զէնք գործածել կը սկսին: Ժողովուրդը քաջալերուած դեռատի երիտասարդի մը անվախ գործունէութենէն՝ հանրագրով Պոլիս կը դիմէ իր իրաւունքներուն պաշտպանութեանը համար:

1869ին՝ Ազգը Վարագէն Պոլիս կանչած էր Հայոց Հայրիկը, զայն պատրիարքական գահ բարձրացնելու. Խրիմեան օրհնութեան և քաջալերական կոնդակ մը կը դրկէ Եւդոկիայի «Անձնուհր»ին, յանձնարարելով տեղւոյն Առաջնորդ Յակոբ վարդապետ Ճգնաւորեանին երթալ և անձամբ քաջալերել նոյն ընկերութեան անդամները:

Ազգային իշխանութեան ցոյց տուած այս հողածութիւնը հասարակութեան մէջ մեծ շարժում առաջ պիտի բերէր ի նպաստ «Անձնուհր»ին, համակիրներն ու աշակերտները պիտի շատնային: Հիմա, ալ սահմանադրական կարգերու հաստատման պահանջը ծայր կու տար:

Նոյն ատեն Փորթուգալեանի մեծ եղբայրը Պոլսոյ մէջ կը մեռնէր. ազանները՝ որոնք նեղուիլ կը սկսէին այս եռանդուն հիւրին ներկայութենէն, եղբոր մը մահուան ծանր սուգը պատրուակ բռնելով, հասկցուցին Փորթուգալեանի թէ, եթէ այդ առթիւ մեկնիլ ուզէր Եւդոկիայէն, պիտի թոյլատրէին, նոյն իսկ տարւոյն մնացած ամսաթոշակներն ալ վճարելով: Ճամբելու ճարտար ու բարի ձև մը:

Փորթուգալեան կը մերժէ՝ այն ատեն մատնութիւնը վրայ կը հասնի: Քաղաքին գլխաւորներէն մին՝ Սուքիասեան էֆէնտի, ուսուցիչը Թուրք կառավարութեան կը ներկայացնէ իբր խռովայոյզ անձ մը: Սերաստիոյ կուսակալ Հաճի Իզդէթ փաշան, լտգէտ՝ սակայն անկաշառ մարդ մը, որ Եւդոկիա էր այն ատեն, ներկայացած խնդիրը քննելով կ'եզրակացնէ:

«Այս վէճին պատճառը ուրիշ բան չէ, մէկ կողմը կը պնդէ թէ մենք հարուստ ենք, մեր ըսածը պիտի ըլլայ. միւս կողմն ալ կ'ըսէ թէ մենք ուսեալ ենք, մեր խօսքը պիտի քալէ. դրամին եւ խելքին տիրապետութեան կռիւն է այս. երկուքդ ալ իրարու պէտք ունիք, հաշտուեցէք եւ միասին աշխատեցէք եւայլն.»

Խնդիրը առժամեայ կերպով կը դադրի: Առաջին տարին կը լրանայ. հակառակ ժողովուրդին և «Անձնուհր»ին թախանձանքներուն Փորթուգալեան Պոլիս կը մեկնի: Սակայն տեղացիք ուրիշին յանձնել չեն ուզեր դպրոցը. Պոլիս գտնուող Եւդոկիացիներ ու ազդեցիկ գործիչներ կը համոզեն Փորթուգալեանը կրկին Եւդոկիա մեկնելու: Փորթուգալեան կը վերադառնայ նախկին գործին: Այս անգամ սահմանադրական ժողովներու կազմութեան կռիւը կը սկսի. երեսփոխաններու և թաղականի ընտրութեանց ատեն պայքարը սաստիկ կը դառնայ: Ազաները կառավարութեան առջև իբր յեղափոխական կը ներկայացնեն Փորթուգալեանը. Փորթուգալեան կը ձերբակալուի:

Թողատի ժողովուրդը յուզուած ցոյց կը կատարէ, նոյն իսկ դպրոցի բարձրագոյն կարգի աշակերտները կ'երթան կառավարիչէն պահանջել իրենց ուսուցիչը, որ իբր հիւր վար դրուած էր պաշտօնատան մէջ: Նոյն առթիւ՝ Մ. Փորթուգալեան իր կենսագրական տեղեկութեանց մէջ կ'ըսէ:

«Այս առիթով քաղցր պարտք մը կը համարիմ յիշատակել հոս՝ Եւդոկիայի մէջ աշակերտներնիս ինձ համար ցոյց տուած երախտագիտութեան եւ անձնուիրութեան ոգին որ, չնայելով իրենց հասակին, վտեմութեան աստիճանին կը բարձրանար եւ հիացում կը պատճառէր. Պատանեկութիւնը, դիւրազգած սրտի տէր, իտէալ մը կը փնտռէ՝ զայն սիրելու ու անով ոգեւորուելու համար, եւ եթէ այդ ոգեւորիչ ու ձգողական ոյժը կարենայ մէկը պատանիներին ներշնչել, ոչ միայն խօսքով այլ եւ իր գործերով, անոնք անձնագոհ, անվախ օժանդակներ կը դառնան եւն.»

Առժամանակեայ արձակումէ մը օգտուելով՝ Փորթուգալեան կ'անցնի Սերաստիա, արդարութիւն գտնելու յոյսով. կուսակալութեան ներկայացուցած իր արդար դատը բարձի թողի կ'ընեն. գրեթէ վտարանդի՝ Փորթուգալեան հոն ութը ամիս դեգերելէ վերջ, կը դառնայ Պոլիս:

Խրիմեանի պատրիարքութիւնը հազիւ երեք տարի տեւեց. նոյն միջոցին առաջին անգամ ըլլալով Հայաստանի հարստահարութեանց խընդիրը թաքրիրով մը կառավարութեան ուշադրութեան կը ներկայացուէր. Հայկական Հարցը մանկական քայլ մը առած կ'ըլլար այդպէսով: Բայց՝ Խրիմեան, Սենեքերիմ Մանուկեանի վարչութեան չկրնալով գործակցիլ, ու իրր հակասահմանադրական ամբաստանուելով՝ ժողովրդական ցոյցով մը տապալեցաւ: Ան իր նշանաւոր հրատարականը գրեց 1873 Դեկտ.ին: 1874 Ապրիլ 24ին Ներսէս Վարժապետեան պատրիարք կ'ընտրուէր Ազգային ժողովէն:

Նոյն տարին Մ. Փորթուգալեան «Ասիա» թերթին խմբագիրն է: «Ասիա»ն նախ շաբաթը երկու անգամ՝ յետոյ ամենօրեայ կը հրատարակուէր:

«Ասիա»ն արմատական ուղղութեան մը կը հետեւէր: Ղալաթիոյ օճախը նոյն տարին յաջողցուց կրօնական ժողով մը՝ որուն մէջ անարժան եկեղեցականներ պաշտօն ստացած էին: «Ասիա»ն պախարակեց եղելութիւնը և յայտարարեց որ, եթէ «ժողովը չի հանի բարեկարգութիւն մտցնել, խմբագրութիւնը պիտի ստիպուի ընդհ. Հայ ժողովուրդին հրաւէր կարդալ որ ինք ելլէ իր եկեղեցիին բարեկարգութեան ձեռնարկէ:»

Կրօնական ժողովը ստիպեց Ներսէս Պատրիարքը որ խափանել տայ թերթը, Բ. Դրան թագրիր մը գրուեցաւ «Ասիա»ի և Պարոնեանի «Թաստուն»ին դէմ, որ պաշտպանած էր իր ընկերոջ կարծիքը:

Երկուքն ալ խափանուեցան:

Փորթուգալեան զգայացունց յաւելուածով մը գործին վախճանը գուժեց: Երեւի՝ յետոյ Ներսէս Պատրիարք զղջալով եղածին վրայ, հասկըցընել տուած էր Փորթուգալեանին, որ եթէ գայ Կրօնական ժողովէն ներողութիւն խնդրել, կրնայ թերթը վերհրատարակուիլ. Խմբագիրը պատասխանեց. «Լաւագոյն կը համարիմ գրիչս կտարել մէկդի նետել, քան թէ շարունակել գրել՝ շողոքորթութեան մէջ զայն թաթխելով եւն»:»

Խմբագրութենէ դադրած՝ Մ. Փորթուգալեան, Հայրիկի, որ Գուգկունձուքի քարոզիչն էր, առաջարկութեամբ տեղւոյն դպրոցին մէջ դասեր կը ստանձնէր, միևնոյն ատեն Բուժէլի Հիսարի և Բերայի Փանոսեան վարժարաններն ալ կը դասախօսէր, աշխատակցելով Կ. Փանոսեանի «Մանգուսե»ին՝ Ազգային Խոհեր վերնագրին տակ շարք մը յօդուածներով: Այդ յօդուածներուն մէջ՝ յաջորդաբար կը քննուէին ազգային լեզուն, ազգային եկեղեցին ու ազգային վարչութիւնը: Կը պահանջէր աշխարհիկ լեզուն կազմակերպել, անոր քերականութիւնը յօրինելով, ու նաև Երեսփոխանական ժողովը հասարակաց դարձնել բոլոր յարանուանութեանց, բողոքական թէ կաթոլիկ, անոնց ձգելով իրենց կրօնական գործերուն յանձանձումը. եկեղեցական բարեկարգութիւնն ալ անհրաժեշտ կը նկատէր: Իր այդ գաղափարներուն ի վարձ արձակ-

ուեցաւ Ռուսէլի Հիսարի վարժարանէն դրամական անձկութեան պատ-
րուակով, բայց Փանոսեանի հաստատած Ազապեան վարժարանը դասեր
կ'ուեննար անկէ ելլելէ վերջ:

«Ասիա»ի խափանումէն յետոյ՝ Նորայր և Հրահեւ ծածկանունով քա-
նի մը թղթակցութիւն դրկած էր Կովկասի «Մեղու»ին:

1875ին Պոլիս հասաւ Թիֆլիսցի դերասան Միհրդատ Ամերիկեանց:
Ամերիկեանց ձեռնարկեց շարաթաթերթ մը հիմնել «Շար Կարծրեաց» ա-
նունով՝ իր յոյսը մանաւանդ Կովկասահայոց քաջալերութեան վրայ դը-
նելով: Գործը պահ մը տեւելէ վերջ՝ ձախողեցաւ, բայց այդ ձախող
գործը պատճառ դարձաւ որ Մ. Փորթուգալեան ծանօթանայ «Մշակ»ին
ու անոր խմբագրին: Փորթուգալեան «Շար Կարծրեաց»ի աշխատակցած էր՝
անոր մէջ պանդխտութեան վտանգներուն, երկրին մէջ կատարուելիք
աշխատանքներուն վրայ խօսելով. ան կը կրկնէր միշտ. «Իոխանակ
Հայաստանցին Կ. Պոլիս գալու, Կ. Պոլսեցին Հայաստան երթալով այդ
երկիրը զարգացնելու է:»

Արծրունին հետաքրքրուած էր այս անծանօթով:

*
**

Ազգային Սահմանադրութիւնը խորապէս ազդեց հայ կեանքին վը-
րայ: Գիտակցութեան, կազմակերպութեան և լուսաւորութեան սկիզբ
մը եղաւ անիկա մեզի համար: Պոլիս, Հայաստան և Փոքր Ասիոյ գա-
ւառները միօրինակ մեքենայէ մը վարուած, իրարու աւելի մօտ զգացին
ինքզինքնին:

Նոր կազմակերպութեան բեական հետեւանքներէն մին ալ ազգային
կնքնաճանաչումը կ'ըլլար՝ որ աւելի կը հրահրուէր հայրենասէր մտաւո-
րականներու սրտագին կոչերէն՝ որոնք Պոլսէն կը մեկնէին դէպի Հա-
յութեան խորերը:

Յիսունական թուականներու Պոլսոյ երիտասարդ սերունդը սահմա-
նադրական սկզբունքներուն ախոյեանն էր եղած ու հայրենասիրական
առաջին երգերը հնչեցուցած: 70-80ի սերունդը աւելի տռաջ պիտի եր-
թար. գործնականօրէն պիտի աշխատէր Հայաստանին և Հայութեան
համար:

Վաթսունական թուականներուն արդէն իսկ կազմուած էին «Բարե-
գործականն» ու «Անձնուհր»ը: Բարեգործական ընկերութեան նպատակն էր
Կիլիկիան զարգացնել տնտեսապէս: Իր անդամները Լուսաւորչական և
Կաթոլիկ Հայեր էին. այսպէսով կրօնական մութ պատուարը պիտի
վերնար, ազգութեան լուսաւոր ըմբռնումովը այդ: Նոյն իսկ բժիշկ
Շիշմանեան (Մերենց) կարեւոր գումարով մը Կիլիկիա կը մեկնէր, հոն
երկրագործական տիպար ագարակ մը և վարժարան ստեղծելու: Հա-
սունը՝ մասնութեամբ կործանեց այս ընկերութիւնը:

«Անձնուհր»ին գործին արդէն իսկ ծանօթացանք նախընթաց էջերու
մէջ: Քրիստոստուր Ղազարոսեան՝ երեսուն տարի անընդհատ Ղալաթիա
գնաց, պանդուխտ և չափահաս Հայերուն կիրակնօրեայ ուսում տալու,

ուրիշներ իրեն հետեւեցան. «Անձնուէր»ը գաւառն ալ ձիւղեր արձակեց:

70-80ի սերունդին գործը եղաւ Հայաստանի եւ Կիլիկիոյ լուսաւորութեան գործը իրեն ուղղակի նպատակ ընտրել: Հետզհետէ հիմնուեցան Արարատեանը, Դպրոցասիրաց-Արեւելեանը, Կիլիկեանը երիտասարդներու միջոցաւ, Ազգանուէր Հայունեացը դեռատի քերթողուհիի մը ձեռքով (1879), Դպրոցասէր Տիկնանցը նորատի եւ խիզախ օրիորդներու աշխատութեամբ: Այսպէսով Հայ կինը իրեն գործունէութեան մաքուր դաշտ մը կ'ընտրէր:

1876 Ապրիլ 15ին Արփիար Արփիարեան իր մէկ քանի դպրոցակիցներուն հետ Արարատեան ընկերութիւնը հիմնելու ձեռնարկեց: Այս փոքրիկ միութեան գործը, նախապէս պիտի ըլլար անոգ քանի մը տղայ հաւաքելով տան մը մէջ՝ դաստիարակել, յետոյ գործունէութիւնը ընդարձակել Հայրենիքի դանազան կողմերը, Պոլսէն հոն ուսուցիչներ ղրկելով: Նմանօրինակ միութեան մը համար խանդավառ եւ ուժեղ անդամներ կարեւոր էին: Փորթուգալեանը այդ ուժերէն մին պիտի ըլլար: Ահա՛ թէ Ա. Արփիարեան ինչպէս կը պատմէ Փորթուգալեանի հետ ունեցած իր առաջին հանդիպումը:

«Քանի մը տարիէ ի վեր Կ. Պոլիս շատ կը խօսուէր հրապարակագրի մը վրայ, որ յեղափոխականի համբաւ ստացած էր. Եւզոկիա ուսուցիչ եղած ու շղթայակապ բանտարկուած էր. Պոլիս «Ասիա»ն հրատարակած էր, զոր Ներսէս Պատրիարք, թունդ պահպանողական եւ թրքամոլ այն ատեն, ջնջել տուած էր. Հիմայ «Ասիա»ի խմբագիրը Փանոսեան վարժարանը սպաստանած էր իրր դասատու. Հետաքրքիր էի տեսնել այդ երիտասարդը, Փանոսեան վարժարանի իր մէկ պաշտօնակցին փափաքս յայտնեցի. Խոստացաւ. գիշեր մը զինքը Սրթագեղ հրաւիրել: Որոշեալ օրը գիշերը ելայ զացի. ձաշը լմնալէն վերջը եկան սենեակը ուր կը սպասէի. Ծամօթներու հետ անծամօթներ ալ կային:

—Փորթուգալեանը չեկա՞ւ հարցուցի, տանտէր երիտասարդին:

—Ի՞նչպէս չէ, հոս է, ահա՛:

Իսմուած տեղ. մնացի. կրակոտ, յաղթամոլ, գոռացող ոչ որ կար, նիհար, կարճահասակ, ուռած կոպիճներով, խարտեաշ, գառնուկի նման մէկը դէմս էր իբր Փորթուգալեան. Թուրք կառավարութիւնը, Ներսէս Պատրիարքը ահաբեկողը մ'ս էր:

Սկսանք խօսակցիլ ասդիէն անդիէն, բայց որչափ խօսակցութիւնը կը յառաջանար՝ այնքան աւելի կը համակրէի Փորթուգալեանին: Մտածելու եղանակը ուրիշներէն տարբեր էր:

Ամուր, պինդ մէկը կը տեսնէի, յստակ համագումներու, որոշ գաղափարներու տէր. Երկաթի պէս մէկը երեւցաւ ինձի. զգացի թէ այդպիսի նկարագրի տէր անձերով է որ կարելի պիտի ըլլար զօրեղ գործեր ընել.» (Նոր կեանք)

Մ. Փորթուգալեանի միջոցաւ Մ. Չերազն ալ կու գայ միանալ Արարատեանին: Փոքր միջեցներով փոքր գործ մը նախ, սակայն այսպէս չէր կրնար մնալ: «Ասիա»ի խմբագրութեան օրերուն իսկ՝ Թիֆլիս բնակող մէկ քանի թրքահայեր, գրած էին Փորթուգալեանին թէ Գրիգոր Արծրունին կը հաւնի իր գրածներուն եւ թէ լաւ կ'ընէր եթէ անգամ մը Կովկաս անցնէր «Մշակ»ի խմբագիրը տեսնելու: Փորթուգալեան 1876 յունիսին կ'անցնի Կովկաս. այս այցելութիւնը նշանաւոր հետեւութիւն մը պիտի ունենար. անմիջական գործադրութեան պիտի դնէր Արարատեանի ծրագիրը՝ զայն բարեփոխութեան մը ենթարկելով:

Մ. Փորթուգալեան Թիֆլիսի մէջ կ'այցելէ «Մեղու»ի, որուն երբեմն թղթակցած էր, ու երկար տեսակցութիւններ կ'ունենայ «Մշակ»ի խմբագրին Գրիգոր Արծրունիի հետ՝ Արարատեանի ապագայ գործունէութեան մասին: Այսպէսով նաև հիմը կը դրուէր Թրքահայոց և Ռուսահայոց գործակցութեան: Արծրունին՝ Արարատեանին Ռուսահայոց օժանդակութիւնը կ'ապահովէր «Մշակ»ի միջոցաւ, եթէ նոյն ընկերութիւնը իր գործունէութեան անմիջական ղաշտը Հայաստանն ընտրէր, այսինքն հոն դպրոցներ ու վարժապետանոց բանար, սերունդը տեղւոյն վրայ կրթելու համար:

Թիֆլիս քանի մը շաբաթ մնալէ վերջ՝ Մ. Փորթուգալեան Պոլիս վերադարձաւ, հոն Մ. Չերազին յայտնեց Արծրունիի հետ ունեցած տեսակցութեան արդիւնքը. ու քանի որ ինք Ընդհ. Ժողովոյ Ատենապետը ըլլալով չէր կրնար պաշտպանել իր կարծիքը, Մինաս Չերազի միջոցաւ զայն ներկայացուց Ընդհանուր Ժողովին: Ընդհանուր Ժողովը ընդունեց առաջարկը, Վան և իր շրջակայքը գործունէութեան կեդրոն նշանակուեցան: Սակայն ո՞վ յանձն պիտի առնէր Վան երթալ գործին ուսումնասիրութեան համար: Մ. Փորթուգալեան յօժարակամ ստանձնեց այդ դժնդակ առաքելութիւնը:

1876ին՝ Աստուածածնի օրը՝ սրտազին և յուզիչ ողջագուրումներու մէջ մեկնեցաւ դէպի գաւառ: Իբր ճամբու ծախս՝ ութը ոսկի միայն ստացած էր Ընկերութենէն:

Փոքր Հայքի վրայով՝ Սամսոնէն, Եւզոկիայէն, Սերաստիայէն, Խարբերդէն, Տիգրանակերտէն անցնելով գիշերանց Վան կը հասնի՝ ուր պաշտօնական մարմինները, իրեն ցուրտ ընդունելութիւն մը վերապահած էին:

«Այդ համբորդութիւնս, կ'ըսէ Կ. Պոլսէն մինչեւ Վան չորսուկէս ամիս տեւեց, որովհետեւ բացի ուղեգիծին երկարութենէն եւ այլեւայլ պատճառներէ, այս ալ կար որ Պուլկարիայի ապստամբութեան եւ Սերպիայի կռիւի միջոցին էր եւ Ռուսիայի կողմէն ալ պատերազմի հրատարակութիւնը մօտալուտ կ'երեւէր, արդէն Կ. Պոլիս գտնուած միջոցիս խուճը խուճը գաւառացի մահմետականներ սօփդաների առաջնորդութեամբ եւ իրենց առջեւէն սանճազը պարզած, մղկիթների մօտիկ հրապարակներին մէջ կը հաւաքուէին եւ անկէ ալ պոռալով կ'անցնէին փողոցներէն եւ իբրեւ կամաւոր զօրք կ'երթային Ռումէլի, կեաւուրներին դէմ կռուելու»: (Արմենիա, թիւ 27, Կ. Պոլիս և Հայաստան):

Մ. Փորթուգալեան անմիջապէս երկրին պայմաններուն ուսումնասիրութեան կը ձեռնարկէր ու բաղմակողմանի տեղեկագիրներով Վասպուրականի գիւղերուն բարոյական, մտաւորական, տնտեսական, առողջական կացութիւնը կը ծանօթացնէր կեդրոնին: Արարատեանի այս յանդուգն քայլը համակիրներ կը շահէր Հայութեան մէջ. նուէրներ կ'ըլլային, դիմումով մը՝ Մկրտիչ Սանասարեան տարեկան հազար ֆրանք կը կապէր Ընկերութեան, Բարեգործականի պատրաստ դրամագլուխի

տոկոսէն 40 ոսկի կը յատկացուէր. արդէն իսկ գիւղերու մէջ քանի մը դպրոցներ բացուած էին: Ընկերութեան առաջին դպրոցը Աշխար գիւղի մէջ էր բացուած, Չաքար Համբարձումեանի ձեռքով:

1877ին Դպրոցասիրաց Արեւելեանն ալ Տարօնի շրջանը իրեն գործունէութեան ասպարէզ կ'ընտրէր՝ հոն դպրոցներ հաստատելով և ուսուցիչներ զրկելով:

Թրքո-Ռուս պատերազմը պահ մը Վանի մէջ կ'ընդհատէ Փորթուգալեանի գործունէութիւնը. գործիչը Թիֆլիս կ'անցնի: Արծրունի «Արարատեան»ին ի նպաստ նուիրահաւաքութեան մը համար կը բանայ «Մշակ»ի սիւնակները, իսկ անմիջապէս, Վանի 1876ի հրդեհին առթիւ հաւաքուած գումարէն աւելցած հազար ռուբլին կը զրկէ Պոլիս Արարատեանին: Մ. Փորթուգալեան Թիֆլիսէն կը զրկէ նաև Ն. Տէր-Նիկողոսեանցի «Մայրենի Լեզու»ին Ա. Տարին՝ որ աւելի վերջ միւս տարիներուն հետ, Պոլիս տպագրուելով, Ընկերութեան տարեկան 400 ոսկի գումար շահ կը բերէր:

Մ. Փորթուգալեան՝ որ միշտ յարաբերութեան մէջ է Պոլսոյ հետ, Ա. Արփիարեանը «Մշակ»ին կը ծանօթացնէ. այդպէսով Արփիարեան կանոնաւորաբար սկսաւ աշխատակցիլ «Մշակ»ին Հայկակ ստորագրութեամբ:

1878ին՝ պատերազմը վերջացած՝ Մ. Փորթուգալեան Պոլիս կուգար: Հայկական Հարցը՝ տենդագին, մեծապէս յուսալից շրջանէ մը վերջ՝ ի Պերլին մահացու հարուած մը կը ստանար: Դիւանագիտութենէն պարտուած Հայերը բնագոգորէն կը հասկնային թէ չիկայ անվրդով կեանք, ապահովութիւն, ազատութիւն՝ առանց կենսանորոգ ինքնաշխատութեան, առանց ինքնամիտի, յամառ ճիգով ձեռք բերուած ներքին վերանորոգութեան: Գանի մը տարի առաջ հաստատուած ընկերութեանց վրայ հիմայ կրկին պարտք մը կ'իյնար Երկրին համար աշխատելու, ինքն իր մէջ վերակազմելու համար զայն:

1880ին Գրիգոր Արծրունի նրեք կրթական ընկերութիւնները հրաւիրեց միանալ, խոստանալով 80,000 ռուպլի զրկել իրենց: Նոյն տարուոյն յունիս 1ին միացան Արարատեան, Դպրոցասիրաց-Արեւելեան և Կիշիկեան ընկերութիւնները, կազմելով «Միացեալ Ընկերութիւնի Հայոց»ը:

1876ին Մ. Փորթուգալեան մեկնած էր Վան՝ գրէթէ իբր ուսումնասիրութիւն կատարող մը, 1878ին հոն գնաց որոշ ծրագրով: Նոյն աշնան իսկ Վանի մէջ Վարժապետանոցը կը բացուէր, չորս տարուան շրջանով մը. ամէն ցեղէ աշակերտներ պիտի ընդունէին հոն, տարրերու համերաշխութեան համար կ'ընդգրկուէր այդ նպատակը: Վանի թաղային դպրոցներէն ամէն տարի մրցումով պիտի առնուէին յաջողագոյն աշակերտները, Վասպուրականի գիւղերէն ալ նոյն դրութեամբ. Հալաստանի ամէն քաղաքներն ալ իրենց գոնէ մէկ մէկ ներկայացուցիչները պիտի կրնային ունենալ հոն: Փորթուգալեան ամպրոպի պէս պայթեցաւ Վանի մէջ. վարժապետանոցը կազմակերպեց, արտասահմանէն թէ ներսէն հրաւիրուելով կարող ուսուցիչներ, ինչպէս Պէյլերեան Տաճատ,

Թագաւորեան, Փիլիպոսեան, Տ. Ամիրճանեան, Հ. Ճանիկեան. Խ. Խրիմեան՝ որոնք իրեն եռանդուն գործակիցները եղան:

Վարժապետանոցին կեանքը կարճ տևեց. չարաբաստիկ պայմաններ ստիպեցին կեդրոնի Մարմինը որ գոցէ զայն. ոմանք կը պնդեն թէ կառավարութիւնն էր ատոր պատճառը, ուրիշներ տարբեր կառավարութեան մը, խոհեմութեան, կը վերագրեն անոր փակումը: Մ. Փորթուզալեան Պոլիս կանչուեցաւ 1881ին:

Վարժապետանոցը մեծապէս արդիւնաւոր եղած էր: Վան հանդիպող բոլոր օտարականները զարմանքով ու գնահատութեամբ տեսած էին նմանօրինակ հաստատութեան մը գոյութիւնը ասիական հեռաւոր գաւառի մը խորը: Ահա թէ ինչպէս կը նկարագրէ զայն՝ Էրնեսթ Շանթըրը՝ որ Ֆրանսայի կրթական նախարարութենէն մասնաւոր պաշտօնով ղրկուած էր Փոքր Ասիա և Հայաստան 1882ին:

«Տիար՛ եւ Տիկին Կամսարական (Վանի ռուսական հիւպատոսն ու կինը՝ ազգով Հայ) պատրաստակամութիւն յայտնեցին Վանն ու իր շրջակաները մեզ այցելել տալու. ուստի նախ եւ առաջ խնդրեցինք իրենցմէ որ մեզ տանին հայերի վարժապետանոցը, որի վրայ շատ անգամ խօսուիլը լսած էինք: Այդ վարժարանը հիանալի կերպով կազմակերպուած, մեր այցելութեան միջոցին վաթսուներեալի ուսանող աշակերտներ ունէր: Դասարանների մաքրութեան եւ անոնց մէջ տիրող վիճակին ըսելիք չիկար բնաւ եւ այդ բոլոր պատանիները, իրենց հասակի եռանդին հակառակ, լուրջ, կարգապահ եւ մանաւանդ աշխատասէր կ'երեւէին»:

«Հանելի անակնկալ մ'եղաւ մեզ համար որ հոն իրօք ֆրանսական ոճով դպրոցական նիւթեր եւ կահ կարասիք տեսանք, որոնց պիտի նախանձէին նոյն իսկ մեր վարժարաններէն շատեր, ասկէ դեռ քանի մը տարի առաջ: Բայց մեր գոհունակութիւնն ալ աւելի մեծ եղաւ երբ վարժապետների խնդիրքին համեմատ պատմութեան եւ աշխարհագրութեան վրայ ֆրանսերէն լեզուով հարցումներ ըրինք մի քանի աշակերտների եւ շատ լաւ պատասխաններ ստացանք մեր լեզուով, նոյն իսկ ժամանակակից պատմութեան մասին: Բնական գիտութիւններն ալ զանց առնուած չէին եւ հաճոյքով քննեցինք ու տեսանք որ շատ լաւ սորվեր էին կենդանաբանութեան եւ երկրաբանութեան վերաբերեալ այն տեղեկութիւնները որ մեր համանման վարժարանների մէջ կը սորվեցնէին»:

«Այդ վարժարանը, որը Տիար Փորթուզալեան հիմնած էր եւ որ իր եռանդի, իր կորովի ու նաեւ իր խելքի շնորհով պահպանուած էր, լուրջ արդիւնքներ կուտար 1882ին: Դասընթացքը չորս տարի վրայ բաժնուած էր եւ արդէն տասներկու շրջանաւարտներ ելած էին, որոնք իրենց կարգին կ'աշխատէին իրենց լուսաւորութիւնները տարածել քաղաքին մէջ եւ շրջակայ գիւղերը: (Արմենիա Թիւ 27, Կ. Պոլիս եւ Հայաստան:)

1881ին Կ. Պոլսոյ մէջ՝ Մ. Փորթուզալեան Ներսէս Պատրիարքի հետ տեսնուելէ ու իր մասին եղած պարսաւանքները ջրելէ վերջ՝ կրկին վերադարձաւ Վան՝ ուր այս անգամ առանց Միացեալի օգնութեան իր անձնական ջանքերով հիմնեց կեդրոնական վարժարանը՝ որ փակուած վարժապետանոցին շարունակութիւնը պիտի ըլլար: Փորթուզալեան վարժապետանոցի ցրուած աշակերտները կը հաւաքէ ու գործի կը ձեռնարկէ: Այդ ատեն Խրիմեան Հայրիկն ալ Պոլիսէն Վարազ դարձած էր. ջերմ համակրող Մ. Փորթուզալեանի անձին և գործին, ան կոչով մը կը հրաւիրէր Վանի Հայերը օժանդակել նորաբաց կեդրոնականին: Ահա այդ շրջաբերական գիրին պատճէնը:

« Ի գիտութիւն ուսումնասէր ազգայնոց կը յայտարարեմ որ հանգանակութիւն բացուած է յանուն Վանայ Կեդրոնական դպրոցին, որուն հիմնադիր տեսուչն է Փորթուզալեան Մկրտիչ Էֆէնտին. սորա անձնուէր հայրենասիրութեան եւանդը շատերուն յայտնի է: Փորթուզալեան Էֆէնտին բնիկ Պոլսեցի է, բայց իր բուն հայրենասիրութեան ոգին զինքն վարեր է Հայաստան եւ ինքն իրրեւ անխոնջ մշակ կը տքնի, կ'աշխատի մեր հայրենեաց յառաջդիմութեան համար: Ուստի ուսումնասէր ազգայնոց նուիրական պարտքն է որ ձեռն տան, քաջալերեն զինքն իր ձեռնարկութեան մէջ, գիտնալով որ Կեդրոնական դպրոցը մեր ամենակարելոր հաստատութիւն եւ միջոց է Վանայ ազգայնոց յառաջդիմութեան:

Այս ձեռնարկութեամբ պիտի թուեմ եւ պիտի փորձեմ թէ քանի' ուսումնասէր, հայրենասէր եւ յառաջդիմութեան բարեկամ մարդիկ կան: Ուրախ պիտի լինիմ եթէ նոցա թիւը հարիւրակներ կազմեն:

Ի Վան 1885

Աղօթարար
ԽՐԻՄԵԱՆ

Կեդրոնական վարժարանը վարժապետանոցի ծրագրով և ուղղութեամբ շարունակուեցաւ մինչև 1885, երբ Թուրք կառավարութիւնը, որուն եպարքոսը հայատեաց Սայիտ բաշան էր, Մ. Փորթուզալեանի Վան բնակիլը անկարելի դարձուց. նոյն միջոցին Խրիմեան Հայրիկն ալ Պոլիս կը կանչուէր:

Վանի մէջ իրր ուսուցիչ Մ. Փորթուզալեան կրթական առաջին տիպար հաստատութիւնը կը բանար. վարժապետանոցէն և Կեդրոնականէն դուրս պիտի գային մաքուր, անձնուէր և ի հարկին ըմբոստ երիտասարդներ, որոնք ետքը իրենց ուսուցչին գործը պիտի շարունակէին Վանի մէջն ու շրջակայքը:

Յովնաննիս Ագրիպասեան, Մկրտիչ Թերչիւնկեան, Գաբրիէլ Նաքսեան, Փ. Թերչիւնկեան, Գ. Բաղէշեան, Խաննեան, Ասլանեան, Գունսաֆնեան, Ռ. Շասարեան, Պոզիկեան, Միք. Նաքսեան և ուրիշներ իրր առաջին և արժէքաւոր ոյժեր դուրս կ'ելլէին Մ. Փորթուզալեանի հաստատութենէն: Յ. Ագրիպասեան Վանայ յեղափոխական շրջանի առաջին նահատակն կ'ըլլար. իսկ Մ. Թերչիւնկեանի (Արմենականներու պետ) անձը ճանչցողներ կը վկայեն թէ քիչ անդամ յեղափոխականի և աղգասէրի տիպարը կըրնայ այդքան բարձր յատկութիւններ իր վրայ միացնել:

96ի Վանի դէպքերը ցոյց տուին թէ Մ. Փորթուզալեանի դերը ինչ եղած էր Վանի մէջ. Գործիչը առանց յեղափոխութիւն բառը արտասանելու, Վասպուրականի մէջ պատրաստած էր ազատաշունչ երիտասարդներ, որոնք կրթական և քաղաքական գործիչներ դարձան Բաղէշի կողմերը և նոյն իսկ Պարսկաստանի մէջ:

Մ. Փորթուզալեանի դերը ի Վան՝ իր ուսուցչութեանը մէջ չի սահմանափակու իր. յետամնաց գաւառի մը մէջ ուսուցիչը ամէն բան է, կազմակերպող, բանախօս, հաշտարար միանգամայն: «Ասիա»ի խմբագիրը Վանի մէջ հաստատուելով՝ առաջին օրէն իսկ կազմեց ժողովրդական խորաններ՝ ուր ուսման և ազատ խօսքի անձկակարօտ սերունդ մը կը վաղէր լսելու Փորթուզալեանի հրաշունչ բանախօսութիւններն ու ճառերը: Մեծ էր իր խօսքին ազդեցութիւնը:

« Թէ ճանկահայաստանի եւ թէ Ամերիկայի մէջ, ուր տասներեք տարիէ ի վեր

կը բնակիմ կ'ըսէ յօղուածագիր մը, երբեք տեսած չեմ ատենախօս մը, որ բնմէն ժողովուրդին խօսելու արհեստին մէջ գերազանցած ըլլայ Պ. Փորթուգալեանը»:

8 Ապրիլ 1911

Աւետարեւ

Իր ճառերուն ի գործ դրած ազդեցութիւնը անշուշտ աւելի կը զօրանար ժամանակին բերած ներշնչումներէն:

Մ. Փորթուգալեան, երբ երիտասարդութիւնը կը խանդավառէ, չի մոռնար նաև հասարակ և անուս ժողովուրդը: Կիրակնօրեայ դասախօսութիւններ կը հաստատէ տարէց և աշխատաւոր մարդոց համար: Զանոնք ուսման կապելու հոգովը տարուած, կանոնաւոր դասի յաճախողներուն իր անձնական դրամէն քառասունական փարայ կը յատկացնէ՝ զոր կը վճարէ անխափան ամէն կիրակի դասերէն յետոյ: Իրմէն ուսած կիրակնօրեայ ուսանողի մը, հիմայ կքած ծերունի, խոստովանութենէն քաղուած է այս պարագան: Այդ միջոցին նաև Վանէն դուրս ալ կ'ընդարձակէ իր գործունէութիւնը, նոյն իսկ Պարսկաստան ալ ճամբորդելով:

1885ին՝ Փորթուգալեանի Պոլիս բերուելէն տարի մը վերջ կառավարութիւնը գոցել կուտայ նաև Կեդրոնականը: Այդ հեռացման միջոցին դպրոցը կը վարէ իր աշակերտներէն Գ. Ասլանեան՝ հիմա յայտնի բժիշկ Սելանիկի մէջ: Գործիչը զրկուած Հայրենիքի մէջ աշխատելու ազատութենէն ու նաև անկարելի գտնելով Պոլսոյ բռնական մթնոլորտին մէջ գործել, նոյն տարին կ'անցնի Մարսէյլ ուր պիտի հիմնէր «Արւեկիա»ն:

Ահա՛ իչնպէս կը պատմէ «Արւեկիա»ի համետ սկզբնաւորութիւնը. «1885ին Թուրք կառավարութեան ձեռքով երրորդ եւ վերջին անգամ լինելով վտարուեցանք մեր հայրենի երկրէն, ոգեւորիչ յիշատակներով լի եւ սիրելի Վանէն դէպի մեր ծննդավայրը Կ. Պոլիս, այդ ժամանակ լռելեայն անցանք Եւրոպա եւ ձեռնարկեցինք Մարսէյլի մէջ ունենալ հայերէն տպարան եւ հայերէն լեզուով մի ազատ լրագիր, մեր հարըստահարուած հայաստանցի եղբայրների դրութիւնը աշխարհահռչակ դարձնելու, արտասահմանեան Հայերի ուշադրութիւնը անոնց վրայ հրաւիրելով աջակցութիւն խնդրելու, մեր գաղափարներ Հայ ժողովրդին մէջ տարածելու եւ երկար ժամանակեայ աշխատութեամբ եւ ուսումնասիրութեամբ մեր ստացած փորձառութեան արդիւնքներին համեմատ գործելու նպատակով:» («Արմէնիա»ի յուշարար 1885-86 յառաջաբան):

1884ին Ներսէս Պատրիարք մեռած էր. անոր կը յաջորդէր 1885ին Յարութիւն Պատրիարք: Հայկական հարցը նոր շրջանի մը մէջ էր մտած: Սուլթան Համիտի կառավարութիւնը կը սկսէր իր սիսդեմաթիկ հալածանքներուն. հեռու չէին 90ի Էրզրումի դէպքն և արիւնահեղութիւնը՝ ինչպէս Գում-Գարուի ցոյցը (1890 յուլիս 15):

1885էն Մ. Փորթուգալեանի կեանքին երկրորդ շրջանն է որ կը սկսի: Մինչեւ 1885 իր անձը, գործունէութիւնն ու խօսքը տրամադրած էր ի նպաստ Հայկական կեանքին՝ աշխատելով Պոլսոյ և Հայաստանի մէջ:

Անկէ վերջ իրեն համար կը սկսէր նոր շրջան մը, այդ շրջանին, մամուլի միջոցաւ միայն իր գործունէութիւնը ի յայտ պիտի գայ: Քսանրինը տարիներու այդ շարքը թէ հայ ազգին և թէ իրեն համար ամէն տեսակէտով տխուր մարտիրոսագրութեան մը ժամանակամիջոցն է:

Մ. Փորթուգալեան Մարսէյլ անցնելէ վերջ, իր ընտանիքն այ (Եւրոպիոյ մէջ ամուսնացած էր) Վանէն հոն կը փոխադրէ ու կը հաստատուի Vacon փողոց թիւ 50, ապա հետզհետէ Allées le Meilhan թիւ 44, Glandevès և Beaumont փողոցները, ի վերջոյ Place Alexandre Labadié թիւ 17, խաղաղ և մենաւոր անկիւն մը, ուր կ'ապրի վաստակաւոր Գործիչը:

«Արմենիա»ի համարատու պաշտօնեայ Ֆէլիքս Անֆանթէնի և իր կողմէ ստորագրուած յայտագրի մը հրատարակութենէն վերջ՝ «Արմենիա»ի առաջին թիւը լոյս կը տեսնէր 1885 յուլիս 29/11 Օգոստոսին:

Արմենիան 1885էն մինչեւ 1900 իրր եւօրեայ թերթ երեւցաւ, այդ թուականէն կը սկսի շաբաթը անգամ մը հրատարակուիլ: Կ'ըմբռնուին նիւթական և բարոյական այն պայմանները որոնց մէջ կատարեց Մ. Փորթուգալեան այս թերթին հրատարակութիւնը: Բազմանդամ ընտանիքի մը տէր, զուրկ հասոյթի նուազագոյն աղբիւրներէն, կամքի հզօր թափով մը յարատեւեց Արմենիաի խմբագիրն իր գործը: Ան իր թերթին տէրն ու ծառան էր միանգամայն, մերթ գրաշարն է, մերթ տպող, թերթերն իրենց հասցէին ուղարկող, հաւաքող, թարգմանիչ, խմբագիր, յօդուածագիր: Վերջին տարիներու մէջ միայն, իր երկու շնորհալի աղջիկները կ'օգնեն իրենց հօր գործին:

«Արմենիա»ով՝ առաջին ըմբոստութեան ձայնն էր կը բարձրանար բռնութեան դէմ. ան բաւական ժամանակ առաջնորդ հանդիսացաւ տակաւին անկաղմակերպ երիտասարդութեան ու որոշ ատեն մը անոր շուրջ հաւաքուեցան աւելի վերջ կազմուելիք յեղափոխական մէկ երկու մարմիններու առաջնորդները:

Հակառակ «Արմենիա»ի առաջին թիւերուն խոհեմ ու զգուշաւոր լեզուին անոր թուրքիա մուտքն արգելուեցաւ. քիչ վերջ Ռուս կառավարութիւնն այ նոյն միջոցը ձեռք առաւ թերթին դէմ, սակայն արգելքները չի կրցան «Արմենիա»ի տարածումը արգելել. գաղտնի թէ յայտնի՝ «Արմենիա»ն կ'երթար տարածել իր գաղափարները Հայաստան, Կովկաս, Եւրոպա. իր խմբագրին շատ պարզ, համոզկեր, ողջմիտ լեզուն, փորձ, խոհական և հեռատես ոգին մեծապէս կը գնահատուէին:

Ի՞նչ էին ազգային վերածնութեան և Հայկական Դատին մասին «Արմենիա»ի հիմնադրին տեսութիւնները, ի՞նչ եղած էր իր ապագայ աշխատութեանց ծրագիրը: Մեզի համար շահեկան և մեծապէս թելադրիչ է ունենալ քսանրինը տարիներէ ի վեր գործիչին քարոզած սկզբունքներուն մէկ համառօտ պատկերը:

Հայ ազգը իրր ազգ կազմակերպուելու և իր վերածնունդն ունենալու համար պարտաւոր է շատ մը դժուարին և վափուկ աշխատանքներ կատարել: Ան ստիպուած է բազմաթիւ թշնամիներու դէմ կռուիլ: Ներքին կերպով կռուիլ տգէտ կղերականութեան, աղայական կամայականութեանց դէմ, ազգային կեանքը աղարտող երկդիմի տիպարներու, հայ աղքատ գիւղացիութիւնն ու քաղքենին փճացնող վաշխառուներու դէմ: Իսկ միւս կողմէ պայքարիլ քաղաքական դժնդակ պայմաններուն, բռնութեան, կողոպուտի, թալանի, ջարդի սպառնալիքներուն դէմ: Հայ ժողովուրդը պէտք ունի խաղաղութեան, աղատութեան բարիքներուն: Փորձը ցոյց տուած է որ Եւրոպայի բարեկամեցողութիւնը չի կրնար Հայկական Հարցը լուծել, կամ իր շահերուն համաձայն գտած է չի լուծել: Հայը պարտաւոր է ինք իր բաղդին տէր կանգնիլ. ի՞նչ կերպով, ի՞նչ միջոցներով:

Հայաստանին օգնելով:

Բայց ի՞նչպէս կարելի է դարձան տանիլ երկրին ցաւերուն՝ երբ այդ հողը չենք ճանչնար մենք: Մենք հայրենասէրներն ենք օղային հայրենիքի մը, մեզի կը պակսի մեր քաղցր Հայրենիքին ճշմարիտ և բազմակողմանի ճանաչումը: «Արմենիա»ի խմբագիրը միշտ կրկնած է. «Այսօր ամէն Հայ, ըստ տեղին կամ անտեղի կերպով Հայաստան, Հայաստան կը պոռայ, բայց եթէ հարցնես որ ինչպիսի տեղ է այս Հայաստանը, կը տեսնես որ բնաւ մի որոշ գաղափար չունի: Ինչպէս օտարների, նոյնպէս եւ մեզ համար, Հայաստան այնչափ անժանօթ աշխարհ է, որչափ Միջին Աւիրիկէի անապատ եւ անբնակ տեղերը»:

«Արմէնիա»ի յուշարար յօդ. «Մենք մեզ չենք ճանչնար»:

Երբ համեմատարար հանգիստ Պոլիսն ու մօտակայ գաւառները և մանաւանդ Եւրոպայի և ուրիշ վայրերու գաղութները ճանչնան Հայաստանն ու անոր պէտքերը, իրենց առաջին գործը պիտի ըլլայ նիւթապէս, բարոյապէս օգնել անոր: Հայաստան ինքնիրեն չի կրնար վերականգնիլ. անիկա իր հիւանդութիւնները դարձանել անկարող է. հարկ է օտար աշխարհներու մէջ ցրուած հայութիւնը կըրայրական ձեռք երկարէ անոր:

«Արմենիա»ն միշտ այս պէտքը մատնանչեց: Բայց՝ ցրուած ուժերը միացնել կարեւոր է. անհատական նուէրները անօգուտ են առյաւէտ. կազմակերպուած, միացած և ատով հզօր գաղթային միութիւն մը կրնայ մեծագոյն երաշխիքը ըլլալ ազգային դատին յաջողութեան: Մէկ քանի տասնեակ տարիներու ընթացքին՝ Միացեալ Նահանգ բնակող Իրլանտացիներու միութիւնը աւելի շատ բան ըրաւ այդ թշուառ երկրին՝ քան երկու հարիւր տարուան տեղական աշխատանքը:

Այս արժափն միութեան հետ ներքին կազմակերպութիւնը անհրաժեշտ էր: Հայ ժողովուրդը իր տարրական իրաւունքներն պաշտպանելու համար պէտք է ունենար իր կուսակցութիւնները. գաղափարի մը, կամ գաղափարներու շուրջ եղած համախմբութիւնները լաւ կազմակերպուած ու լաւ առաջնորդուած՝ պիտի կրնային վճռական ըրալէին արժեքնել ի-

րենց ուժը: Այս կաղմակերպութիւնները ցեղերու ատելութեան համար պէտք չէր որ ստեղծուէին. ասոնք համերաշխ ըլլալու պարտաւոր էին դրացի ազատասէր տարրերու հետ՝ բարեկարգեալ Թուրքիայի մը ստեղծման համար:


Ներքին այս գործը լիօրէն կատարելու և Հայկական Դատը չի վճարանգելու հզօրագոյն միջոցներէն մէկն ալ Հայրենի հողին կապուած մնալն է: Մ. Փորթուգալեան գաղթելու խնդիրը իր գործունէութեան առաջին օրերէն իսկ իրեն մտահոգութեան նիւթ էր ըրած, այդ մասին առաջին յօդուածները Կ. Փանոսեանի «Մանգրուսեան»ին մէջ հրատարակած էր: Մեր դատը մեր հողին վրայ միայն կրնայ լուծուիլ, իսկ մայրենի հողին յարատեւ դատարկուիլը այդ դասին մահն է: Գաղթելու այս յիմարական, ոչխարային տրամաբանութիւնը պէտք է իր վերջը գտնէ: Մ. Փորթուգալեան զանազան առիթներով գաղթային յարածուն հոսանքին անհատական, ընկերային, ազգային տեսակէտով աղէտալի հետեւանքները կը պարզէ:

Անտարբերութիւնը ոճիր մըն է ազգային այս կացութեան հանդէպ: Հայ ընկերութեան բոլոր դասերը հաւասարապէս պարտին հետաքրքրուիլ ու դարման տանիլ իրաց կացութեան և կիներն ալ նուազ պարտաւոր չեն մասնակցելու ընդհանուր վերակազմութեան ճիգին:

Ահա՛ «Արմենիա»ի պաշտպանած գլխաւոր սկզբունքները իր երկարամեայ ու տաժանելի կեանքին միջոցին:

Քառասնամեայ գործունէութեան այս Յօրելեանը, զոր Ազգը կը կատարէ, երախտագիտութեան պզտիկ վարձք մըն է երախտաւոր Գործիչին, ու մանաւանդ նոր սերունդին համար ներշնչման աղբիւր մը, որովհետեւ արդիւնաւոր ուսուցիչ, անկաշառ և հեռատես խմբագիր, հայրենասէր և եռանդուն գործիչ՝ Մ. Փորթուգալեան մեր վերջին դարու լուսաւոր և մաքուր դէմքերէն մին է:

ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ



Հ Ա Ն Ր Ա Յ Ի Ն Ե Ս Ը

Ք Ա Ռ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ Ի Ն

Համակրանք, հանդէս, ուղերձներ, հեռագրական շնորհաւորանք, նիւթական ապահովութիւն, դարձ դէպի Պոլիս և նոյն իսկ Վասպուրական—անա ծրագիրը այն Հայերի, որոնք գովելի զեղումով հրապարակ բերեցին Փորթուգալեանի յորելեանի խնդիրը, որի արձագանգը, ուրախ եմ ասելու, Ամերիկայից հասաւ մինչև Հայաստանի դաւառները, մեր յորելեանակարօտ Հայրենիքը:

Ո՞վ պիտի շահւի այդ բոլորից:

Ահա հարցը—էական և ուշագրաւ:

Եթէ ես, մի վայրկեան իսկ, լինէի այն համոզման, թէ ներկայ յորելեանը — ինչպէս և բոլոր հանրային տօնախմբումները — մի նպատակ ունի — շահել Փորթուգալեանը, նրա ևսական փառասիրութեան լիացումն տալ, և ի վերջոյ ապահովել նրա կեանքը ոսկով ու արծաթով, կ'ասէի առանց վարանման.

«Զգեցէ՛ք այդ գործը, չարժէ դրանով զբաղել՝ մանաւանդ ներկայ «օրերին, երբ մենք այնքա՛ն ցաւեր ունինք, ցաւեր՝ ծովի նման, այնքա՛ն անելիքներ ունինք, անելիքներ՝ անձայր ու պէսպէս: Արժէ՞ «արդեօք անհատներով զբաղել, երբ հանրային հիմնարկութիւններն «իսկ հոգացողներ չունին»:

Սակայն, ընդհակառակը, այն համոզումն ունիմ, խոր և անվերապահ, որ ներկայ ձեռնարկը՝ մի ճամբայ է, անհասի միջոցով դարձեալ հանրութեան ծառայելու: Հանրային տօնախմբութիւնը, գործիչի վարձատրումով հանդերձ, ամէնից առաջ ծառայում է ոչ թէ յորելեարին, այլ այն ժողովուրդին, որին նա նպաստաւորել է, այն գաղափարին, որի մշակն է եղել նա տարիներ և տարիներ, և այն գործին, որի նա տւել է իր ամբողջ ուժը, կեանքը, բարոյական ու մտաւոր ամբողջ պաշարը:

Դա անհատի Նսի տօնը չէ:

Դա տօնն է հանրային Նսի:

Ի՞նչ է հանրային գործիչը — արժանահասական դէմք, մի Նս, որը մարմնացումն է ոչ թէ անձնական տենչանքի ու ձգտման, այլ խտացումը հանրային Նսի, որի մէջ, ինչպէս կենդրոնակէտի մէջ՝ կուտակուում են հասարակութեան, ժողովրդի, մարդկայնութեան լաւագոյն իղէալները, խորունկ ցաւերն ու իղձերը, և այդպէսով նա դառնում է իր ժամանակի ու շրջանի, իր միջավայրի արտայայտիչը, վշտակիրը՝ հանրային ցա-

ւերի, քարոզիչը՝ հանրային տենչանքի, մարգարէն՝ գալիք օրերի, — եթէ նա, իրօք անկեղծ մշակ է Գաղափարի, ունի տաղանդ ըմբռնելու, մարմնաւորելու և արձագանգ լինելու հանրային պահանջին ու ցաւին:

Ահա թէ ինչու՝ տօնել հանրային գործիչը, կը նշանակէ տօնել հանրային գաղափարը, կը նշանակէ զօրացնել ոչ թէ անհատի Եսը, այլ հանրութեան Եսը և հրապարակային յարգանքով, տօնական հանդիսաւորութեան ու է ձեւով, բարձրացնել նրա արժէքը ժողովրդի և ժամանակակիցների աչքում:

Կայ եւ մի ուրիշ կէտ:

Այդօրինակ տօնախմբութեամբ, սանջւած եւ ուժասպառ ծերունի գործիչներին ցոյց տրւած յարգանքով, հասարակութիւնը ասում է նորերին. — «Քաջալերեցէ՛ք, դո՛ւք էլ, նոր ուժե՛ր, նետեցէ՛ք հանրագործի մէջ, ու յիշեցէ՛ք միշտ, որ ժողովուրդը ձեզ չի մոռանայ, ու տարիներ յետոյ, երբ ձեր կը լինիք, անոյժ և անկար, նա կը մեկնէ իր ձեռքը, կը տայ ձեզ իր խրախոյսը, և կը տաքացնի ձեր մռայլ օրերը իր սրտով, իր վերջու շումով, իր զգացումներով:»

Քաջալերումի լաւագոյն ձեւն է այս:

Ահա ձեզ պատկերը. —

Երիտասարդ էր նա: Յափշտակւող և երազուն, ձգեց իր վայելքները, արհամարհեց բարձրացումը կեանքի սանդուխներով, զինւոր զրեց գաղափարին, ու այդ գաղափարը շալակած՝ երկրէ երկիր, քաղաքից քաղաք, Պոլսից Վան, Վանից Կովկաս, Կովկասից արտասահման, բանտից դպրոց, դպրոցից բեմ, — խրեց զրկանքի ու քաղցի մէջ, լսեց հայհոյանք, խօսքեր յուսարեկ և անքաջալեր, դէմ ընկաւ արգելքների՝ մէկը միւսից անողոք, բայց քալեց, քաջայոյս և համոզւած: Շատեր մնացին կէս ճամբին, բայց նա մնաց կանգուն ու քալեց, միշտ յոյսով, միշտ մեծասիրտ . . . :

Ու ահա հնչեց նոր օրը. շղթաները փշրւեցին, և Ազատագրութեան օրերին՝ երախտապարտ ժողովրդի կրծքից հնչեց առաջին կոչը. «Վարձատրեցէ՛ք մշակները», նրանց, որ սև օրերին՝ ջահը իրենց ձեռքի մէջ, յեղափոխութեան ու վերածնութեան արիւնոտ ձորերի միջով՝ ժողովուրդը դէպի արշալոյս տարան . . . :

Եւ պիտի վարձատրւեն:

Ու երբ Փորթուգալեան, վերայիչւած, յարգւած մի սիրուն հանդէսի մէջ՝ Պոլսում, քաջալերւած հասարակաց ցոյցերով, և ապահովւած՝ կ'երթայ հանգստանալու Վանի մէջ, շղթայազերծ վաթանում երգելու ազատութեան տաղը, փոխանակ իբրև տարագիր՝ օտար երկնքի տակ մաշելու իր ծերութիւնը հայրենի կարօտով, — դա կը լինի յարգանքն ու քաջալերութիւնը և՛ մեր դժբաղդ Երկրին, որ զրկւած իր կենսատու ուժերից, որդոց դարձին է սպասում, որպէս զի գան ու ազատութեան վկաները լինին, նոր միտք և նոր յոյսեր տարածեն . . . :

Եւ ոչ իսկ մէկ վայրկեան, մի րոպէ անգամ չեմ ուզում ընկճել այն սև մտքի առջև, թէ անկեղծ գործիչի քառասնամեայ աշխատանքի տօնը կարող է չկամութիւն կամ թշնամանք յարուցանել որ եւ է խմբի մէջ, որ և է կուսակցութեան շարքերում: Դառն է հաւատալ այդպիսի փոքրագութեան գոյութեանը: Այդ օրինակ պղտիկութեան ընդունակ չպիտի լինի ոչ մի մարմին և ոչ մի ընկերութիւն: Քառասուն տարւան գործունէութիւն՝ արիւնոտ Երկրի մէջ, և Երկրից դուրս՝ քաղցի ու զրկանքի մէջ, մի գործունէութիւն, որ պատկանում է երկու սերունդի, սկսած դեռ այն օրերին, երբ չկար արդէ կուսակցութիւններից և ոչ մէկը — պէտք է լինի յարգւած ու գնահատւած, անկախ կուսակցական կրքերից, որովհետև նոյնիսկ ինքը կուսակցականութիւնը ժխտումն է անհասական Եսի, և բարձրացումը հանրային Եսի, որի մարմնացնողն է ամէն մի ազնիւ գործիչ:

Տարիներ առաջ, կովկասահայութիւնը տօնեց յորելեանները Արծրունու, Բաֆֆիի, Պատկանեանի, և վերջերս Աղայեանի, Շահաղիզի եւ Լէօի: Իրանք համաժողովրդական զգացումները բարձրացնող տօներ էին, որոնց առջև չքացաւ կուսակցական մանր կիրքը: Կան րոպէներ կեանքի մէջ, երբ պէտք է բարձրանալ առօրեայ պղտիկութիւնից: Եւ այսօր, երբ սև ընկճի խորտակումից յետոյ, Թիւրքահայերը կոչուած են տօնելու ազատութեան շրջանի քաղաքական անդրանիկ յորելեանը, նոյն սեղանի շուրջը, նոյն հանդէսի մէջ, և նոյն ուղերձի տակ պէտք է շողկապեն քաղաքական բոլոր հոսանքները և բոլոր տարբեր խաւերը. — սա անձնական փափաք չէ, այլ վերածնող ժողովրդի հրամանը՝ յարգանքի ողջոյն տալու Գաղափարին և Հանրային Եսին:

Իմ անմոռաց ուսուցիչը, Իրիգոր Արծրունի, ի տես հայկական տրխուր սովորութիւն, զգածւել և մեծ ցոյցեր անել դազաղի առջև, ասաց. «Հայերը միայն թաղել գիտեն»: Երեսուն տարի առաջ էր այդ: Իրանից յետոյ մենք ունեցանք համազգային փորձանքի շրջանը, անցանք գերմարդկային աղէտների ու մրրկի միջով ու հասանք քաղաքական վշտածորի եզրը: Այդ պատմական անցքի մէջ՝ հսկայ դեր կատարեցին հանրային ուժերը, իրրև ղեկավար և առաջնորդ, և ժամանակ է, որ մենք կարողանանք ասել.

«Հայերը միայն թաղել չգիտեն. Հայերը գիտեն և տօնել:»

Հայեր, յարգեցէ՛ք մտքի մշակը, որ ձեր մշակն է. յարգեցէ՛ք նրա Եսը, որ ձեր Եսն է. բարձրացրէ՛ք նրա սիրտն ու զգացումները, որ ձեր շահն է:

Է. ԱԿՆՈՒՆԻ



Մ Կ Ր Տ Ի Չ Փ Ո Ր Թ ՈՒ Գ Ա Լ Ե Ա Ն

Ապրող մարդոց Յորելեանները գերագոյն ապացոյցներն են թէ կը ճանչնանք յարգը բարիքին, որ ձեռքերնուս մէջ է տակաւին. յարգը մեծ մտքին, մեծ հոգւոյն՝ զոր բախտն ունինք մեր մէջ ունենալու տակաւին: Աթէնքի մէջ Եպիկուրի աշակերտները իրենց սիրելի վարպետէն պահած կենդանի ու խոր յիշատակը կը տօնէին անոր մահուան տարեդարձներուն, խմբուելով անոր վրայ խօսելու և իր երախտեաց յիշատակը վերանորոգելու համար. և հետզհետէ քաղաքակրթուած մարդկութիւնը աւելի ուշադրութիւն կը դարձնէ իր մէջ ապրած հոյակապ անձնաւորութեանց կեանքի պարագաներուն ընծայած առիթներուն, մատուցանելու համար իր երախտագիտութեան և յարգանաց տուրքը:

Բացարձակ բերկրութիւն կը պատճառէ ինձ՝ իմ սիրական ազգիս ալ դէպի քաղաքակրթութիւն առած իր այս Յորելեաններու հսկայաքայլ գնացքը: Այդ ճամբէն անցան հետզհետէ Բաֆֆիններ, Պէրպլերեաններ, Տօքթ. Մատթէոսեաններ, Սեթեաններ, Գուրգէններ, և այսօր Փորթուգալեան, որուն յորելեանին շուրջ սարքուած հանդէսը կը շահագրգռէ ամբողջ հայ ազգը, որու մտքին լուսաւորութեան, ընկերային բարօրութեան և բարույ ազնուութեան նուիրեց իր կեանքին բոլոր ոյժը, իր բոլոր մտաւոր գանձերը:

Փորթուգալեան, արիութեան համար ծնած մարդ, կարկառուն դէմք մըն է մշտանորոգ գործունէութեան. իր հաւատքի ու կորովի խարազանը շաչեցնելով, իր աշակերտներու մտքին մէջ վառեր է կայծեր, ցաներ է սերմեր, քանդեր կործաներ է կանխակալ ու ծուռ կարծիքներ, մատնանշեր է ընկերային ու բարոյական խութերը, զօրացուցեր է տկարութիւնները: Փորթուգալեան, իսաւարի ու նախապաշարման թշնամի, ուղղութեան և ճշմարտութեան բարեկամ, իրաւունքի ու արդարութեան անձնուէր Չատագով, ազատութեան և անկախութեան անձուկովը բարախած իր սիրան ու հոգին ի սպաս դրած է տարիներ իր ազգին. և դեռ մինչեւ այսօր կը շնչէ, կը խորհի, կը խօսի և կը գրէ անոր օգտին համար:

Սովորական դէմք մը չէ Մկրտիչ Փորթուգալեան որ երեւցաւ հայ յեղափոխական հորիզոնին վրայ. անիկա կրնայ ամէն օր նիւթ ընծայել մարդոց ուսումնասիրութեանց և խորհրդածութեանց, և իր ապրած կեանքէն բխած է կեանք մը մտքի և հոգիի որ կարող է միշտ բարձր խոհեր և զգացումներ ներշնչել մեր նոր սերունդին:

Այս օրերս ձեռքս անցաւ իր քարթ-բոսդալներէն մին, ու իր ալեփառ լուսանկարին ներքեւ տպուած էր հետեւեալ նշանաբանը.—

«Ապագային կը հաւատամ. այդ հաւատքով ցաւերս թեթեւան»: Իր այդ գեղեցիկ՝ վսեմ հաւատքը, որ հաւատքն է բոլոր Հայութեան, և որ իրրեւ գեղահիւս քերթուած մը կը հմայէ մեր սրտերը, և հոգեկան զմայլումի բաժակի մը պէս կ'արբեցնէ զմեզ, Փորթուգալեանի կեանքի պատմութեան խտացումը պիտի ըլլայ. — Հաւատքը ապագային վրայ և այդ հաւատքով իր ցաւերուն թեթեւալը:

Լուսակերտ հաւատք՝ որ գովեստն է իր կեանքի պատմութեան, որովհետեւ անհատական երջանկութեան երազը չէ ան, այլ իտէալն է ազգին փրկութեան:

Կը մաղթենք որ իր ալեզարդ գլուխը պսակուի հաւատքին դափնիներովը, ու անոնց թարմ հովանիին ներքեւ թեթեւցած զգայ բոլոր միւս ցաւերուն ծանրութիւնը, որ զրկման, հալածման և անձկութեան երկար տարիներ ապրեցնել տուաւ նոր հաւատքի տանջահար առաքեալի մը պէս:

ԶԱՐՈՒՀԻ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ



Հ Ա Յ Կ Ն Ո Ջ Կ Ո Ղ Մ Է

Հայ կնոջ դաստիարակութիւնը՝ մեր ազգային վերածնունդի մեծ գործիչներուն մտահոգութիւններէն մէկը եղած է: Բոլոր անոնք որ յստակ եւ հեռատես հայեացքով մը կարող էին նայիլ մեր ազգին ներկային և ապագային վրայ, չէին կրնար անտեսել՝ որ կինը մնալով տգէտ, մեկուսացած և հետեւաբար անհաղորդ հանրային կեանքի, ազգը երբէք իր հաւասարակշռութիւնը չպիտի գտնէր: Ինչպէս այդ մեծ և վեհանձն հոգիները, Փորթուգալեան ևս խորապէս ընտանի մեր ցեղային ոգիին, իր նուիրական առաքելութեան մէջ չէ մոռցած մատնանշել թէ կինը՝ ստրուկ եւ անտարբեր, կինը՝ համարուած միայն առարկայ վայելքի և զարդ՝ կանանոցներու, օտարամուտ եւ խորթ է մեր ազգային բարքերուն և խառնուածքին:

Եւ արդարեւ, մինչ սարսափելի և մռայլ փոթորիկներ, անընդհատ և անխնայ աւերումի և քանդումի կը մատնէին ոչ միայն շէն և հարուստ ուստանները, այլ նաև հալածական հոգիները, մինչ ստրկական զգացումներով թշուառացած, ճնշիչ և յարատեւ սարսափներու տակ ընդարմացած, հայ ազգը կ'ընտանենար իր վշտագին ճակատագրին. հայ կինը երբեմն երբեմն կը յայտնուէր՝ իր հերոսական շարժումներով

ցոյց տալով որ տառապած ազգին ծոցին մէջ բարոյական մեծ սկզբունքները քնացած են, բայց ոչ մեռեալ:

Հայ կնոջ հոգին դաստիարակուած է արիւնով և արցունքով. անիկա փակուած իր երգիքին ներքեւ, սգալով իր կորուսած զաւակները, կամ կարօտէն մաշելով տարագիր ամուսնոյն ու եղբայրներուն համար, կամ ենթակայ ըմբոստացուցիչ հալածանքներու եւ նախատինքներու, չարչարուելով նրբացած ու պատրաստուած է նոր օրերուն: Վիրաւորուած իբրև մայր, իբրև կին, վիրաւորուած իր սեռային և ցեղային զգացումներուն մէջ, անիկա զօրացած է այն ներքին, հոգեկան և անբռնաբարելի արիութեամբ որով տաժանելիօրէն կ'ամբանան աշխարհիս բոլոր անիրաւուածները և թիրտ ճնշումներու ենթարկուողները:

Աւելի քան այր մարդը, անոր շրթները հաւաչներու, անէծքի եւ հեծեծանքներու հետ արտասանած են ընդվզումի և զայրոյթի բառերը: Բնազգով և հոգեկան պայծառատեսութեամբ զգալով իր դերին նուիրականութիւնը, հայ կինը, մայր՝ բոլոր սերունդներուն, կենդանի ընդունարան և պահապան ցեղային ազնուագոյն և բարոյական ժառանգութեանց, և որուն ծոցին մէջ վերագտած ենք քանիցս ամէն ինչ որ անդառնալիօրէն կորսուած կը համարուէր, հայ կինը, լռին և անտրտունջ, վառ ջահի մը պէս սերունդէ սերունդ անցուցած է ազգային կենսականութիւնը, այն սև ու փոթորկալի օրերուն երբ չար ոգիի շունչին ներքեւ անիկա առկայծելով պիտի մարէր կարծես:

Բնական էր՝ որ իր անխարդախ բնազգով ճանչնար և ընդունէր ազգային վերածնունդի մեծ աւետարեիրները՝ ինչ կերպարանքով որ ներկայանային իրեն. անոնք ըլլային խիզախ ուղմիկ թէ ճշմարտութեան և արդարութեան առաքեալ, ըլլային զինուած գրչով թէ սուրով, Հայ կինը ճանչցած ու հաւատացած է անոնց:

Ու Հայունին իրաւունք ունէր. մեծ առաքելները ցանցառ էին թիւով ա՛յն թուականներուն երբ Փորթուգալեան յայտնուեցաւ. բայց անոնց ցանած սերմը բեղմնաւոր եղաւ, անոնց շունչը՝ սուրբ և օրհնեալ: Այսօր այլ եւս ամբողջ ազգը կանգուն և պատրաստական, տառապանքով և պայքարով արժանացած նոր օրերու, իր հոգիին մէջ, իբր անդրդուելի օրէնք, կը կրէ ազգային արժանապատուութեան, արդարութեան և իր իրաւունքներու գիտակցութեան այն անբռնաբարելի զգացումները որոնց առաջին վանկերը արտասանողներէն մէկը եղաւ Փորթուգալեան:

Աւելի գիտակցօրէն և հպարտութեամբ, այսօրուան հայ կնոջ կողմէ յարգանք ու մեծարանք իր գործին եւ անձին:

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

Խրիմեանը՝ իր «Արծուի Վասպուրական»ովը ազգային ոգին արթնցուցած և հայրենիքը Եկեղեցւոյ բեմը հանած էր արդէն. Գ. Սրուանձտեանցը՝ իր հայրենաշունչ և նկարագեղ գրուածներով բնատոհմիկ գրականութեան ծնունդ տուած էր: Տիգրան Ա. Միրճանեան՝ առաջին անգամ ըլլալով՝ թուրքերէնի և ֆրանսերէնի և ընդհ. պատմութեան դասերը Վանայ դպրոցներուն մէջ մտցնելէ զատ, ժողովրդական բարբառով եւ գրական լեզուով բաղմամբիւղ գրականութիւն մը կը մշակէր և Հայրապետ Ճանիկեան (այժմ Մեսրոպ քահանայ) զանազան ոտանաւորներով բաւատեղծի տաղանդ մը ի յայտ կը բերէր, երբ 1875 թուին կարճատե «Ասիա» թերթի խմբագիրը՝ Մկրտիչ Փորթուգալեան Վան երեւցաւ:

Քաղաքամիջի Յիսուսեան վարժարանին մէջ պատմութեան դաս կ'աւանդէի, երբ Պոլսեցի հիւրը, Մարկոս Նաթանեանի ընկերակցութեամբ, անակնկալ այցելութիւն մը և իր առաջին բանախօսութիւնները՝ նիւթը քաղելով զասէն: Իր թրթռուն ձայնովն և յստակ առողջանութեամբը հմայեց ամէնքը: Այնուհետեւ Վան հետաքրքրուեցաւ իրմով, և ո՛ւր որ խօսէր, կը վազէին զինք լսելու: Անցաւ Կովկաս, և «Մշակ»ի մէջ «Հրանտ» ստորագրութեամբ իր յօդուածները՝ Տաճկահայոց վրայ, հեւ ի հեւ կը կարդացուէին:

Դարձաւ Վան և Հայկազեան վարժարանի տեսչութիւնն ստանձնելով՝ կազմակերպեց Կիրակնօրեայ դասեր և Լսարան, ուր ամէն կիրակի կը խօսէր:

Կարճ ժամանակի մը համար Պոլիս գնաց, ուսից 1879ին վերադարձաւ՝ իր «Արարատեան» ընկերութեան Վանայ վարժապետանոցին տեսուչ: Առաջին անգամն էր որ Վանեցիք կը տեսնէին դասարանական դրութեամբ կանոնաւոր դպրոց, ուր կ'աւանդուէին բնական և չափական գիտութեանց դասեր:

Ես, երիտասարդ ուսուցիչ՝ հրապուրուած վարժապետանոցի հմայքէն, Տեսչին թոյլտուութեամբ ամբողջ տարի մը ներկայ գտնուեցայ պատմութեան, ֆրանսերէնի և գիտութեանց դասերուն բարձրագոյն կարգին, ուր կ'ուսանէին Մկրտիչ Աւետիսեան և իմ մի քանի աշակերտները: 1878ին հիմնուած վարժարանս՝ ջանացի ըստ կարելւոյն ձեւակերպել վարժապետանոցի մօտէին վրայ և Փորթուգալեան իր խորհուրդներով յաճախ կ'աջակցէր ինձ:

Վարժապետանոցի քննութիւններն ու հանդէսները կը ցնցէին Վանայ ուսուցիչներն և ուսանողները, և Փորթուգալեանի կազմած Ընկերութիւններն և Սահմանադրութեան տարեդարձի հանդէսները նոր կեանք կը ծլեցնէին ամէն խաւերու մէջ:

Երբ 1881ին Վարժապետանոցը փակուեցաւ, Փորթուգալեան՝ Միացեալէն անկախ՝ շարունակեց վարժապետանոցը գրեթէ նոյնութեամբ, կեդրոնական դպրոց անուան ներքեւ, մինչև 1885, երբ ինքը աքսորուեցաւ և դպրոցն ալ վերջնականապէս գոցուեցաւ :

Ուրեմն ամբողջ 15 տարի Վան ապրած կ'ըլլար Փորթուգալեանի ստեղծած նոր մթնոլորտին մէջ : Նա հասցուցած էր երիտասարդութիւն մը նոր իտէալներով, որոնք պիտի խտանային յետոյ իր աշակերտ Աւետիսեանի կազմած «Արմենական» կուսակցութեան մէջ :

Փորթուգալեան 1886ին կը հիմնէր առաջին հայ յեղափոխական թերթը՝ «Արմենիա»ն, զոր կը շարունակէ, բոլորելով հասարակական և գրական գործունէութեան քառասնամեայ բեղուն շրջան մը :

Հ. ԵՐԱՄԵԱՆ



Պ Ա Յ Ք Ա Ր Ո Ղ Ն Ե Ր Ը

Եթէ չափ մը պէտք է ճշտելու համար բարոյական արժէքները, ինչպէս անհրաժեշտ է այդ՝ նիւթական հարստութեանց համար, ապա ուրեմն՝ կը կարծեմ թէ, հասարակական գործիչին աստիճանաչափն ալ պայքարն է :

Պայքարիլ ընկերութեան մը մէջ՝ արիութեամբ, ճակատաբաց, անվրհատ, տարիներով, և անցընել աւերող կեանք մը պատնէչին վրայ, — կը նշանակէ ունենալ իտէալ մը, որ լաւատես է, այսինքն մարդկային, և որ էապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ կրօնք մը՝ իր ջերմութեամբ ու իր սաստկութեամբ :

Ահա ինչ որ կը պահանջուի ժողովրդանուէր գործիչէ մը, ճշմարտապէս արժանի այդ կոչումին :

Ըլլանք միշտ արդար, այսինքն լայնախոհ ու ներողամիտ՝ դէպի այն ընկերային իտէալները, որոնք ոգեւորեցին հանրային գործիչը իր դարուն ոգիովը, և որոնք, սակայն, որպէս փիլիսոփայութիւն, ենթակայ են անվերջ սրբազրութեան և անվերջ փոփոխութեան՝ ժամանակներու սահանքին մէջ . էականը անձնուիրութիւնն է, անշահախնդիր, անյողդողդ, գիտակցական, որ կը մղէ Անհատը տալու ինչ որ ունի ամէնէն աւելի թանկագին, ստորադասելով ե՛լ միտք, ե՛լ խօսք, ե՛լ անձնական երջանկութիւն, ե՛լ կեանք՝ ուրիշներու երջանկութեան :

Մ . Փորթուգալեան այդ բոլորանուէր անձնուիրութեամբն է, գա-

ղափարական զինուորի այդ արիութեամբն է՝ որ կը ներկայանայ հայ ժողովրդի յարգանքին ու երախտագիտութեան :

Բայց, ի՞նչ ըրած է Փորթուգալեան :

Գացած է դէպի ժողովուրդը, այն պահուն, ուր Պոլսոյ մտաւորականութիւնը կը տեսնէր միայն պատմական Հայաստանը և կ'արբենար պատմական յիշատակներով, մոռցած կենդանի, ժամանակակից Հայաստանը՝ որ ուրիշ բան չէր այդ մտաւորականութեան համար, եթէ ոչ Գաւառացի, Սոս կամ Սմայրլ :

Գացած է սիրով, խանդաղատանքով ու հաւատքով, ստեղծելու Նոր Հայաստանը :

Ահա իր դրօշակը՝ որուն անունով պայքարած է :

Պայքարած է իրրեւ ուսուցանող, իրրեւ ազատասէր, իրրեւ փրփականտիսթ, իրրեւ կազմակերպիչ, և կը շարունակէ այդ պայքարը, անտարակոյս ոչ երիտասարդական թափով, մինչեւ այսօր ալ, իրրեւ խմբագիր Արմենիայի :

Երիտասարդութիւնն սկսած է և ծերութիւնը կը վերջացնէ ահա :

Կը վերջացնէ պատուով և հպարտութեամբ :

*
* *

Շատ քիչերուն տրուած է կանգ առնել կեանքի վերջին սահմանեզրերուն վրայ և ըսել աներկիւղ .

«Ես իմ պարտքս կատարեցի :»

Մ. Փորթուգալեան կրնայ ըսել այդ խօսքը բարձրաձայնաւ ու համարձակ :

Նոր Հայաստան մը կայ այսօր ստեղծուած, որ աշխարհագրական ու հողային տարածութիւն մը չէ, այլ գիտակցութիւն մը, մեր ժողովուրդին մէջ, — գիտակցութիւնը իր ազգային գոյութեան, իր ազգային ճակատագրին և իր ազգային իտէալին :

Նոր Հայաստան մը՝ ինքնավստահ ու ազատատենչ, երկկի գեանամած, ոտնակոխ ու արհամարհուած Հայաստանին տեղ, որ իր տեղը կը ջանայ գրաւել, մաքառումով ու ճիգով, ինչպէս սորվեցուցին իրեն՝ իր պայքարի զաւակները, ոմանք ինկած փառքի ճամբուն վրայ . ուրիշներ բախտաւոր, ինչպէս ինքն է ծերունի գործիչը, իրենց աչքերովն իսկ տեսնելու այսօրուան հունձքն իրենց գաղափարական սերմնացանին :

Նախորդ սերունդի պայքարողները մեզի սորվեցուցին երազել ու մաքառիլ . մեզի տուին ազգային իտէալը :

Մկրտիչ Փորթուգալեան առաջին գծին վրայ կը կանգնի թրքահայ հատընտիր պայքարողներու այդ սերունդին մէջ, որուն առջեւ ամէնքս, առանց մտածման ու գաղափարի տարբերութեան, պարտաւոր ենք երախտագիտութեամբ բանալ մեր գլուխը :

Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ



Վ Ե Ր Յ Ի Շ ՈՒ Մ Մ Ը

Ընթրիքնիս ընելէ վերջ՝ խմբուած էինք վառարանին շուրջ: Հիւր ունէինք. ազգակա՞ն էր թէ մեր տան մտերիմներէն, որոշ չեմ յիշեր. հիմա երեւակայութեանս ընդ ազօտ կ'ուրուաղծուի իր պատկերը միայն:

Փոթորկոտ գիշեր մը. հովը շարունակ կը դղրդեցունէր պատուհաններուն հինցած շրջանակները, մինչ անձրեւին միօրինակ երաժշտութիւնը կը լսուէր ապակիներուն ետեւէն: Տիրող աղմուկներէն, մանաւանդ սենեակին՝ պարտէզին կողմը գտնուելէն հետզհետէ ինքզինքը գոհ կը դգար հիւրերնիս, որ վերջին ակնարկ մը ձգելով գոց վարագոյրներուն վրայ՝ թերթ մը հանեց գրպանին խորունկ մէկ խորշէն, ձեռքի զգուշաւոր որոնումով, ու սկսաւ կարդալ զայն զսպուած ձայնով մը, տնեցիներուն հիացիկ ու վարանոտ ունկնդրութեան առջև: Նուիրական թերթը ձեռքէ ձեռք անցաւ յետոյ, խոկումով և յուզմամբ հակեցան գլուխներ անոր վրայ, անոր անձնիւր բառէն ու տողէն կտրծես սպասելով սխրալի երազներու մէկ նշոյլը:

Անձանօթ թերթին ընթերցումը տարապայման եռանդ մը կը թուէր արծարծած ըլլալ սիրտերու մէջ, քանի որ ներկաները տենդագին ձայնարկութիւններ կը փոխանակէին, և զայրոյթի ու ատելութեան բոցը կը կայծկտար աչքերու խորը:

«Արմէնիա», «Փորթուգալեան» — ահաւասիկ բառեր որոնք շշուկի մը պէս հասած էին ականջիս, և երբ թերուս դպրոցականի յաւակնութեանս մէջ՝ դեռ նոր ուսած եւրոպական երկրի մը անուանը հետ, այս մականունին նմանութիւն մը ունենալը կը յայտնէի, մայրս ինծի մօտեանալով, մատը բերնին, «Լա՛՛՛ աղջիկ, կը ձայնէր, եթէ այդ անունը դուրսը կրկնես, ամէնքս մէկ բանտ կ'երթանք...»:

Համիտի օրով որո՞ւ ձանօթ չէր, մանուկներո՛ւ անգամ, բանտի եւ աքսորի սարսափը: «Բանտ կ'երթանք»ը կը բաւէր ահաբեկելու ամէն Հայ և փակելու անոր շրթունքը:

Այս գիշերէն ի վեր գիտցայ յարգել տրուած պատուէրը. չկրկնեցի բնաւ այդ անուններն օտարներու առջև: Բայց ո՞րչափ քաղցր էր ինձ համար յեղյեղել զանոնք, ելլբ հետզհետէ վերահասու կ'ըլլայի թէ լսած այդ բառերս ամէն Հայէ սիրուած ու պաշտուած անուններն էին: Արմենիան կը թուէր ըլլալ շքեղ մէկ խորհրդանիշը Հայրենիքիս, և Փորթուգալեան՝ անոր ազատութեան, յոյսին ու փրկութեան իտէալին լծորդուած դիւցազնափայլ դէմքը:

Տարիներ անցած էին: Դպրոցէն նոր շրջանաւարտ, բարերախտ դիպուածը Բարիզ կը նեաէր զմեզ: Շոգենաւնիս կը ժամանէր Մարսիլիա: Հազիւ քարափ ելած և անձնատուր այն պատրանքին թէ ցամաքը կը տառանի մեր ոտքերուն տակ, կը փութանք տեղացի Հայու մը առաջ-նորդութեամբ դէպի կայարան, Բարիզ մեկնող կառախումբին հասնելու համար:

— Փորթուգալեանը կ'ուզէ՞ք տեսնել, կը յարէ յանկարծ ազգակիցս, մինչ մեր կառքը կը թաւալի լայն պողոտայէն. սա անցնողն է: Ու մատուլը ցոյց կու տայ մայթին վրայէն հանդարտօրէն քայլափոխող պատկառելի Հայը որ արդէն իսկ աներեւութանալու վրայ է անցորդներու եռուզեռին մէջ:

— «Ի՞նչ կ'ըսէք» մը այնինչ արտաբերած, գլուխս ետև կը դառնայ ինքնաբերաբար ու նայուածքս կը յամառի հետեւիլ այդ անցորդին՝ որ իր թերթով հայրենիքի տառապանքը ճանչցուցած էր մեզ, որ ազատութեան ու ինքնագիտակցութեան ոգին արթնցուցած էր իր հայրենակիցներէն շատերուն սրտին մէջ, և որ, առանձի՛նն, հայ ազատագրումի գործին համար ի սպաս դրած էր իր կորովն ու գրիչը, տարիներ նժդեհ ապրելով և իր բոլորած ազգօգուտ գործունէութեամբ վերերան հանդիսացած անձնուրաց գործիչներու շարքին մէջ:

Զարմանալի զուգադիպութեամբ մը, ազատ երկիր մը ժամանած առաջի՛ն պահուս իսկ, կը հանդիպէի տղայութեանս օրերուն՝ Հայրենիքի և Ազատութեան ձայնը առաջին անգամ ինձ հնչեցունող այդ անխոնջ վաստակաւորին, որուն երկա՛ր հետեւած կը մնար նայուածքս այնքան սիրով ու զմայլանքով . . . :

ԱՐՇԱԿՈՒՀԻ ԹԷՈՒԻԿ



Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Ն Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

Պէրպէրեանի գրասեղաններուն վրայ, տաս-տասներկու տարեկան տղայ մըն էի՝ երբ առաջին անգամ Փորթուգալեանի անունը լսեցի: Առասպելական հանգամանքով մը, յոյսի և յուզման սարսուռի մը ներշնչումով տեղի ունեցաւ իմ անդրանիկ ծանօթութիւնս այդ անունին հետ: Մենք Հայաստանով, անոր ապագայով կը զբաղէինք արդէն և տարէց ընկեր մը, սե տախտակին վրայ, ամբողջ տող մը թուանշան գրած էր օր մը և զայն կը բացատրէր մէկ քանիներու, խորհրդաւոր եղանակով մը: Չեմ գիտեր ի՞նչ գործողութիւններ կը կատարէր այդ թիւերով, յաւելումներ ու բարձումներ կ'ընէր, բայց գիտեմ թէ ի վերջոյ կը գտնէր երկու թիւ, որոնց մէկը սա՛չափ ոսկի և միւսը՝ սա՛չափ տարի կը ներկայացնէր: Ոսկիին գումարը հիմա լաւ չեմ յիշեր, թէպէտ կը կարծեմ որ մէկ միլիոնէ պակաս չէր, բայց որոշապէս միտքս է տարեթիւը, որ 1895 էր: Եւ մ'ըրնկերը կ'ըսէր՝ թէ այս մարգարէական հանելուկը — որովհետեւ հանելուկի պէս բան մըն էր ան — տպուած էր, Փորթուգալեանի Արմենիային մէջ, թէ ոսկին կը յայտնէր այն գումարը որ պէտք էր մեր Յեղափոխութեան՝ Համիտեան շարաշուք լուծր թօթափել կարենալու համար, և տարեթիւը կը ցուցնէր այն տարին որ այդ բանը պիտի յաջողէր կատարուիլ:

Ահա՛ թէ ինչո՛ւ իմ սիրտս կը դողար յոյսով և յուզումով, և ինչո՛ւ յիշողութիւնս այդ սարսուռին հետ միասին կ'ընդունէր ու կը պահէր Փորթուգալեանի անունը, մարգարէի մը անունին պէս . . . :

Իրաւ է թէ այն ատեն, 89ին կարծեմ, պայմանաժամը քիչ մը երկար կը թուէր ինձի, և 1890ի Գումգաբուի ցոյցին իրիկունը սրտիս ալեկոծող խանդավառութեան փոթորկին մէջ ես հինգ տարուան բարեղէպ սխալ մը կը վերագրէի Փորթուգալեանի հաշիւներուն, բայց իրաւ է նոյնպէս, որ վերջէն բուն իսկ 1895ին, երբ Պապը-Ալիի ցոյցը տեղի ունեցաւ, երբ դեսպաններու յիշատակագիրը մատուցուեցաւ, և մենք նաւատորմերու Վոսիորէն մուտքին սպասումին մէջ էինք, ընդունեցի որ Արմենիայի հրատարակիչն անսխալ էր, և ճիշտ ու ճիշտ իր գուշակութիւնն էր որ կը կատարուէր՝ իր բուն թուականին . . . : Սակայն աւելի վերջը, 97ին, երբ Մարսէլի մէջ անձամբ ճանչցայ ու մօտաւորապէս հինգ տարի իր մօտը գտնուեցայ, զարմանալի չէր որ Փորթուգալեան, ինձի միշտ յարգելի երեւնալով հանդերձ, այլ ևս կորսնցուցած էր իմ աչքիս իր մարգարէի հմայքը, քանի որ անցեր էին թէ՛ 95ը և թէ՛ 96ը, և ինչպէ՛ս

անցեր . . . : Գիտե՛մ, ալեւոր հայրենասէրը կարծեմ թէ ինք երբեք ըրած չէր այն գուշակութիւնը որ իմ տղու երեւակայութիւնս այնքան զրգուած էր, եւ եթէ զայն ըրած ալ ըլլար՝ իրաւամբ պիտի կրնար ինծի պատասխանել թէ գուշակութիւնը երկու մասէ կը բաղկանար, նախ մեծ թուանշանը, միլիոնը, զոր ես և ամբողջ ազգը այնքան դիւրաւ մոռցեր էինք, և ապա փոքր թուանշանը՝ 1895ը, որուն իրականացումը կախուած էր սոսկ առաջինին գոյութենէն . . . : Բայց ինչ ալ ըլլար՝ ըսի թէ Փորթուգալեան այլ ևս մարգարէ չէր ինծի համար՝ երբ 1897ին զինք անձամբ ճանչցայ Մարսէլի մէջ :

*
* *

Ինծի համար Արմենիաի խմբագիրը մարգարէ չէր ալ, բայց կը մնար միշտ մեծ ու յարգելի ազգասէր մը՝ մինչ Մարսէլ բնակող ուրիշ շատ Հայերու համար ան կը նկատուէր փորձանք մը ու վտանգ մը : Երկու պատճառով . առաջին՝ որովհետեւ 95 - 96էն ետքը, քաղաքականապէս շատ գէշցեր էին ժամանակները բովանդակ հայութեան համար և Մարսէլի հայ գաղթականութիւնը, մասնաւորապէս, գէշ աչքով կը դիտուէր Սուլթան Համիտի կառավարութենէն, որովհետեւ Փորթուգալեան մը կ'ապրէր իր մէջ՝ իր փոքրադիր թերթին հետ . երկրորդ՝ որովհետեւ Փորթուգալեան իր փոքրադիր թերթն ու մեծաթիւ ընտանիքը ապրեցնել կարենալու համար, ատեն ատեն պէտք կ'ունենար գաղթականութեան օգնութեանը, որ այդ օգնութիւնը կ'ընձեռէր շատ զգուշութեամբ և շատ դժկամակութեամբ, ամենածայրայեղ պարագաներու մէջ միայն՝ երբ գործիչին կարասիները գրաւուեր, կամ զաւակը աղետաւոր հիւանդութենէ մը պառկեր, կամ ուտելու հացը բոլորովին պակսեր էր իր տունին մէջ : Այն ատեն քանի մը հոգի, բայց քանի մը հոգի միայն, փոքր գումար մը կը հաւաքէին և կը յանձնէին ընտանիքի վշտահար հօրը, թէպէտ աւելի մեծ գումար մը պատրաստ էին տալու, եթէ միանգամ ընդ միշտ զայն առնէր ու հեռանար Մարսէլէն : Բայց Փորթուգալեան կը յամառէր հոն մնալու, փարած իր Արմենիաին զոր կը սիրէր իր միւս զաւակներուն հաւասար, գուցէ ասոր վրայ գտնելով մխիթարութիւնը իր միւսներէն կրած վշտին, որովհետեւ ասիկա աւելի տոկուն՝ ամիսներով կը դիմանար անսուաղութեան, ձայն չէր հաներ, չէր ապրեր, բայց չէր ալ մեռներ, երբ հայրը սնունդ տալ չէր կրնար իրեն, գիտէր համբերութեամբ սպասել բաժանորդներու բարի-կամքին, իր գոյութիւնը վերստին երեւան բերելու համար, ի՞նչ կ'ըսեմ՝ նոյն իսկ ինքն էր, այդ թուղթէ զաւակը, որ հակառակ իր վատառողջ կենցաղին, կ'ապրեցնէր միւսները՝ կ'ապրեցնէր որքան որ կրնար . . . : Եւ ասոր համար անշուշտ, Փորթուգալեան կը սիրէր իր այս հաւատարիմ զաւակը ու հաւատարիմ կը մնար — ու կը մնայ մինչև այսօր ալ — անոր՝ իր ահաւոր մարտիրոսացման երկարաքարչ տարիներուն մէջէն . . . :

Այնչափ ատեն որ Մարտէյլ մնացի, ես զինքը միշտ առոյգ տեսայ մտքով, մանաւանդ իր խօսակցութիւններուն մէջ, և միշտ հաստատ իր հին քաղաքական ուղղութեանը՝ որ իմս ալ էր գրեթէ և որու պատճառաւ միջոց մը աշխատակցեցայ իրեն, թէ՛ Մարտէյլ գտնուած պահուս և թէ՛ վերջէն՝ Համպուրկէն: Կը յիշեմ նոյն իսկ, որ 1901ին կամ 1902ին, երբ մտադրեր էր Ամերիկա ճամբորդութիւն մը ընել — ճամբորդութիւն զոր երկու-երեք տարի վերջը միայն յաջողեցաւ կատարել — ինծի առաջարկեց փոխանորդարար խմբագրել Արմենիան: Վերջէն, թէ՛ ինքը և թէ՛ ես, գաղափարով մէյմէ՛լ քիչ հեռացանք իրարմէ: Ատենօք, ասիկա քիչ մը նեղացուց զիս: Այսօր սակայն՝ կը խորհիմ թէ իրաւունք չունէի նեղանալու, և կը խորհիմ թէ Վանի Կեդրոնական վարժարանին ու Վարժապետանոցին նախկին տեսուչը և ազգային վաղեմի գործիչը, իր տարիներու վշտաչարչար կեանքէն ետք, լիովին իրաւունք ունի անխտիր ամբողջ հայ ազգին երախտագիտութեանը, անոր վերջին կէս-դարու զարթնումին աշխատած և ահաւոր ցնցումներու մէջտեղ, անոր յոյսն ու հաւատքը իր մէջ անսասան կրած ըլլալուն համար:

Վ.Ա.ՀԱՆ ԹԷՔԷՆԱՆ



Տ Ո Կ Ո Ւ Ն Մ Ա Ր Դ Ը

Մո՛ւթ, խաւար օրեր էին: Բռնութիւններու էն սոսկալին — տգիտութիւնը սև թուխս էր նստած հայութեան հոգու վրայ: Լոյսի և ոչ մէկ շիւղ, ոչ մէկ ուղեցոյց:

Այդ օրերուն ասպարէզ իջաւ ան, երկաթէ մարդը: Վարժապետ էր, գիտութեան քարոզիչ: Թողեց մայրաքաղաքի փափկութիւնը. առաւ լուսոյ ճրագը և ընկաւ ծովը: Մո՛վ խաւարի, ծո՛վ տգիտութեան և, որ է՛ն սոսկալին էր, — ծո՛վ ստրկութեան: Աղտոտ ալիքներն իրարու վրայ կ'ելէյին: Տգէտ էր Հայը, ստրուկ էր Հայը:

Ու անոր լոյսի ճրագը կը շարժուէր այդ խաւար ծովին մէջ — յառա՛ջ, միշտ յառա՛ջ:

1880ական թուականներուն, թափառելով Թոգաթ և այլ վայրեր, լոյսի ռահվիրան հասաւ Վան: Դեռ ևս Համիտեան հայակեր քաղաքականութիւնը չէր հասած իր կարմիր կատաղութեան. դեռ ևս Վասպուրական Աշխարհը այնպէս չէր պարպուեր իր զաւակներէն, ինչպէս 1890էն յետոյ եղաւ: Հո՞՞՞՞ Հայութեան մէջ երկաթէ Մարդը—Մկրտիչ Փորթուգալեան սկսաւ իր գործը:

Ուսուցիչ էր — աշակերտներ կը հասցնէր. բայց աւելի ևս ժողովուրդի քարոզիչ էր — բրոքսիսիսիսիս — Հայ կը պատրաստէր :

Տեսաւ և սերտեց Հայ միջավայրը : Կառավարութիւնը կ'ուզէր արմատախիլ ընել Հայը իր երկրէն : Հայի շուրջը կը վխտային քիւրտ աշիրէթներ, աւատապետներ և միւսքիւսիսիսիսիս : Հայը զինագուրկ էր, շուրջը ամէնքն ալ զինուած էին ոտից ցզուխ : Ամէնքը կը զարնէին : Հայը՝ գլուխը կը կախէր : Ու ատկէ իրախոյս առած, ամէնքն ալ զարկերը կը շատցնէին անգթօրէն :

Տեսաւ ու ըմբռնեց : Ըմբռնեց ու դարման առաջարկեց : Մեծ վարժապետը — Խրիմեան Հայրիկը արդէն ըսած էր. «Մակ երկաթ է պէտք Հայուն» : Երկաթէ Մարդը նոյն բանը կրկնեց : Յորեկ ու գիշեր անդուլ անդադրում կը քարոզէր Հայուն զինուիլ, իր գոյքը, կեանքը և պատիւը պաշտպանել զինուած քիւրտ աւագակներու, աշիրէթներու և տէրէպէյիներու դէմ :

Խան Մահմուտներու, Խան Աւտալներու, Աւտօներու և Պետրխաններու միջավայրին մէջ առաջինը եղան այդ երկու անձերը որ յանդգնեցան ստրուկ Հային զէնք առնել քարոզել, որ սորվեցուցին անոր ըմբռտանալ, կազմակերպուիլ և դիմադրել :

Ժամանակի կառավարութիւնը շուտով նկատեց նոր խմորումը Վահայ մէջ : Բանի մը ցնցումներէ, ձերբակալութիւններէ և շղթայակապ հոս ու հոն քաշքշուքէ յետոյ, Փորթուգալեան ստիպուած եղաւ 1885ին փախչիլ : Անցաւ Մարսիլիա և հոն հիմնեց իր Արմենիան, առաջին հայ յեղափոխական օրաթերթը :

Փորթուգալեանի թերթը այնուհետև եղաւ միակ ժամադրավայրը բոլոր հայ ըմբռտներու, մինչև որ 1887ին անկէ բաժնուեցան Ա. և Մ. Նազարբէկեան, Շմաւոն ու Նշան Կարապետեան և ժընէվի մէջ հիմնեցին Հնչակը :

Ուսուցչին թողած պայծառ հետքերը կեանք առին : 1889-90 թուերուն մարմին առաւ Հայրենասիրաց Միութիւնն իր օթեակներով, նման Մասունիսիսիս Լօժերու : Ուսուցիչը երբեք չդադրեցուց իր ձայնը որ կը կոչէր Հայութիւնը միշտ դէպի կազմակերպութիւն և պատրաստութիւն :

Ու այսօր 40 տարի — երկա՛ր, սե՛ սարիներ, — անոր ձայնը հնչելէ ետք, եկեր հասեր է ձերութեան հանգրուանը : Սակայն այդ հուժկու և տոկուն ձայնը չի մարիր, չի մեռնիր : Դեռ կը հնչէ :

Գէ՛շ օրեր. անձայր տառապանք, սև կարիք, անօթութիւն յաճախ եկեր ճանկուտեր են անոր դուռը, բայց ան մնացեր է անդրդուելի, ինչպէս իր հայրենի երկրին ժայռերը :

Բառասո՛ւն տարի... քար ըլլար կը փշրուէր, ծով ըլլար կը ցամքէր : Սակայն անոր եռանդը երբեք-երբեք չցամքեցաւ, երբեք չթերացաւ :

Յաճախ անոր դէմ եմ գրած, յաճախ իրեն գաղափարական հակառակորդ եմ եղած, բայց երբեք չեմ դադրած յարգելէ անոր տոկուն կամքը, անոր երկաթե հոգին :

Երբ 1906ին այցելեցի իրեն՝ Մարսիլիա, իր աղքատիկ բնակարանը,

հոգիս թրթռաց ուրախութենէ. Հայ խոնարհին ծառայողն էր իմ առջև, 33 տարի— $\frac{1}{3}$ դար — մարտնչած Հայութեան բարօրութեան համար: Նստած իր տպարան-բնակարանին մէջ, տառերու արկղիկներու, սրբագրուած ու սրբագրուելիք թուղթերու և ձեռագիրներու միջև, կը խօսակցէինք: Ինքն էր որ կը խօսէր կովկասէն եկած իր հիւրին—ինձ հետ: Իսկ ես լուռ կը լսէի... ո՛չ, չէի լսեր, այլ անոր երեսը նայելով, կը յիշէի հին Հայ Նահատակները, համաշխարհային մարտիրոսները: Անոնք նահատակուեցան —կը մտածէի,— իրենց Հաւաստիին համար, իսկ այս փոքր մարմինով, բայց երկաթ կամքով մարդը կը նահատակուի ի՛ր կրօնին համար:

Ա՛հ, այդ կրօնը — այդ Հայապաշտութիւնը, այդ Հայաստանի երկրպագութիւնը. ո՛րքան մարդ է գոհուեր անոր սեղանին առջև, ո՛րքան ողջակէզ մոխիր եղեր...

Կը լսէի արդէն աղուպղպեղ մօրուսաւոր խօսակցիս մեղմորակ ձայնը և կը զգայի թէ ի՛նչպէս, այն ատեն, 33 տարի ամէն օր քիչի՛կ-քիչի՛կ ողջակիզուեր է Հայութիւնը մեծ Մողոքին առջև:

Թէև գաղափարական հակառակորդ իրեն, այսօր կուգամ յարգանքս մատուցանելու Հայ Երկաթէ Մարդուն, Հայ Յեղափոխական Ռահվիրային:

Յարգանք 40 տարուան անդուլ աշխատանքի և անասելի զրկանքի համար: Տառապանքն է որ կը կերտէ մեծ մարդերը:

Գ. ԽԱԺԱԿ



Ի Ր Դ Ա Ի Ա Ն Ա Ն Ք Ը

Տակաւին մինչեւ այն ատեն՝ քիչեր կը խորհէին այն երկրին համար: Խեղճերու, հարստահարուածներու, զրկուածներու, լքուածներու, քանդուածքի հայրենիքն էր:

Անոր վերածնութիւնը... Ներելի չէր մտքէ իսկ անցնել այդպիսի ամբարիշտ խորհուրդ մը: Հայութիւնը կը կեդրոնանար Պոլիսի մէջ ու կ'օտարանար միտքով, սրտով, սովորութիւններով, հոգիով:

Այդ ատեն ահա Վանեցի հոգեւորական մը, նոր յուզումներով բեղուն, Վանէն ճամբայ բացած դէպի Պոլիս, կուգար վրդովելու Պոլիսը իր սեփական հասկացողութիւնովը: Իր ամէն խօսքերուն մէջ, իր ամէն քարոզներուն վերջը կը շեշտանար՝ Հայրենիք:

Փամանակին մտաւորականները, իրենց տեղովն ու թաղային հարցերովը զբաղած, ծաղրանքն ունեցան դէպի այդ հոգեւորականի նոր խօսքը, նոր վարդապետութիւնը, որ կը սրբանար, կը նուիրագործուէր իր Աւետարանի խօսքերուն հետ:

Սակայն ներս կը թափանցէր քիչ քիչ այդ ձայնը: և հասարակ ժողովուրդը, իր հողիովն ու սրտովը ա՛լ աւելի մաքուր, դուրսէ եկած այդ ձայնին մէջ, անոր դողդղանքին մէջ զգաց իր սրտին դողդղանքը, իր հողին վրդովը:

Փորթուգալեան ո՛չ միայն վրդովուած էր այդ կրկնուած ձայնէն, այլ անոր խորքին մէջ զգացած՝ ճշմարտութիւն մը.— վերածնութիւն ցաւատանջ հայրենիքին . . . :

Այդ դաւանանքով խրախուսուած, ճամբայ կ'ելլէր դէպի այդ ցաւի, դարտի հայրենիքը: Իր գործը պիտի ըլլար աշխատիլ արցունքի շողիններուն և քանդուածքի փոշիներուն մէջ: Ինքը հաւատացած էր որ եթէ լոյս դրուի միտքերու մէջ, ուղղութիւն տրուի զգացումներու, յաջորդ սերունդները վերջապէս կը զգան այն անպատուութիւնը որուն դատապարտուած են՝ ճիշտ քարին ու աւազին պէս, որոնց վրայ քսուելով կ'անցնի ջուրը իր բոլոր աղտեղութիւնովը:

Վանը եղաւ իր գործունէութեան յարմարագոյն վայրը:

Քաղաքական հոտառութիւններ չուտով վրայ կը հասնին . . . Յաւերու նուիրուած վերամարտիկը կ'ըմբռնէր որ իր դիրքը խախտուած է, իրեն թոյլ չպիտի տրուէր իր սկսած աշխատանքը շարունակելու անմշակ հողերու վրայ:

Բայց մինչև այդ ընդհանձն՝ առաջ տարուած էր վերածնող աշխատանք մը, և այդպէս եղած էր նոր յաւելում մը թափուած ուրիշ քրտինքներու վրայ:

Ինքը, Փորթուգալեան, կը ստիպուէր հեռանալ իր աշխատանքէն ու աշխատանքէն՝ սիրտը ետէ թողած, աչքերը, ականայ, դէպի առաջ, հեռո՛ւն, հեռո՛ւն, ուր չկարենար հասնիլ բռնակալ ձեռքը, զօրեղ՝ այլ անիրաւ:

Ու կը հեռանա՛ր Փորթուգալեան, ո՛չ միայն Վասպուրական մը թողած, այլ բովանդակ հայրենիք մը որուն զաւակն էր ինքը:

Այնուհետև իր բոյնը եղաւ հեռաւոր ծովափ մը, Ֆրանսական հողի վրայ, — Մարսէյլ, որ սակայն չկրցաւ Փորթուգալեանի մէջ սպաննել իր դաւանանքը, — վերածնութիւն՝ ցաւերու և արցունքի հայրենիքի ծոցին մէջ:

Այս անգամ կը սկսէր իր միտքը դնել թուղթերու վրայ, որ մամուլով հարիւրապատկած, հազարապատկած, ճամբայ կ'ելլէր դէպի մեզ: Բռնակալութեան լրտեսները, վարձկանները չկրցին արգելք ըլլալ Փորթուգալեանի թերթերուն, որոնք թեւ առած կը թռչէին դէպի հայրենիքի խորերը, կը մտնէին խաներու սենեակներէն ներս և հաղորդակցութիւններ կը ստեղծէին մէկ կողմէ նոր դէպքերու, նոր համոզումներու, միւս կողմէ՝ երկրին նոր ցաւերուն հետ:

Ա՛տ եղաւ իր գործը շարունակ, այդ քարոզին ու այդ աշխատանքին մէջ յարատեւեց Փորթուգալեան. նեղութիւն, ճնշումներ չկրցին ետ կեցնել զինքը իր գործէն, օր մը առաջ գրածը՝ օր մը ետքը իր գրող մատներով շարեց, շիտկեց, կարգի դրաւ, ու կրակը վառ պահեց:

Այն օրէն ցայսօր մենք անցանք հրդեհներէ, յաջորդական արիւն-

ներէ . ինկան շատեր իրենց դաւանանքի ճամբուն վրայ , շատեր ուրացան իրենց դաւանանքը ու դրօշակնին պատուեցին , բայց Փորթուգալեան , իր դաւանանքին մէջ անխախտ , քալեց դէպի նոր արշալոյսներ , դէպի վերածնութիւն աւերակ հայրենիքի , աւերակ հոգիներու :

Ու երբ այսօր , քառասուն տարուան աշխատանքի մը վերև կեցած , իր դէմքը կ'երեւցնէ մեզի , Փորթուգալեան կրնայ մեզի ըսել որ՝ Թէեւ տարիները շատ բան տարին ինձմէ , մարմինիս ուժը , աչքերուս լոյսը , մազերուս սեւութիւնը , բայց սուրբ է դաւանանքս , ափիս մէջ ունիմ դրօշակս , թարմ է սիրտս հանրային սէրերուս մէջ , և սպիտակ մազերուս ներքև կը պահեմ կրակը ցաւոտ հայրենիքի մը վերածնութեանը :

Պատիւ իրեն , պատիւ իր դաւանանքին , պատիւ իր՝ քառասուն տարուան անընդատ աշխատանքին :

ՀՐԱՆԻ



Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ց Բ Ո Վ Ե Ր Է Ն

Ա.

Հակառակ տարիներու հեւ ի հեւ վազքին՝ դեռ թարմ կը մնայ միտքիս մէջ դէպքը , որ ընկերսիրութեան թէ ընկերական պարտաւորութեան դասը եղաւ մեզի՝ Միացեալ Ընկերութեան Վանայ Վարժապետանոցին յաջորդը եղող՝ Փորթուգալեանի հիմնած՝ Կեդրոնականի աշակերտացս համար :

Մեկանոյշ յիշատակաց անդարձ , աւա՛ղ , բայց եւ անթառամ հոյլ հոյլ շարանքէ մը կը ցայտէ գրութեանս նիւթը , որուն դերակատարներէն որքա՛ններ պարտականութեան ցուրտ եւ արիւնոտ ճանապարհին վրայ իրենց կեանքը տուին , գոզցես ցուցնելու համար թէ Հայ-Վերածընութեան ռահվիրաներէն Փորթուգալեանը ի՛նչ եղանակաւ ու ոգիով ներշնչել և պատրաստել գիտէր նորատի եւ խոստմնալից այն հոգիները , որոնք վաղուայ գործիչներ , և «Աւետիսեաններու» խմորէն , հայրենի ազատագրութեան մարտիրոսներ պիտի ըլլային . . . : Եւ ասիկա , օրինակ մը լոկ՝ շատերու մէջէն :

Իրիկուն մը , դպրոցը աւարտելուն , զանգակի հրաւերով մը բովանդակ աշակերտութիւնը տեսչարանը հաւաքուեցաւ Մեծ-Քէնտրջէի մօ-

տիկ Հիւսեանենց տանը մէջ : Փորթուգալեան բաներ մը ունէր ըսելիք, և ջղայնոտ ու մտազբաղ, սենեակին մէկ ծայրէն միւսը կ'երթար կուգար, իր տկար և կարմրած աչքերուն կոպերը սեղմած :

Սորհրդաւոր ունկնդրութեան մը մէջ, առանց այլեւայլի խօսքը բոլոր աշակերտութեան ուղղելով. — Պարո՛ններ, ըսաւ. եթէ յետ այսու պատահի որ լսեմ կամ տեսնեմ թէ ճամբան, փողոցներու մէջ ընկերներու հետ գացած միջոցին, ձենէ մէկը, ու է պատճառաւ, օտար մարդէ մը և կամ տղաներէ յարձակում կրէ և իր ընկերները լուռ և անտարբեր հանդիսատեսներ մնան, այդպիսիք, որպէս ընկերական պարտաւորութեանց մէջ զանցառուներ, ծանր պատիժներու պիտի արժանանան :

Պատուէրը երկար չտեւեց — պէտք ալ չկար — բայց տպաւորութիւնը մեծ եղաւ :

Արդարեւ, յետոյ իմացանք որ ինքն ալ դպրոցէն տուն դարձած միջոցին դիտած էր թէ ի՛նչպէս քանի մը օտար տղաք՝ աշակերտներէն մէկը ծեծած ատեն, ընկերակիցները պարզ և անտարբեր հանդիսատեսներ մնացած էին :

«Փորթուգալ»ի աշակերտները Վանայ մէջ, բազդատմամբ միւս դպրոցաց, մեծ հռչակ մը ունէին և տարբեր դիրք մը : Զարմանալի չէր ուրեմն, որ տղայական աշխարհի մէջ ալ «Փորթուգալ»ի աղոց այդ դիրքը «տղայական» հակառակութիւն ծնեցնէր . . . :

Բնական է թէ Վարպետիս իր այդ կարգի պատուէրներով միտք չունէր իր «աղոց» մէջ հակառակութեան եւ կռուազանութեան զգացումը գրգռելու, բայց ինչ որ իր ցանկութիւնն էր — և որ անկէ վերջ կանոն մը եղաւ՝ կեանքի և նպատակի կանոններէն — իւրայնոց զիրար օգնելու և պաշտպանելու պարտաւորութիւնն էր :

Աշակերտները չզրժեցին իրենց Վարպետին, չդաւաճանեցին անոր թելադրութիւններուն . . . ու շատ չանցած անոնցմէ շատերէն — Աւետիսեաններուն՝ Բարթուղիմէոսի մօտերը նահատակութիւնը, ջարդերէն ուժասպառ վտանգուած Հայրենիքին մերազնէից պաշտպանութեան փրկանքը եղաւ :

Բ.

Տարիներ անցած էին : Փորթուգալեանը կեդրոնականին փակումովը Մարտէյլ ապաստանած էր «Արմէնիա»ն հրատարակելու : Երկրին մէջ և ամենուրեք ահաւոր դէպքեր տեղի ունեցած էին՝ ազգին դժբաղդ ճակատագիրը բազդորոշող :

Երիտասարդութիւնը, անոնք որ կրցած էին ճողոպրիլ մահուրնէ, արտասահման կ'ապաւինէին, հո՛ն, օտար երկինքներու տակ փնտռելով ապաստանի անկիւն մը :

Ես ալ իմ կարգիս — և ո՞վ անմասն մնաց — Թուրքիոյ և Կովկասի մէջ տարիներով աքսորի, բանտի և փախստականի կեանք մը վարելէ վերջ, շունչս Ֆրանսա կ'առնէի, Մարտէյլ :

Քիչխան Գօլիցին, ուրիշ կարգ մը հայրենակիցներու հետ երկար ատեն թիֆլիսի Մեասիսի բանտը պահելէ վերջը, Կարս դրկել տուաւ մեզ՝ թուրքիոյ յանձնելու համար, ինչպէս որ ըրաւ, մեր հոն եղած ատեն, Արմենակ Շահմուրատեանին: Բայց չգիտցանք ինչո՞ւ, թերեւս ռուսական խաղ մը կարծելով, Բ. Դուռը մերժեց ընդունիլ և Կարսի ոստիկանութիւնը, ամիսներ վերջ, ստիպուեցաւ մեզ ազատ ձգել:

Երբ գաղտնի նորէն թիֆլիս դարձանք, Խրիմեան Հայրիկը հոն էր, և ինձ խորհուրդ տուաւ Թրանսա մեկնիլ՝ զիւղատնտեսութիւն սորվելու (1899):

Մարտէյլ հասնելուս, հազիւ օձիքս ազատած հայ սրմաստներու կողոպուտէն, շունչս կ'առնեմ «Արմէնիա»ի խմբագրատունը, որ այդ միջոցներուն Գանրպիէրի հռչակաւոր փողոցին արեւմտեան ծայրը երկրորդական փողոցի մը մէջ կը գտնուէր:

Երբ մութ և անշուք տան մը սանդուխներէն վեր կ'ելլեմ, առաջին յարկը դրան մը վրայ կը կարդամ հայերէն «Արմէնիա» բառը, որ վայրկենի մը մէջ կ'ոգեւորէ զիս: Կը զարնեմ դուռը, բայց ոչ ոք կը պատասխանէ: Ու կը պատրաստուէի վար իջնել, երբ տեսայ մէկը որ խարխափելով վեր կ'ելլէր:

Միջանցքը թէեւ մութ, սակայն դժուարութիւն չքաշեցի ճանչնալու Փորթուգալեանը, որ մազերու ճերմակէն զատ ուրիշ շատ փոփոխութիւն մը չէր ցուցներ:

— Բարեւ, կ'ըսեմ:

Երեսս կը նայի, պի՛շ պի՛շ, կ'երեւի զարմացած ընտանի ձեւերէս:

— Կը ներէք, չեմ ճանչնար ձեզ, կը պատասխանէ:

Ինքզինքս կը ներկայացնեմ:

— Օ՛հ, կը բացագանչէ, տղայ ձգեցի քեզ, մինչ այժմ մեծցած ու փոխուած ես:

Ներս կը մտնենք փոքրիկ սենեակ մը, կուտակուած և խառն ի խուռն: Մէկ կողմը «Արմէնիա»ի հաւաքածոները դիզուած են, ուրիշ տեղեր այլ թերթեր և գիրքեր, և մէկ ծայրն ալ անշուք սեղան մը, որուն առջեւը կ'երթայ նստիլ Փորթուգալեան, իր հանապազօրեայ աշխատութեան գլուխը:

«Արմէնիա»ն այդ միջոցներուն շարթու մէջ երկու անգամ կը հրատարակուէր, եւ Փորթուգալեան ոչ միայն ստիպուած էր թերթերուն խմբագրութեամբը և սրբագրութեամբը զբաշելու, այլեւ անձամբ, և գրեթէ միայնակ, կը գրէր հասցէները:

Աշխատելով հանդերձ, սկսանք խօսիլ անցեալէն ու մօտէն: Անվերջ խօսակցութիւնք և հարցումներ՝ այլադան նիւթերու շուրջ:

Քանի մը օր վերջ, Փորթուգալեան, զոր այլեւս ամէն ատեն կը տեսնէի, մօտ երկու քուկէս ամիս Մարտէյլ մնացած միջոցիս, զիս իրենց տունը հրաւիրեց ճաշի:

Փողոցին անունը այժմ չեմ յիշեր, սակայն այնպէս կը կարծեմ որ Քոլէժին դիմացն ըլլալու էր, բաւական աղէկ փողոցի մը մէջ: Ինքը

կ'առաջնորդէր զիս և անգամ մը տանը մէջ, անվերջ սանդուխէ մը կը սկսինք վեր բարձրանալ՝ ոլորապտոյտ՝ ինչպէս Մարսէյի տուներունը:

— Դեռ չհասանք, կը դառնամ քանիցս Վարպետիս, շնչասպառ և յոգնած:

— Չէ՛, կ'ըսէ ժպտագին, քչիկ մըն ալ, ու կը հասնինք:

Վեցերորդ թէ եօթներորդ յարկը կը բնակէին:

Ճաշէն վերջ պատշգամ կ'ելլենք: Դիրքը, այդ բարձրութենէն մանաւանդ՝ հիանալի էր: Բաղքին համայնապատկերէն մաս մը մեր առաջը կը պարզուէր: Վարը, ահագին խորունկութեամբ մը փողոցին մէջ եռուղեռ, և ինձ համար անսովոր անցուղարձ մը, ոգեւորութիւն մը կը սփռէր ամենուրեք:

Ու կը շարունակենք, մի՛շտ, խօսիլ ներկայէն, անցեալէն: Այնքա՛ն և անսպառ բաներ կային խօսելիք:

— Տուներնիդ աղէկ է, ըսի հուսկ ապա, դիրքը սիրուն եւ աննման, միայն եթէ բարձր, շա՛տ բարձր և երկնքին այնքան մօտ չլլա՛ր:

— Արդարեւ, պատասխանեց: Լսած կ'ըլլաք, անշուշտ, թէ ի՛նչպէս ամէն կողմը տարածայնուած է թէ Փորթուզալեանը ազգին դրամով Մարսէյը հաստատուած, հոս, այս քաղաքին մէջ վեց, եօթը, մեծ տուներու և ապարանքներու տէր եղած է:

— Ի՞նչ կ'ըլլայ, թո՛ղ ըսեն, կը յարեմ ես խնդալով, դուք ալ այնպէս կը համարէք թէ այնպէս է: Ատկէ ի՛նչ կ'ելլէ:

— Բան մը չելլեր, վրայ բերաւ թախծագին: Ճիշտ տարածայնած են, արդարեւ, բայց փոքր տարբերութեամբ մը... Փորթուզալեանը չէ թէ վեց, եօթը տուներու տէր է, ինչպէս թշնամիներս կ'ըսեն, այլ տան մը... վեցերորդ թէ եօթներորդ յարկին մէջ հազիւ կարող կ'ըլլայ բնակութեան տեղ մը գտնել իր բազմաթիւ ընտանեաց համար...: Ահա՛ ճշմարտութիւնը:

... Ու անկէ ի վեր, որքա՛ն տարիներ:

ՄԻՔ. ՆԱԹԱՆԵԱՆ

Մերսին



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Կ Ա Մ Ք Ը

Երբ անցնին՝ փարատին վերջապէս, — մի՞թէ կարելի է, à la Լէօփարտի, սպաննել մեր սրտին մէջ յոյսի ամէն ճառագայթ և հաւատալ որ երբեք երբե՛ք պիտի չփարատին անոնք, — մահու և հրդեհի ծիրանի ամպեր մեր երդիքներուն վրայէն, և հայ մտաւորականը իր գրչով ու Հայ հողագործը իր արօրով կարենան անձնատուր ըլլալ երկարաշունչ, ինքնավստահ և արդիւնաւոր աշխատանքին վայելքներուն, հա՛րկաւ, այն ատեն, ծնունդ պիտի առնէ պատմագիրը որ պիտի ուզէ քննել եւ լուսաբանել, բազմակողմանի ուսումնասիրութեամբ, այն խոշոր՝ գրեթէ անչափելի դերը զոր խաղացեր է ու կը շարունակէ խաղալ Պոլիսը հայ ժողովուրդի ընկերային և քաղաքական կեանքի բոլոր արտայայտութիւններուն բնաշրջման դարաւոր processusին մէջ, — հայ անկախ պետութեան ջնջումէն կամ նոյնիսկ դեռ անկէ ստաջէն սկսելով:

Բայց հիմակուրնէ իսկ, դեռ չհասած երջանկութեան այդ օրերուն, միայն ի բաց առնելով խնդրին մանրամասնութիւնները ու կանգնելով պահ մը Սփէնսերեան այն տեսակէտին վրայ, ըստ որում մարդկային ընկերութիւնը և իր ստորաբաժանումները կ'ապրին ու կը զարգանան յար եւ նման անասնական կամ բուսական աշխարհներու կենդանի գործարանաւորութեանց, ասոնց վերաբերեալ բոլոր յատկութիւններով և պաշտօններով (ֆօնքսիօն), — ջղային դրութիւն, արեան շրջան, ինքնապահպանման բնազդ եւ այլն, — կարելի կ'ըլլայ ճշտել, grosso modo, մեր հայ ազգային օրկանիզմին մէջ, Կոստանդնուպոլսոյ գրաւած դիրքը. — գլուխը՝ ուղե՛ղն է ան, ըստ իս:

Անշուշտ բացատրելի և մինչև անգամ հասկանալի են այն բազմադան ու բազմաթիւ պատճառները, բարոյական և նիւթական, քաղաքական և տնտեսական, — ամէ՛նքն ալ սակայն արտածին, այսինքն՝ ծնած անկախաբար մեր ժողովուրդի ենթակայական տրամադրութիւններէն ու կամքէն, — որոնց համար տեղի է ունեցեր այդ հրէշային տարականոնութիւնը և մեր հասարակութեան անհատական թէ հաւաքական կենցաղին ղեկավար մեքենան գոցեր զետեղուեր է, ա՛յդպէս, այլանդակօրէն, մարմնէն դուրս, մարմնէն փարսախներով հեռու, մարմնին հետ հաղորդակից՝ միայն արուեստական կապերով:

Բայց պատճառներուն մեկնութիւնը չի փոխեր իրողութիւնը որ կը մնայ անվիճելի. — Պոլիսը եղեր է ու կը շարունակէ ըլլալ հարիւրաւոր տարիներէ ի վեր, Հայութեան, այսինքն այն ժողովուրդին, որուն ազգագրական սահմանները, ամէն պարագայի տակ, չեն անցնիր Ալիսէն ա-

րեւմուտք, կրթական, ընտանեկան, հանրային ու համապետական պահանջներուն ու իրաւունքներուն բաւարարութիւն տալու կոչուած միակ աղբիւրը:

Եւ այս անբնականութիւնը, այս տարկանոնութիւնը՝ որուն համեմատութիւնները ժամանակի ընթացքին մեծցեր են և հետզհետէ աւելի աչքառու դարձեր այնչափով որչափով որ հայ ժողովուրդը բարձրացեր է ինքնագիտակցութեան ու քաղաքակրթութեան աստիճաններուն վրայ, եղած է, ըստ իս, կեդրոնական, գլխաւոր պատճառը, *suprema causa*, մեր բոլոր անհաշուելի տուայտանքներուն, մեր բացառապէս զարհուրելի ու ողբալի պատմութեան, մեր պայքարներու աղետաւոր ապարդիւնութեան և հետեւաբար նաև մեր փրկութեան յամեցումին...

Մակերեւութային դիտողներ, արագ ընդհանրացման տենդով տարւած աժան հմտութեան ասպետներ տուին մեր տանջանքներուն եւ մեր անյաջողութիւններուն համար ամէն գոյնի մեկնութիւններ, հիմնուած տնտեսագիտական վարդապետութիւններու կամ հոգեբանական վարկածներու վրայ, քննադատեցին հայ ժողովուրդի ծոցին մէջ դիմադրական ուժի չգոյութիւնը կամ անբաւական գոյութիւնը, քննադատեցին մանաւանդ մեր՝ այնքան կրկնուած ու ծամծմուած անմիաբանութիւնն ու անհամերաշխութիւնը և չկրցան տեսնել որ այդ բոլորը կայ, այո՛, բայց ամէնքն ալ եկրասպասնաւոր են միայն, որ անոնց բոլորին մայրը, այդ բոլոր պասնաւորուն պասնաւոր այն է որ մեր հաւաքականութեան ուղեղը, մեր օրէնսդիր և գործադիր մարմինները, մեր՝ եթէ ոչ իրական բայց օրինական և պաշտօնական ընտրեալները, մէկ խօսքով բոլոր անոնք որ Հայութեան անունով դատելու, կամենալու և վճռելու և իրենց վճիռը գործադրելու իրաւունքն ու զօրութիւնը ունին ի ձեռին, կը գտնուին Պոլիս, հեռո՛ւ Հայաստանէն, հեռո՛ւ մարմնով և հոգևով...

Իսկ եթէ ա՛յդպէս չըլլար...

Եթէ այդպէս չըլլա՛ր... մենք կ'ուեննայինք թէ՛ տնտեսական լուազոյն պայմաններ, թէ՛ մշակութական և առհասարակ բարոյական բարձրագոյն տրամադրութիւններ և հետեւաբար նաև դիմադրական աւելի մեծ ուժ ու աւելի մեծ միաբանութիւն, աւելի վեհանձնութիւն, աւելի սէր և համերաշխութիւն՝ աւելի խոր՝ որովհետև հիմնուած՝ ոչ թէ բարոյագիտական տեսութիւններու կամ ներշնչումներու, այլ փոխադարձ շահերու և զգացումներու համանմանութեան իրական ու ապահով գետնին վրայ:

Մի՞թէ անհրաժեշտ է ըլլալ խելացի ինչպէս Սոկրատ, կամ հմուտ ինչպէս Պէրթըլօն, ըմբռնելու համար որ եթէ մեր աղգային նաւուն ղեկը չըլլար անջատուած մարմնէն ու նետուած Մարմարայի ափերուն, առաջաստը շատ աւելի լայն կ'ուռչէր, — որովհետև հաստատուն է կտաւը և քամին ուժեղ՝ մեր ժողովուրդի ծով հոգիին վրայ, — և մենք այն ատեն, աւելի արագ, արծիւի՛ պէս արագ կը սուրայինք դէպի ազատութեան ու քաղաքակրթութեան լուսեղէն հորիզոնները, որոնց երազովը ապրեցան ու խամրեցան մեր մէջ ամբողջ սերունդներ:

Այսպէս տրամաբանելով, ես կը յանգիմ իբրև եզրակացութիւն, ինծի համար հետզհետէ աւելի ամրակուռ և անխորտակելի այն համոզման թէ հայ ժողովուրդը՝ արտաքին, քաղաքական կամ համապետական բնոյթ կրող իր այնքան արդար ու օրինաւոր պահանջներուն ու պայքարներուն մէջ պիտի չհասնի երբեք որ և է դրական արդիւնքի, մինչեւ որ չկասարե իր ներքին անհրաժեշտ, հրամայական յեղափոխութիւնը, մինչեւ չսիրանայ իր ուղեղին, այսինքն մինչև որ գոյութիւն չառնէ իսկական հայ կաւիք, իր բնական օրրանին՝ Հայաստանի մէջ, սնուած Հայաստանով և նոյնիբոլա՞ծ Հայաստանին:

*
* *

Մկրտիչ Փորթուգալեանը՝ այդ փառաւոր ու հնաւուրց գործիչը՝ ծընած ու մեծցած Պոլիս, բայց յափշտակուած՝ Հայաստանի մէջ Հայ Կամքի մը ստեղծման գաղափարով և զոհուած անոր, իր կեանքովը ներշնչեց ինծի, այս խորհրդածութիւնները:

Որքան քիչ են այդպիսիները, աւանդ, — քանի մը աստղեր միայն, մայրաքաղաքի հարիւր հազարաւոր Հայերու հողիներուն մռայլ երկրնքին վրայ...

Փարիզ

Բ. ՇԱՀՊԱՋ



ՅՈՒՇԵՐ ԱՆՑԵԱԼԷՆ

Իեռ մանուկ էինք, աշակերտներ Վասպուրականի Արարուց Թաղի դպրոցին, երբ Փորթուգալեան օր մը հանդիսաւորապէս խօսեցաւ բեմէն. —

«Փոքրիկ մ'էի. մեր ուսուցիչները մեզ գոց ընել տուած էին «Քրիստոնէական»էն կտորներ, զոր առանց հասկնալու, բառերու կոտորով արագ արագ դուրս կը թափէինք մեր բերաններէն. երբ կարգը ինծի եկաւ, ու աշխուժով կ'արտասանէի, իբր ըմբեան Հայրիկը ինձ իր մօտ կանչեց, շոյեց գլուխս ու ըսաւ. «Ապրի՛ս դաւակ, մեծցի՛ր, քեզ Հայաստան կը տանիս»: Այդ օրէն՝ երեւակայական դգացումներէ տպաւորուելով, յուզուեցայ «Հայաստան» բառէն, ու ես սկսայ հետզհետէ հետաքրքրուիլ գիտնալու համար, թէ ի՞նչ տեղ է Հայաստանը ուր պիտի տանի ինձ Հայրիկը. այնուհետեւ Հայաստանը իմ մտածումներուս կեդրոնը դարձաւ, և այսօր, բաղդի մէկ բերումով դաւակն ու իր Հայրիկը Հայաստան կը գտնուին ու մէկ նպատակի համար կը գործեն:»

Այդ շրջանին Փորթուգալեան կը խօսէր բոլոր եկեղեցիներու, դպրոցներու և լսարանական հաստատութեանց բեմերէն: Ինքն էր հաստատած բեմերը, ընկերութիւնները կազմելու ծրագիրը ինքն էր տուած. ինչպէս «Հայրենասիրաց Սանուց»ը և զանազան անուններով ընկերութիւններ:

Իւրաքանչիւր բանախօսութեան յայտարարութիւններ կը փակցուէին թաղերը և նոյն իսկ շուկաներու դուռներու և պատերու վրայ : Կը յիշեմ մասնաւորապէս մէկ նիւթը . «Ժամանակը հասած է, ի՞նչ անենք» :

Այդ օրինակելի ուսուցիչը և քաջ հռետորը, լռիկ մնջիկ, դպրոցական պարտականութիւններէն ազատ ժամերը զոհելով, շաբաթը երեք անգամ հետիոտն (երեք ժամու հեռաւորութիւն Այգեստանէն) Վարազ կ'երթար, «Արծիւ Վասպուրականի» ի հին մամուլի տառերուն վրայ գրաշարութիւն սորվելու ու մենք կը կասկածէինք թէ այդ բոլորը կ'ընէ Վանի փոշին թօթուելու և Պոլիս դառնալու համար, չկրնալով թափանցել իր հեռաւոր նպատակներուն :

Փորթուգալեանի մեծ գործերէն մէկն եղաւ և այն, որ իբրեւ նախակարապետ, ջանաց կովկասահայ միտքը պատուաստել թրքահայ միտքին, Հայութեան երկու հատուածները տեսականապէս և գործնականապէս յարաբերութեանց մէջ դնելու, ազգային խզուած կապը միացնելու : Ոչ միայն աշխատակից մըն էր Արծրունիի «Մշակ»ին, այլև գործիչ մը կովկասի մէջ : Միշտ կը ճանապարհորդէր այնտեղ և կը գործակցէր նոյն շրջանի առաջաւոր մտքերու հետ, այնպիսի ժամանակ մը, որ թուրքահայի մը ներկայութիւնը կովկասի մէջ՝ հազուադէպ երեւոյթ կը նկատուէր և քաղաքական յանցանք : Հայաստանի լսարանական բեմերու վրայ տաճկահայ երգերու հետ համընթաց կ'երգուէին կովկասահայ երգեր, կ'արտասանուէին անոնց գրողներէն առնուած կտորներ, ինչպէս «Ձեռներս կապած, ոտներս շղթայ, — Կ'ասէ Եւրոպան է՞ր չելաք ոտքի, — Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չկայ, — Տարէք կրեցէք դուք կեանք ստրկի» : — Վասպուրականի գրադարանները թրքահայ գրքերու կից ունէին կովկասահայ գրականութիւնը, — Բաֆֆիի հեղինակութիւնները, Ստեփաննոս Նազարեանի երկերը, Գրիգոր Արծրունիի «Մշակ»ը, Քամառ Քաթիպայի, Աբովեանի, Նալպանտեանի և ուրիշներու երկեր : Վարժապետանոցի և Կեդր. Դպրոցի մէջ, Փորթուգալեան պաշտօնի կոչած էր նաև ուսսահայ ուսուցիչներ :

Այդ գործունէութեան ընթացքին ալ վարդերու վրայ չէր որ քալեց : Խոչընդոտները այնքան շատ էին, ազիտութիւնը այնքան խոր, մանաւանդ թշնամիները այնքան ուժեղ, որ վերջ ի վերջոյ կաշկանդեցին զինքը Հայաստանի մէջ : Վարժապետանոցէն յետոյ փակուեցաւ և իր հիմնադրած Կեդր. Վարժարանը : Հալածանքը կը սաստկանար Հայ Գրականութեան և Լեզուին դէմ, կ'արգիլուէր բեմերէն խօսիլ հայ լեզուով : Կառավարական պաշտօնեաները բանախօսներու կողքին կանգնած, ճնշում կը բանեցնէին անոնց վրայ, և բազմաթիւ սուինակիր զինուորներ կը հսկէին :

Այս շրջանին մէջ լսարանները եւ կազմուած ընկերութիւնները կը քայքայուէին : Խուզարկութիւնները սովորական դարձած էին : Այլ եւս գիրք պահել կարելի չէր : Ամէնէն վերջը, ու վերջին անգամն ըլլալով Փորթուգալեանն ալ կը վտարուէր հայկական հողէն ու Պոլիս կը դըր-

կուէր: Ինչպէս գիտենք, Պոլիս ալ չկրցաւ մնալ և անցաւ Մարտէյլ, ուր հիմնեց իր տպարանը և «Արմենիա»ն:

Ահա մէկ քանի քաղուածներ «Արմենիա»ի առաջին համարներու մէջ յայտնուած մտքերէն.

«Իբր Հայ մեր պարտքն է լաւ ճանչել մեր Հայրենիք — Արմենիան. ուսումնասիրել այդ աշխարհը, տնտեսական, վարչական, կրթական, վիճակագրական և այլն տեսակէտներով:»

«Մի Ազգ կրնայ օտարների ուշադրութիւնը իւր վրայ դարձունել կամ գէնքով, կամ խելքով կամ դրամով: Արդ, մենք ի՞նչ կանենք, ոչ գէնք կը բարձրացունենք (և մեր դիրքն ալ չ'պահանջեր այդպիսի բան գէթ առայժմ), ոչ խելք կը բանեցունենք, եւ ոչ ալ դրամ ծախսել կ'ուզենք. մենք ոչ միայն չենք գործեր, այլ դեռ չենք խօսիր անգամ:»

Փորթուգալեանը այդ ժամանակի հայկական տրամադրութիւնը կը բնորոշէ «բողոքելու և լալու մանկական չըջան» անունով:

Երբ Հայաստանի մէջ բռնութիւնները անտանելի կը դառնան և անոնց ձայնը «Արմենիա»ի միջոցաւ արձագանգ կը գտնէ արտասահմանեան Հայերու մէջ, և երբ կազմակերպուելու, և Հայաստանի մէջ յեղափոխութիւն ընելու առաջարկներ կ'ըլլան, «Արմենիա»ն կը պատասխանէ.

«Գործելու համար զոհողութիւն հարկաւոր է, պէտք է 'ի հարկին զոհել մեր ժամանակ, մեր դրամ, մեր անձ եւ ինչ որ կրնանք: Եւ այդ զոհողութիւններ արդիւնաբեր անելու համար պէտք էր Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ և այլ ուրեք սփռուած Հայեր միանան, ձեռք ձեռքի տան, համատարած մի զօրաւոր ընկերութիւն կազմակերպեն այս նպատակի համար, ազատ մի տեղ կեդրոն անեն, և սկսեն այնպիսի զօրաւոր միջոցներով գործել որ կամայ ակամայ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրեն իրենց արդար դատի վրայ:»

Այնուհետեւ է որ Եւրոպայի մէջ կը կազմուի «Հայոց Հայրենասիրական Միութիւնը», որ ըլլալով ասրբեր գաղափարներու տէր անձերու Միութիւն մը, տեղի կուտայ, և երեւան կուգան բուն քաղաքական կուսակցութիւնները:

Յ. ՇԱՀՊԱՋԵԱՆ



Ն Ա Խ Ա Կ Ա Ր Ա Պ Ե Տ Ը

Մ. Փորթուգալեանի յրբեկեանի առիթով գրիչ ձեռք առնողը՝ նրա կեանքին հետեւած և նրա հասարակական բոլոր գծերին ծանօթ պէտք է լինի, որպէս զի Հասարարական Մարդը իր ամբողջութեամբը դուրս բերէ ու ըստ այնմ արժանի յարգանքը ընծայէ: Այդ բաղդը կամ պատեհութիւնը ես չեմ ունեցել:

Յիշում եմ միայն պատանեկութեան և երիտասարդութեան առաջին օրերից ստացած տպաւորութիւններս: Այն ժամանակ եւս Բալքանները փոթորկուած էին, ազգերի մրցման և գոյութեան գօտեմարտը իր կատաղի աստիճանին էր հասել: Մենք էլ էինք զգում սրտերի տրոփումը, ինչ որ անորոշ անձկութիւն՝ որ մեր ամբողջ հոգին էլ էր խորասուզ-

ուած երազների ու տենջանքների աշխարհի մէջ, արդ հմայքը մեզ կապտում էր, և նրա իրականացման համար կարծում էինք զգալ թէ պատարաստ կը լինենք մեր կեանքն իսկ զոհել:

Բայց ո՞ւր և ի՞նչպէս...

Այդ օրերին էր որ Փորթուգալեան նախաձեռնարկ եղաւ առաջին կազմակերպման: «Վարազդատեան» Ընկերութիւնն էր այդ, որ ըստ երեւոյթին պիտի ծառայէր լսարան — ընթերցարանի:

Գաւառ վերադառնալուց առաջ, Պոլսում տեսել էի լսարան ընթերցարաններ: Բայց «Վարազդատեան»ը այն Պոլսականներին չի նմանեցաւ, մի շարք գաւառներ արձագանգ տուին, ամենուրէք Վարազդատեանների ցանցը պատեց ու դարձաւ մի կազմակերպութիւն՝ իւրաքանչիւրը իւր տեղական ինքնավարութեամբ: «Վարազդատեան» սրահները դարձան մեր ժամադրավայրերը:

Այնուհետեւ ծայր տուին սև օրերը նաև «մեր աշխարհում», 1876-78ի պատերազմի մեծ ողբերգութեան վարագոյրը չիջաւ առանց Հայկական կոտորածի ու սովի: Համիտեան հակահայ հալածանքը սկսել էր և փախուստի դիմելու ստիպուածներից մին էլ Փորթուգալեանն եղաւ:

Ինքնատարագիրի առաջին աշխատանքը եղաւ հիմնել Արմենիան՝ որ, եթէ չեմ սխալւում, եղաւ առաջին յեղափոխաչունչ օրգանը, որի անուամբ մկրտուեց առաջին յեղափոխական կազմակերպութիւնը Թրքահայոց մէջ: Բայց Փորթուգալեան իր ամբողջ հոգին դրած եղաւ իւր «Հաւատամք»ին մէջ, և որ կը ցանկար տեսնել Հաւատքը ամբողջ հայ սերունդին:

Հասնող սերունդը Արմենիայով ու Արմենակալով չը բաւականացաւ, մտքերի ու դէմպէրամենտների էվօլյուսիօնը՝ ներշնչուած Հիւսիսի կուլտուրայից և առաջնորդուած Մասեաց սարբերի դաւակներից՝ նոր օրգաններ և կազմակերպութիւններ ևս ստեղծեց, որոնք իրանց կնիքը դրին առնուազն վերջին քառորդ դարի հայկական վերազարթնումի վրայ, սակայն անպայման առաջնութեան իրաւունքը, նախակարապետի ինքնարուղիս առաքելութիւնը Փորթուգալեանինն է:

Ինձ թւում է թէ, 1875—85 թուականների թրքահայ սերնդի այն փոքրաթիւ մասը՝ որ նուիրուել էր հասարակական դատին և գնաց միանալու երեք յեղափոխական կուսակցութիւններից մէկն ու մէկին, անպայման կրել է Փորթուգալեանի ու նրա «Հաւատամք»ի սկզբնական ազդեցութիւնը: Աւելին կ'ասեմ, Փորթուգալեան մինակը եղաւ Թրքահայոց մէջ և մինակը մնաց իբրև հիմնադիր ու կազմակերպիչ ըմբոստացման՝ ընդդէմ բռնապետութեան:

Եւ իբրև այդպիսին եմ տեսնում նրա մեծութիւնն ու արժանիքը, և իբրև այդպիսին եմ բերում նրան իմ ակնածանքի ու յարգանքի հաւաստիքը:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ

Մ Ա Ր Տ Ն Չ Ո Ղ Ը

Մ. Փորթուգալեան ունեցած է, արդարև, կորովի և անբաւար գործունէութիւն մը, արժանի՝ ամէն անկեղծ հիացումի: Անիկա ճանչցած և ապրած է ցաւերը, յուզումներն ու փոթորիկները Հայաստանի՛ն, որուն վերածնութեան ի սպաս դրած է միշտ իր բաղձանքները, մտածումները, սիրան ու անյողդողդ հոգին:

Փորթուգալեան՝ մին է այն «առաջին հայ խռովարար»ներէն, որոնք անդրդուելի կամքով մը մարտնչեցան՝ Արդարութեան յաղթանակը փութացնելու համար տառապանքի այս դասական Երկրին մէջ:

Հայ Ազգը երախտապարտ է իր այդ անձնուէր գործիչին: Ու պէ՛տք էր որ իր երախտագիտութեան հաւաստիքը տար՝ ինքնաբեր և մաքուր համակրանքի ուժգին արտայայտութեամբ մը:

Բռնութեան տխուր կամակատարները՝ չափազանց հալածեցին երբեմն Մկրտիչ Փորթուգալեանը, որ սակայն ժայռի մը պէս անխախտ կեցաւ իր գաղափարներու պատուանդանին վրայ: Վարագի մէջ՝ իր «Գութան»ը, Կ. Պոլսոյ մէջ՝ իր «Ասիա»ն խափանեցին, ու իր խանդավառ գործունէութեան կրակը մարել փորձեցին՝ Եւզոկիոյ բանտը նետելով զինքը, շղթայակա՛յ և սպառնազին: Մ. Փորթուգալեան՝ ամէնէն դժժնդակ պարագաներուն տա՛կ իսկ, կրցաւ սակայն՝ ապացուցանել, թէ ՄԱ՛ՐԴ մըն է ինքը, օժտուած՝ հոգեկան ուժով և գաղափարական վրձնականութեա՛մբ մը, որ չի գիտեր տեղի տալ:

1880ական թուականներուն, Բռնութիւնը հետզհետէ սաստկացուցած էր Հայոց հանդէպ իր խստութիւնները: Ինքալքումին և Սարսափին լռութիւնը կը տիրէր ամէն կողմ: Տաճկահայ ժողովուրդը ցնցելու, դժգոհելու և դէպի նոր ու շքեղ կեանք մը շարժելու համար, ուժգին և ոգեւորիչ ձայն մը բարձրացնել անհրաժեշտ էր դարձեալ: Ու ահա՛, Փորթուգալեան՝ ինքզինքը նետեց Մարսիլիա, ուր ծնունդ տուաւ իր «Արմենիա»ին, որ հայ յեղափոխական շարժումին առաջին հուժկու ազմերգը հնչեցուց: Ամբողջ քառորդ դար մը, իր կամաւոր աքսորավայրէն, Փորթուգալեան՝ իր հայրենանպաստ գործունէութիւնը շարունակեց՝ առանց վայրկեան մը դասալքութեան վատութիւնը յանձն առնելու: Այսպիսի անձնաւորութեան մը հանդէպ, յարգանքի հանդիսաւոր ցոյց մը կատարելով, հայ ժողովուրդը՝ ո՛չ միայն անխուսափելի պարտականութիւն մը կատարած պիտի ըլլայ, հապա նաև՝ հաստատած թէ իր հաւաքական նկարագրին մէջ հղօր տեղ մը ունի այն ազնիւ զգացումը, որ գիտէ անշահախնդիր անձնաւորութիւնները զնահատել:

Բռնութեան անողոք հալածանքները շարաշար վտարած էին Փորթուգալեանը այս Երկրէն, ուր անիկա սերունդներ կրթած է՝ հայրենա-

սիրական գիտակից զարթումի մը առաջնորդելով զանոնք: Ազատութեան բարեկամներուն պիտի վիճակուէր, այսպէս, հրաւիրել զինքը Կ. Պոլիս, ուր ծնած ու մեծցած է և ուր՝ մարտնչող հրապարակագրութեան խիղախ ու անհաշտ ուղղութեամբ մը՝ ցցուած կեցած է, երբեմն, ընդդէմ ամէն յետադիմութեան, ամէն նախապաշարումի, ամէն ստրուկ համակերպումի: Փորթուգալեան, հայրենասիրութեան Խրիմեանն էր, եթէ կարելի է այսպէս բացատրել: Եւ իրաւամբ արժանի է՝ ա՛յս յորելեանական տօնին: Այս հանդէսը կրկնակի սիրելի է, որովհետեւ Կ. Պոլսոյ մէջ, անդրանիկ տօնախմբութիւնը պիտի ըլլայ ան՝ ի պատիւ հայ յեղափոխական հայրենասէրի մը, որ Փոքր Հայքէն մինչև Մեծ Հայք, ազգային ստրկութեան համապարփակ խաւարին մէջ Վերագարթումի լոյսին շողերը նետեց՝ առողջ, մաքուր և յանդուգն սկզբունքներով զինուած:

Պիտի ուղէի որ հայկական նոր սերունդը ուշադրութեամբ սերտէր Մ. Փորթուգալեանի բեղմնաւոր կեանքը, զոր ապրած է ան, Կ. Պոլսէն մինչև Վասսուրական, որ ազնիւ և անձնուրաց Նուիրում մը եղած է և որուն հետեւողներու պէտք ունինք՝ բարոյական և մտաւորական ճշմարիտ վերածնութիւն մը ապահովելու համար մեր սգաւոր բայց կենսունակ Ազգին, որ լաւագոյն ճակատագրի մը իրաւունքը ունի այս Երկրին մէջ:

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄՅԱՆ



Ո Ւ Ս Ո Ւ Ց Ի Չ Ը

Բումէլի Հիսար, այդ անընտել և գրեթէ ամայի գիւղը, որ իր բարձրաբերձ, ապառաժուտ պարիսպներովը, կարծես, կը տիրէ ամբողջ Վոսփորի վրայ, ինձ համար նուիրական վայր մը դարձած է:

Այդ գիւղին մէջ ամէն ինչ — լեռ, ծով, քար, հող, տուն, դպրոց և եկեղեցի—լեցուն են անուշ թէ դառն յիշատակներով, որոնք ամբողջ կեանքս, էութիւնս կը կազմեն:

1875—80 թուականներուն ուսանող էի Հիսարի ազգային վարժարանին մէջ:

Ծովահայեաց դիրքով և պարիսպներուն պէս ապառաժուտ բարձունքի մը վրայ կառուցուած այդ կրթական շէնքը, այն ատենները Գառնիկ Սէֆէրեան անուն անձնուէր հոգաբարձուի մը ջանքերուն շնորհիւ, շատ բեղուն և բարեկարգ վիճակ մը ունէր:

Այն ժամանակուան ամէնէն համբաւաւոր և առաջնակարգ ուսուցիչները, Խաչատուր Միսաքեան, Ռէթիկ Հօճա, Սիմօն Միքայէլեան,

Պաղճեան վարդապետ, Վահան վարդապետ և ուրիշ շատ մը կարող ուսուցիչներ պաշտօնավարած են այդ վարժարանին մէջ :

Այս յիշած անուններէս զատ ուրիշ անձնուէր ուսուցիչ մըն ալ ունեցած ենք, որուն պաշտօնավարութիւնը միւսներէն շատ աւելի օգտակար եղած է մեզ համար :

Այդ ուսուցիչը՝ Մկրտիչ Փորթուգալեանն էր : Այն ատեն տակաւին երիտասարդ և եռանդուն, իր անկեղծ ու անշահախնդիր հայրենասէրի տաք շունչովը մեր ամենամատաղ հոգիներուն մէջ վառեց հայրենիքի սէրը և ամէն բանէ աւելի սորվեցուց մեզ սիրել մեր դժբաղդ ազգը և աշխատիլ միշտ անոր բարօրութեանը համար :

Կը յիշեմ, որ մը, հիւանդ վիճակի մէջ եկած էր մեզի դաս տալու, և երբ ճաշի ատեն իր ձիթապտուղ-հացը ուտելով միեւնոյն ատեն մեր պարտականութիւնները կը սրբադրէր, դիտել տուինք իրեն թէ այդ կերպով աւելի պիտի հիւանդանայ. ինքը սապէս պատասխանեց մեզ. «Լաւ է որ մարդ քիչ ապրի, բայց օգտակար ըլլայ, քան թէ երկար ապրի և բան մը չընէ» :

Այս խօսքերը մեծ արժէք մը չպիտի ներկայացնէին մեզ հիմա, երբ միայն խօսք մնացած ըլլային : Անկէ ի վեր մօտ քառասուն երկար տարիներ անցած են և Մկրտիչ Փորթուգալեան միշտ հաւատարիմ մնացած է այդ սկզբունքին, ապրելով կեանք մը դառն ու զրկուած, բայց միշտ օգտակար ուրիշներուն, միշտ օգտակար իր սիրեցեալ հայրենիքին ու ազգին :

Ես այսօր իմ յարգելի Վարպետիս քառասնամեայ յօբելեանին առթիւ, իրեն նուիրելու համար «ոսկի և արծաթ» շունիմ, բայց երախտագիտութեամբ կուգամ յայտարարել թէ, ամբողջովին իրեն կը պարտիմ յեղափոխական գործիչի անունս, թէպետեւ աննշան, բայց միակ պարծանքը ամբողջ կեանքիս :

Մէկ քանի ամիս առաջ ողբացեալ Զաւարեանի յուղարկաւորութեան հանդէսին մէջ Պ. Խաժակ օրուան վշտին դառնութեանը տակ ընկճուած, խօսած ատեն, «Երիտասարդ բարեկամներ, ըսաւ, ապրեցէ՛ք, բայց մեզ պէս մի՛ ապրիք» :

Յաւած հոգիէ մը բխած այս խօսքերը, որ մեզ, բոլորս յուզեցին այն օրը, փոխ պիտի առնեմ հիմա և քիչ մը փոխելով պիտի ուղղեմ զայն մեր նոր սերունդին .

— Հայ երիտասարդներ, ապրեցէ՛ք, բայց Զաւարեաններու, Փորթուգալեաններու պէս ապրեցէ՛ք. ի՞նչ փոյթ-թող դառն ըլլայ այդ կեանքը, անիկա հազար ուրիշ կեանք կ'արժէ :

Ե. ԶԱՎԱՐԵԱՆ



Յ Ի Շ Ո Ղ Ո Ի Յ Ի Ի Ն Ն Ե Ր

ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՆՈՒԷՐ

... 1876 թուականն էր: Վանի շուկան հրդեհուած, Հայերու ամբողջ հարստութիւնը փճացած և ժողովուրդը մոխիրներու վրայ նստած՝ իր սեւ բաղդը կուլար, երբ Փորթուգալեան, անցնելով Փոքր Հայքէն, շրջելով Հայաստանի զանազան գաւառները, Վան կը մտնէր:

Երիտասարդ Փորթուգալեան, Վանեցիներու տառապանքին ականատես, կը շարժէր իր կրակոտ գրիչը և իր յօդուածներով Պոլսահայ Մամուլը կը յուզէր:

Բ. Դուռը, վրդովուած ու ցասկոտ, Վանի միւթէսարըֆին՝ (պատերազմէն ետք միայն Վան կուսակալութեան վերածուեցաւ) Հասան փաշային կը հեռագրէր. «Փորթուգալեանը շղթայակապ Պոլիս ուղարկեցէ՛ք»: սակայն բարեբաղդաբար Ներսէս Պատրիարք կը յաջողէր աւելի շուտ հեռագրելու. «Փորթուգալեան թող անմիջապէս հեռանայ Վանէն»:

Ռուս-տաճկական պատերազմի նախօրեակին էր: Փորթուգալեան կը յաջողէր Պարսկաստանի վրայով կովկաս անցնիլ: Թիֆլիսի մէջ կը ծանօթանայ 19րդ Դարու մեր ամենամեծ հասարակական գործիչներէն մէկին՝ Մշակի հիմնադիր Գրիգոր Արծրունիի, և շուտով կը սկսի աշխատակցիլ անոր թերթին:

Նորահաստատ Արարատեան Ընկերութեան կողմէ Փորթուգալեան յատուկ պաշտօնով սկսած էր Հայաստան ճամբորդել, իր յարմար տեսած տեղը կեդրոնական դպրոց մը հիմնելու դիտաւորութեամբ: Արծրունին առաջինը կ'ըլլար Փորթուգալեանը քաջալերողը, այդ մտադրութիւնը իրագործելու համար, և բացի բարոյական աջակցութենէն, իր նիւթական օժանդակութիւնը կը խոստանար Արարատեան Ընկերութեան: Այս պարագան առիթ եղաւ որ Արծրունիի թելադրութեամբ և Փորթուգալեանի ջանքերով Արարատեան, Կիլիկեան և Դարոցասիրաց Ընկերութիւնները միանային «Հայոց Միացեալ Ընկերութիւն» անունով՝ որոշ ծրագրով մը գործելու Հայաստանի մէջ:

Ռուս-թրքական պատերազմը սկսած էր արդէն. Տաճկահայերու Դատը որոշ չափով կը հետաքրքրէր ռուսահայ մտաւորականութիւնը: Արծրունին այդ շարժման առանցքն էր, իսկ «Մշակ»ի խմբագրատունը՝ ոգեւորութեան հնոցը, ուր խմբուած էին ազգային վերածութեան մշակներ: Ատոնց մէջն էր և Փորթուգալեանը, առաջին Տաճկահայը, որ քաղաքական պատճառներով իրարմէ անջատուած և Մասիսի երկու կողմը ապրող Տաճկահայերու և Ռուսահայերու մերձեցման առաջին օղակը հանդիսացաւ:

Փորթուգալեան Թիֆլիս մնաց մօտ մէկուկէս տարի և Արծրունիի ներշնչումներով աւելի ոգեւորուած, պատերազմէն անմիջապէս ետք՝ Վասպուրական վերադարձաւ, Արծրունիի թելադրութիւններով ճոխացուցած իր ծրագիրը իրականացնելու: Այդ ծրագիրն էր՝ հիմնել վարժապետանոց մը, տալու Հայաստանցիին լոյս և կրթութիւն, ներշնչելու անոր ազատութեան սէր, վարժեցնելու զայն ինքնապաշտպանութեան գաղափարին և հասկցնելու հայ ժողովրդին՝ ի պահանջել հարկին ըմբոստանալ իր իրաւունքները բռնաբարողներուն դէմ:

Վասպուրականի Արծիւը արդէն վաղուց հիմնադրած էր Հայաստանի վերածնութեան գործը բուն իսկ հայրենիքի մէջ, հողը պատրաստ էր և Փորթուգալեան կուգար Հայոց Հայրիկի նոր ուղղութեան, գաղափարական նոր դպրոցի անձնուէր մշակը հանդիսանալու: Վարժապետանոցը կը դառնար ոգեւորութեան հնոց, ուր Փորթուգալեան կը յաջողէր դարբնել Ագրիպպասեաններու, Աւետիսեաններու, Գունտազճեաններու, Վազգէհներու, Ախիկեաններու նոր սերունդ մը, ներշնչելով անոնց հայրենասիրութեան և զոհաբերութեան ոգի:

1891ին, երբ Կլատսթոն, Անգլիոյ ազատականներու գլուխը անցած, Հայաստանի բարենորոգումներու հարցը նորէն ձեռք կ'առնէր, Համիտեան բռնապետութիւնը կը դիմէր խորամանկութեան, և կառավարական ճնշման տակ՝ հայաբնակ գաւառներէն հայ երեւելիներու անունով շնորհակալութեան հանրագրութիւններ կ'ուղարկուէին Պոլիս, Եւրոպայի աչքին փոշի ցանելու համար: Վանի ջոջ աղաներն ալ, համակերպողի իրենց ստրկամտութեամբ, համիմաստ հանրագրութիւն մը կ'ուղարկէին Պոլիս: Գաղտնիքը դուրս ելած էր և հայ ժողովուրդը գերագրգռուած. անոր ղեկավարը՝ Փորթուգալեան, կուտար առաջին ազդանշանը: Վանի շուկան գոցելով՝ հազարաւոր Հայեր առաջնորդարան կը դիմէին, ազգային շահերուն դաւաճանող ապերասան աղաները իրենց ձեռքով պատժելու: Հայոց Հայրիկի փէշերը կ'ըլլային ապաստանարան այդ վախկոտ աղաներուն:

Երկար շտեւեց սակայն Վարժապետանոցի կեանքը. խաւարամտութեան խնկարկու վեղարաւոր և անվեղար հակառակորդները, սարսափած Փորթուգալեանի կարճ ժամանակի մէջ վայելած ժողովրդականութենէն, և մանաւանդ իր պայքարող ուժէն, թալփայական հակառակութիւնները մէկ կողմ թողած, դաշնակցեցան հասարակաց թշնամիին՝ Փորթուգալեանը, տապալելու: Միացեալ Ընկերութիւնը, անսալով անոնց չարախօսութիւններուն, փակեց Վարժապետանոցը և Փորթուգալեանը Պոլիս կանչեց: Հայոց Հայրիկը սրտմտեցաւ Միացեալ Ընկերութեան այս անտեղի արարքին վրայ և Ներսէս Պատրիարքին գրեց թէ «...Մեծ սխալ մը գործուեցաւ Վարժապետանոցի փակումով»:

Պոլիս հանելով Փորթուգալեան կը մերժէր Միացեալ Ընկերութեանց առաջարկները, ուրիշ տեղեր երթալու իբրև տեսուչ, և որպէս Գաղափարի մարդ, Վան կը վերադառնար իր սկսած գործը շարունակելու անհատական ուժերով: Անմիջապէս կը հիմնէր «Կեդրոնական Վարժա-

րան»ը, իրեն քաջայեր ունենալով Հայոց Հայրիկի բարոյական աջակցութիւնը և մէկ երկու հարուստ վանեցիներու պաշտպանութիւնը :

Փորթուգալեան, որ դեռ 1873 թուին Սերաստիոյ բանտի խորերէն կ'երգէր՝

«... Ախ, Հայաստան, սիրտս ու հոգիս քեզ նւիրեմ, ընդունէ՛ ,
«Թէ կարելի, թո՛ղ ես մեռնիմ ու Հայաստանս ոտք ելնէ .
«Անոր սիրոյն բռնտն ալ դուրսիմ, պալատ է ան ինձ համար,
«Ոտքերս ձեռքերս շղթայ դարնեն, երջանկութիւն է ան ալ :
«Թէ մինչև իսկ աքսորւիմ, դիտ թափառական ընէ բաղբ ,
«Հայաստանիս սիրոյն համար ամէն տեղ ինձ կ'ըլլայ դրախտ .
«Նալատակիս համնի՛մ միայն, թո՛ղ դիտ հանեն կախաղան,
«Կախաղանէն խեղդուող ձայնս պիտի կանչէ՛ Հայաստան :»

Վան կը մտնէր իր հայրենասիրութիւնն ու անձնուիրութիւնը ցոյց տալու տառապող հայ ժողովրդեան, և իր օրինակով պատրաստելու վասպուրականի երիտասարդ սերունդը գալիք անխուսափելի պայքարին համար :

Փորթուգալեանի եօթնամեայ գործունէութիւնը վասպուրականի մէջ, կարելի է համարել իր կեանքի ամենաբեղուն շրջանը : Ան էր, որ յեղափոխական կրակը Հայաստան բերաւ : Ան ցանեց նոր կեանքի և ազատ գաղափարներու սերմերը, ու իր աշակերտները թրծուած իր գաղափարական կրակով, իրենց վարդապետի հեռանալէն յետոյ՝ նոյնքան անձնուիրութեամբ վասպուրականի, Ատրպատականի և Բաղէշի կրթական գործի վարիչները՝ ինչպէս նաև յեղափոխութեան առաքեալները եղան երկա՛ր տարիներ :

*
* *

... Տարագիր ու հալածական, Փորթուգալեան վերջապէս կը հաստատուէր ազատ Ֆրանսայի հիւրընկալ արհերուն վրայ, և 1885ի ամրան, Մարսէյի մէջ կը հիմնէր հայ տառապանքի արձագանգը հանդիսացող առաջին յեղափոխական թերթը՝ Արևեկիս, գաղափարի իր դրօշակը, որուն հրատարակութեան համար կուրծք աալով նիւթական և բարոյական ահագին զրկանքներու, յաջողած է 29 երկա՛ր տարիներ պահել անոր գոյութիւնը : Համիտեան բռնակալութիւնը հալածելով գաղափարը՝ անոր տարածման պատճառ կ'ըլլար մէկ կողմէն, իսկ միւս կողմէն Արևեկիս թերթը, իր յեղափոխաշունչ գրուածներով, կուգար հրահրելու վասպուրականի երիտասարդութիւնը : Յեղափոխական գաղափարի խմորումները գործնական գոյն կ'առնէին և շուտով հիմքը կը դրուէր հայ յեղափոխական պատմութեան մէջ անդրանիկ տեղը գրաւող «Արմէնական կազմակերպութեան» :

Սօսքը այլևս գործի փոխուած էր : 86 թուին Աւետիսեան և իր ընկերները, խուճաք մը երիտասարդներու գլուխը անցած, ազգային սահմանադրական ընտրութիւններու առթիւ, ամէն անարդարութեան հա-

մակերպող աղաներու թեկնածութիւնը պարտութեան կը դատապարտէին, կասեցնելով կառավարական միջամտութիւնը:

Վանի երիտասարդութիւնը կ'ոգևորուէր, և կազմակերպական գործը կը սկսէր մեծ թափով առաջ երթալ: Քամառ-Քաթիպայի ազատաշունչ երգերը՝ ներշնչումի աղբիւր, իսկ Փորթուզալեանի կեանքն ու իր հրատարակած Արևեկիան ոգևորութեան առիթ կը դառնային Վանեցիներուն:

Դէպքերը իրարու կը յաջորդէին: Չուխ Կէտիւկը կ'ըլլար հայ յեղափոխութեան առաջին զոհարանը: Յովհաննէս Ազրիպպասեանը և Վարդան Գոլոշեանը, ազգային ազատագրութեան դատին համար առաջին զոհերը կը հանդիսանային 89 թուի Մայիսին: Առաջինը՝ Վանեցի, Փորթուզալեանի աշակերտը, իսկ վերջինը, Ռուսահայ, Արծրունիի դպրոցէն դուրս եկած: Հայ յեղափոխութեան անդրանիկ նահատակները, իրենց արիւնը միախառնած՝ հայ ժողովուրդի դատը կը սրբագործէին:

...Արևեկիաի ծրարները շալակած՝ յանձնակատար Ղազարը, գիշերանց պարսկա-տաճկական սահմանը անցած ժամանակը, թուրք զինուորներու կողմէն ձերբակալուելով՝ Պաշգալէ կը տարուէր, անկէ Վան ուղարկուելու: Վանի երիտասարդութիւնը, իր անձնուէր ընկերն և անոր քով բռնուած յեղափոխական թղթերն ու Արևեկիաի ծրարները ազատելու նպատակով, բոլոր մը կը կազմակերպէր, և երեք հոգինոց խումբ մը կ'ուղարկէր՝ ծրագիրը ի գլուխ հանելու: Այդ խումբը Նոր Գեղի Կէտիւկը կը հանդիպէր Ղազարին և իրեն ընկերացող երկու ոստիկաններուն, կը յարձակէր անոնց վրայ, կը վիրաւորէր ոստիկաններէն մէկը, կը խլէր անոնց ձեռքէն հրացաններն ու կապոցները և Ղազարի ձեռնակապերը քանդելով դէպի ազատութիւն կ'առաջնորդէր...

Դարձեալ Փորթուզալեանի աշակերտներէն՝ Փանոսը, գլուխ կ'անցնէր առաջին հայդուկային խմբին, Հայոց Չորի և Շատախի հայ ազգաբնակչութեան պատուհաս դարձած Բիրավանցի Շաքիրը պատժելու: Անոր անունը երկար ժամանակ ա՛ն ու սարսափ ազգած էր Վասպուրականի Բիւրտերուն, որոնց մայրերը իրենց զաւակները Փանոսի ա՛ն ու սարսափով կը քնացնէին՝ ըսելով «Մի՛ լար, Փանոս կուգայ»:

Ենորհիւ այդօրինակ գործունէութեան Վասպուրականի մէջ և Արևեկիանով արտայայտուած ազատաշունչ գաղափարներուն, Վասպուրականի երիտասարդութիւնը 90-ական թուականին եկած կանգնած էր այնպիսի գիտակից ճանապարհի մը վրայ, որ ակամայ զայն պիտի առաջնորդէր դէպի յեղափոխութեան փշոտ ուղին, ու ո՛րքան կենդանի ոգևորութիւն յանուն ժողովուրդի: Երիտասարդ սերունդի համեստ ներկայացուցիչները, հաւատարիմ իրենց ներքին մղումին, անցան գործի գլուխ: Անոնց մէկ մասը գնաց զաւառները և գիւղերը՝ որպէս ուսուցիչ և յեղափոխական պրօպականտիստ, իսկ միւս մասը գրկեց զէնքը, ամէնքն ալ պատրաստ զոհաբերութեան: Զէնք վերցնողներու առաջին շարքերը, բաղդաւոր բացառութիւններով, ինկան յեղափոխութեան առաջին ընդհարումներու միջոցին, Չուխ Կետիւկ, Դէրիկ և Դուշման Դարայի:

մէջ . գիրք և գրիչ վերցնողներու միւս մասն ալ հետեւեցաւ անոնց և 96 թուի «Վանի ինքնապաշտպանութեան կռուի» մէջ անոնց ոսկորներն ալ ցրուեցան Չուխ Կէտիւկ , Կիւզէլ-Դարա , Աղբակի Դաշտին մէջ , Չապ գետի ափերուն և Պազի-Տաղի սարալանջերուն վրայ . ինկան անոնք , զէն ի ձեռին , իրենց պարտականութեան ճանապարհին վրայ , բայց յեղափոխական ըմբոստ մարտիկներու ուսուցիչը , ալեհեր մագերով դեռևս կ'ապրի , նոյն ջերմեռանդ հաւատքով դէպի հայ ժողովուրդը , որով ան կը գործէր ասկէ 40 և աւելի տարիներ առաջ :

Յեղափոխութեան փշոտ ճանապարհով շատերը փորձեցին քալել , մեծ մասը յուսահատեցաւ , ոմանք դասալիք եղան , ուրիշները դաւաճանեցին . քիչերու հետ Փորթուգալեանը մնաց հաւատարիմ գաղափարին , և անոր յաղթական ապագային . . .

Եւ հայ ժողովուրդը իր նուիրական պարտականութիւնն է որ կը կատարէ , տօնելով՝ յանուն համազգային երախտագիտութեան , Մ . Փորթուգալեանի , մեր յեղափոխութեան վեթերանի յորելեանը : Այդ տօնականութեամբ՝ հայ ժողովրդի երիտասարդ սերունդը , ազատութեան գաղափարի յաղթանակն է որ կը տօնէ , և այդ գիտակցութեամբ ալ կը մօտենայ ծերունագարդ յորելեարին՝ վերակրկնելու քառասուն տարի առաջ անոր հնչեցուցած երգի արձագանգը՝

« . . . Վտարանդի՛ , շատ դառն էին քո օրեր ,
Ահա տեսնես , նսլատակիդ ես հասեր .
Գաղափարիդ յաղթանակը քու ձեռքիդ ,
Հայ ժողովուրդ պսակ պճնել գայ ճակտիդ :
Ազատութեան դու անձնուէր ,
Գաղափարդ է յաղթանակեր » :

Ս. Լուիզ

Ս.ՍԻՍՆԱԶ Մ. ԶԶԵԱՆ



Ք Ա Ռ Ա Ս ՈՒ Ն Տ Ա Ր Ի

Անդ երկիցեմ գերկիւղ ուր ոչ իցէ երկիւղ:

Մկրտիչ Փորթուզալեանը առաջին անգամ տեսայ Մանչէսթըրի մէջ, 80-ական թուականներու վերջերը: Հանգուցեալ իշխան Մելքոն խանի նման՝ կարճ նիհար կմախք մը, աններկայանալի, ու առանց իր նախընթաց համբաւին՝ խիստ աննպաստ տպաւորութիւն միայն կրնար թողուլ առաջին հանդիպողին:

Երկրորդ անգամ Փորթուզալեանը զգացի Թէհրանի մէջ, ահաւոր Նասրէտտին Շահի առջեւ: Իննսունական թուականներու սկիզբներուն, գաղութի երիտասարդութիւնը ընթերցարան մը բանալ որոշեց: «Միութիւն» մը կազմեցին և զիս ատենապետ ընտրեցին: Ընթերցարանի անունի մասին կարծիքներու տարբերութիւններ կային, ես թելադրեցի Բաքֆի Քիւլայ, իբր յարգանք մը Պարսկաստանի մայրաքաղաքին կողմէ երկրի ամենափայլուն գրողներէն մէկուն: Առաջարկը ընդունուեցաւ և ընթերցարանը Բաքֆի Քիւլայ եղաւ: Համիտի դպրոցի լրտես մը՝ վաճառականապետի տիտղոսով՝ «որսի հոտ առաւ», իրեն համար առաջդիմութեան ճամբայ մը նշմարեց: Շէքսպիրին համակարծիք չգտնուեցաւ թէ ի՞նչ հմայք կայ անունի մը մէջ: Ան Բաքֆի Քիւլայը աստուածատուր պարգեւ մը սեպեց անօթի լրտեսի մը համար ու տեղեկագրեց ուր որ անկ էր թէ Պարսկահայերու մէջ Աթէնքէն եկած Բաքֆի անունով վտանգաւոր յեղափոխական մը կը գործէ, քիւլայ մը կազմակերպեր է Թէհրանի մէջ, ուր ահուկի դաւեր կը պատրաստուին: Պոլսէն Թէհրան գրուեցաւ և Բաքֆի Քիւլայի նախագահը հարցաքննութեան ենթարկուեցաւ արքայից արքային առջեւ իսկ: Գործի վերջնական արդիւնքը եղաւ՝ համիտեան շքանշան մը վաճառականապետին, Բաքֆի Քիւլայի պաշտօնական հաստատումը, Արմենիա թերթի ազատ մուտքը Պարսկաստանի մէջ (բուն խնդիրը անոր շուրջն էր): Բաժանորդները այնքան շատցան որ թերթը կէս գինով սկսաւ մուտք գործել Իրան և անոր շնորհիւ հայ և օտար բոլոր թերթերը ազատ մուտք գտան երկրին մէջ:

Փորթուզալեանը պիտի հանդիպիմ երրորդ անգամ իր Յորեկեանին առթիւ:

Կ'ըսեն թէ Թոգաթ եղած ատեն, յեղափոխական գործի ամբաստանութեամբ՝ Փորթուզալեանը խոհեմ վալիին առջեւ քաշեցին քննութեան ենթարկելու: Վալին զայն տեսնելուն՝ հիասթափ ձեւով մը հարցուց, թէ արդեօք իսկապէս իր առջեւի՞նն էր այնքան համբաւաւոր Փորթուզալեանը: «Այո՛, նոյն ինքն էր:» «— Ուրեմն այսօրուրնէ ազատ է, ինձմէ հարիւր տէօնիւմ թէզքէրէ մը ունի՛ բրօքազանտ մլելու հոս որքան որ

իր սիրտը կ'ուզէ» : Նասրէտաին Շահն ալ միեւնոյն եզրակացութեան էր յանգած Փորթուգալեանի և իր դասակարգի ընդհանուր գործունէութեան մասին . . .

Յեղափոխական Փորթուգալեանը Պոլսէն, Թոգատէն, Վանէն վազնառած՝ Մարսիլիայէն կը գրէ 10 յուլիս 1885ին . «Եթէ այս տողեր գրողը մի յանցանք ունեցած է, սա է թերեւս որ իւր ազգի և օսմանեան տէրութեան օգտակար լինելու ջերմ եռանդով վառուող մի սիրտ ունի : Իւր այս յանցանքը կը խոստովանի հրապարակի վրայ և չի դադրիր զայն գործելէ, քանի որ կենդանի շունչ կայ իւր մէջ : Ուստի կը վերջացունէ իւր խօսքը՝ կրկնելով դարձեալ թէ ինք ինչ որ էր ասկէ առաջ, նոյնը պիտի մնայ միշտ և թէ այդ սրտի տաք եռանդը գերեզմանի ցուրտ քարը միայն պիտի կրնայ պաղեցունել» :

Տաճկաստանի, Պարսկաստանի, Ռուսիոյ, Հնդկաստանի և եւրոպական գաղութներու մէջ՝ ուր որ հայ տուն մը կայ, քառասուն տարիներէ ի վեր Փորթուգալեանի անունը յիշուած է թէ՛ յարգանքով և թէ՛ կէս մը երկիւղով :

Յարգանք պոլսեցի այն ուսուցչին որ կամքի ոյժը ունէր փափուկ կեանքէն դուրս նետուելու դէպի գաւառ, Թոքատ, Վան, հոն գործելու և կէս դար մը իր խօսքի և գրչի ոյժը զգալի ընելու բոլոր բռնակալներուն :

Լուսաւորչի մը յամառութեամբ նոր դարերու Խոր Վիրապները իջաւ, օձերու հետ մաքառեցաւ . Հայու տոկունութեամբ, և ծրագիր ծրագրի վրայ, միութիւն միութեան վրայ կազմակերպեց, գլուխ հանեց շատ բան՝ այն պարզ անպաճոյճ թերթովը որ երեսուն տարիներէ ի վեր ծանօթ է բոլոր հայ տուններուն ու սիրտերուն :

ԲՐՕՅ ՏՕԲԹ. ՊԱԶԻԼ ԽԱՆ



Հ Ե Ր Ո Ս Ը

Մ. ՓՈՐՅՈՒԳԱԼԵԱՆԻՆ

Ով մա՛րդ հերոս, հանճար եւ կամ նահասակ,
Որ քու անձիդ համար երբեք չես ապրած,
Որ հրաշք մը ունիս քեզի նրպասակ,
Քաղափար մը անձնուրաց,

Թողած կեանքին լայն ուղիները փափուկ,
Անպատասխար՝ սօթերուն սակ ու ձիւնին,
Մի՛ս բարձրացար քունս նամբէ մը դերբուկ,
Ուր ոտերը կ'արիւնին:

Սրահներու մեջ երբ բոցը կը վառէր,
Երբ ջահերը կը շողային լուսարձակ,
Դուն մեկնեցար հոն ուր ցուրտ էր, խաւար էր,
Եւ հեռու էր լուսածագ:

Թափօրփեցան թարմ երազներդ անհամար.
Դեռափրօթիք օրերդ անցան հոգերով.
Չըծաղկեցաւ ոչ մեկ գարուն քեզ համար.
Արտասուեց իղձդ ու գորով:

Պրսակուեցան վարդերով ցած գրչուխներ.
Աշխարհ չունի հերոսին փառք արժանի.
Փուռ-պրսակին ներքեւ՝ մաքուր, անվեհեր
Իր նակասը կ'արիւնի:

Ջրաբեցին ու դաւեցին քեզ մարդիկ,
Մրոտեցին արտիդ յոյգերը պայծառ.
Դո՛ւն, բզբզման, իտեպի վեհ մարտիկ,
Մի՛ս աննրկուն կրուեցար:

Բարձր բռնած ջահը յոյսին ծիածան,
Թափառեցար մազըցելով սարէ սար.
Ըսուերներ, մեզերն եղան ցիր ու ցան
Լոյս դրօշակովդ ուր հասար:

Ազգիդ սուր դալար ուժերը կեանքիդ,
Ու խամբեցար որ անոր յոյսը ծաղկի.
Արդ, աւերակ խորհերուն մեջ անծրպիս
Չե՛ս տեսներ բոցը կեանքի,

Եւ հայ միտք՝ որ թեւ առած կը թրոխ.
Դեպի այգերն ու բափիւռներ հեռուն,
Քու անունիդ արձագանգը սխրալի
Մի՛ս կրկնելով դարերուն:

ՍԻՊԻԼ



ՅՈՒԲԵԼԵԱՐԸ ԵՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Երբ, 1848ի իտալական ազատ գաղափարներով սնած երիտասարդներ, հասանք Պոլիս, մեր առաջին գործը եղաւ հիմնել կրթական ընկերութիւն մը ԱՐԱՐԱՏԵԱՆ անուամբ՝ Հայաստանի մէջ կրթութիւն ծաւալելու համար, և այդ տեղի ունեցաւ 1876ին: Ճիշդ այդ նպատակն ունէր նաեւ, մեծ զուգադիպութեամբ, Պոլսոյ համեստ ընտանիքի մը զաւակ Մկրտիչ Փորթուգալեանը, որ իր թարմ տարիքին մէջ մեզի ընկերակից եղաւ, առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու՝ գործի ձեռնարկելու պատրաստ: Մեր առաջին նպատակին գործադրութեան իբր վայր որոշեցինք Վասպուրականը և Տարօնը, կամ, ինչպէս մեր մէջը կը կոչէինք՝ դաշտափայր Հայաստանը:

Ճանապարհի դժուարութիւնք, նիւթական նեղութիւն, վախ, ոչինչ կը նշանակէին իրեն համար: Իր միակ փափաքն էր՝ ծառայել Հայրենիքին, կրթել մանուկները, ազդել իրենց սրտին՝ և զսնոնք ազատ ոգւով ապրելու պատրաստել: Ուստի երբ Արարատեան Ընկերութիւնը զինքը Վան զրկել որոշեց՝ անմիջապէս ձամբայ ելաւ:

Փորթուգալեանի Վան հասած օրը, նոր թուական մը կը բացուէր Վասպուրականի համար: Իր անդրանիկ գործը եղաւ բազմաթիւ ունկընդիրներու առջեւ բանախօսութիւններ ընել, պարզել Արարատեանի նպատակը, նոր միտք, նոր ոգի, և նոր գաղափարներ արթնցնել ժողովրդեան և երիտասարդներու մէջ: Իսկ Արարատեան Ընկերութեան կողմանէ իր բացած առաջին վարժարանը եղաւ Ալիւր գիւղի մէջ, 1876 Նոյեմբեր 1ին:

Փորթուգալեան կ'ընէր այս ամէնը անսովոր արագութեամբ, իբր թէ ամէն բան տարիներ առաջ պատրաստուած ըլլային: Մէկ կողմէ գիւղացիք վարժարան կը պատրաստէին, իսկ ինք, միւս կողմէ աշակերտ կը հաւաքէր. բայց այսպէսով ալ չբաւականացաւ Փորթուգալեան, Արարատեանի իրեն տուած հրահանգով՝ փութաց վարժարան մըն ալ բանալ Վանայ մէջ՝ որ կոչուեցաւ Վարժապետանոց, որուն յաջողութեան աջակից եղաւ նաև Պ. Մարկոս Նաթանեան թէ՛ իրրեւ ուսուցիչ, և թէ՛ իբրեւ փոխ-տեսուչ:

Սակայն Փորթուգալեանի գաղափարները հետզհետէ ուրիշ գոյն մը կը ստանային, և ան չէր բաւականանար միայն մանուկներու միտքը կըրթելով: Կարծես թէ կ'ուզէր ամբողջ ազգը միանգամայն կրթել՝ և ամէնուն ինքնաձանաչութեան զգացումը ներշնչել: Ու այդ նպատակին հասնելու համար՝ ճամբորդութիւններ ըրաւ նախ դէպի Տփղիս, իր բարեկամ Գրիգոր Արծրունիի քով, յետոյ Պոլիս, իր մասնաւոր նպատակին իրագործման գաղափարակիցներ գտնելու համար...:

Տարիներ յետոյ՝ զինքը կը տեսնենք դպրոցական ասպարէզէ հեռու, Մարտիլիա, լրագրական ասպարէզին մէջ, որ նոր շրջան մըն էր իր գաղափարները տարածելու համար: Ահա այդ օրէն այսօր՝ 25 երկար տարիներ անցան. կ'աշխատի, կը գրէ, կը տքնի Փորթուգալեան, և կըրնանք ըսել թէ հասած է իր նպատակին:

Ժամ է որ ամէն մարդ գիտնայ անոր աշխատութեանց և ծառայութեանց արժէքը՝ գնահատելու համար զանոնք ըստ արժանւոյն: Ատոր մէկ գեղեցիկ արտայայտութիւնն է յորելեանական ներկայ տօնը՝ պատրաստուած ամէն դասակարգի ընտրելագոյն ներկայացուցիչներէ, որոնք յանձին Փորթուգալեանի կը փառաւորեն ազգին համար անձնուէր աշխատողները՝ յօրինակ և ի խրախոյս հանրային բոլոր գործիչներու:

ԱՐԱՐԱՏԵԱՆԸ ԸՆԿԵՐՈՒՔԵԱՆԸ ՀԻՄՆԱՊԻՐՆԵՐԷՆ
Պ Վ.Ա.ՍԻԼՆԱՆ



ՌԱԶՎԻՐԱՆԵՐԸ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻՆ

Հայաստանի Ռահվիրաներն են:

Հազած չն'ն կօշիկ երկաթակուռ, և ո՛չ ալ ունին ցուպը տապարաւոր: Բոպիկ են մանուկի մը պէս, և իրենց ձեռքերը սպիտակ ու մերկ են շուշանի մը թերթերուն նման: Բայց շողիւններ կ'արշալուսեն իրենց աչքերը, և հաւատքի ճառագայթ մը, թովչակա՛ն փոկէպարան, կը սեղմապնդէ իրենց մէջքը:

Եւ ճամբաները, իրենց առջև, կը փեռնակին ապառաժներու կուրծքին մէջէն:

Լեռները, վար խոնարհած ամպերէն, շարան շարան, ուղտերու պէս, կոնակնին կը ծռեն անոնց քայլերուն ներքև: Երկինքը հուր կը տեղայ ու երկիրը արեւը կը զգայուէ շուրջը այդ նորօրինակ առաքեալներուն՝ որոնք կ'երթան, անվհատ, կանչուած անձանօթ շեփորէ մը:

Դէպի Երկիրը, զոր անցնող դարերը, բոլոր դարերը շարժումի և լոյսի, մոռցած են աղետաւոր աստղի մը տակ, և որուն ընդերքները հերկած է միմիայն ոճիրը իր ճիրաններով, ու սերմանած՝ իր թաթերով:

Դէպի Երկիրը, որուն իւրաքանչիւր օրոցքին վրայ կռունկը կուլայ, իւրաքանչիւր գերեզմանի վերև բորենին կը հակէ:

Դէպի Երկիրը, որուն փետրաթափ աղաւնիները ստիպուած են խլել իրենց կերը ագռաւներու կտուցէն, և մարդիկ իրենց կերակուրը շնագայլերու ցռուկէն, և որուն աւերակներուն կատարին Սովը, ճիւղի պէս կանգուն, կ'ոռնայ խրճիթէ խրճիթ, հորիզոնէ հորիզոն:

Դէպի Երկիրը, որուն դրախտը գետնասոյզ կորսուած է աճիւններով, աճիւններով տակ՝ զոր հոսեցին սգաւոր մայրերը իրենց մաղիւրէն, ու դարաւոր կմախքները իրենց մսաթափ ծնօտներէն:

Եւ ճամբաները կը բացուին դէպի այդ Երկիրը, և անոնք, Հայաստանի Ռահվիրաները, կ'անցնին լուսաւոր երեւոյթներու պէս:

Իրենց առջև կը ցամքեցնեն ճահիճները գորտերու կառանչիւններուն վրայ, կը կամրջեն Եփրատը, դանակներով կը խճաղարդեն ափունքները Իրիսին և Ալիսին: Կը դարբնեն Արատսի լեռնաշղթաները, ու խտէալին մարմարներով կը սալարկեն ուղիները ջորիներուն և կածանները այծերուն:

Ճամբաներ, նորահրա՛յ ճամբաներ են՝ զոր կը հորդեն սիրտէ սիրտ, և սերունդէ սերունդ. ու իրենց աղաղակին, կուրծքին առջև կը լայնան ու կ'երկարաձգուին պողոտաներն արեւատառ՝ ուրկէ պիտի քայլէր, ապագային, տենդայոյզ յեղափոխութիւնը Հայկական, սուրը՝ ձեռքին, ջահը գանկին մէջ:

Անոնց շունչը, իբրև գարունի զեփիւռ, կը բանայ դուռները մոռցուած հիւղակներուն՝ ուր հաւատքը վառիլ կը սկսի թոնիրներուն բոցին պէս:

Անոնց սպիտակ ձեռքերը՝ աթարով ձեփուած գոմերուն օրհնուած հիմունքին վրայ կը բարձրացնեն տաճարները լոյսին, ուր կը ծնանի գաղափարը՝ ինչպէս մանուկ Յիսուսը մտուրի մը ոսկի յարդերուն վրայ:

Եւ անոնց խօսքը, փայլակնաթափ որոտում, կը փրթի ամպերուն և կայծակներուն կողէն, և ստուարացած, լեռնացած արձագանգէ արձագանգ, կը տարածուի և կ'ողողէ մէկ ծագէն միւսը հայրենի աշխարհը բովանդակ:

Կը ծաղկի վերածնունդը:

Նշենիները ծիրանի կը դգենուն բլուրներուն վրայ:

Հնոցներով մէջ կը նետուին խոփերը, և այս անգամ ապրուած դէզերուն խարոյկին մէջն է՝ որ կը ծնանին կարիճները, ու նոր հարսերը, բոլոր նոր հարսերը վարդենիներուն մէջ, կ'ունենան կարմիր յղացումներ կարմիր որդիներու:

Արեւածագի հորիզոնին խորը, ուր գիշերը կ'ողջակիզուի, կը զարթնու հրդեհը յաջորդող օրուան:

Եւ անոնք, բոլոր սգակիրները բոլոր վիրաւորներուն հետ, բոլոր շիրիմները բոլոր խանձարուրներուն հետ՝ քանդուող խաւարին փլատակներէն կ'ելլեն դուրս, վա՛րը, նորաբաց ճամբաներուն վրայ՝ սալարկուած Հայաստանի Ռահվիրաներէն: Եւ առաջին անգամ, հո՛ն, մեծ պողոտային վրայ կը հաւաքեն բովանդակ բուռերով ու բովանդակ հոգիներով բոցն ու վարդերն այն Արշալոյսին՝ որ Վարագի կռնակէն կը բացուի, հա՛ կը բացուի՝ այս անգամ արիւնածուփ ծովու մը պէս:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԹԱՆ

ՈՂՋՈՅՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԻՆ

Անոր գոր հաւատքը չլինց եւ որուն
հայրերուն կամքը առաջնորդեց

Ի՞նչ կոյս ու միամիտ ոգեւորութեան օրեր էին այդ օրերը... 36 տարի առաջ :

Աղատութեան շունչը կը փչէր Թուրքիոյ մէկ ծայրէն միւսը . ստրուկները, որ երէկ անուն չունէին, առտուն յանկարծ իրաւագօր կ'արթննային վերածնունդ հայրենիքի մը մէջ... :

Բախտը կը ժպտէր նաև մեզի. «Հարստահարութեանց Տեղեկագրին» կը յաջորդէին «Հայկական Բարենորոգում»ները, «Հայկական Խնդիր»ը որ աւերակներու մէջէն կը բարձրանար տակաւ, երազներ կուգար ցանելու, կո՛ւց կո՛ւց. Կովկասէն Կիլիկիա, Հայութեան չորս ծագերուն :

Հնամենի՛ երազներ որոնք դարերու մրափը կը քաշէին, ժողովրդի թմրած գիտակցութեանը մէջ... :

Ու կը հնչէր վերածնումի շեփօրը, կը հնչէր կերտիչ աշխատանքի հրաւերը՝ հայ կամքերուն և հայ մտքերուն :

Օրուան կարդախօսն էր՝ Դեպի Հայաստան, կը կրկնէին դայն ամէնքը՝ քերթող, քարոզիչ, օրագրող և հռետոր... :

Ու երբ Վարժապետեան Ազգային Ժողովին բեմէն եր'խարաշունչ աշխատանքի մը ուրուագիծը կ'ընդլայնէր «աղղասէր»ներուն առջև՝ կը ծափահարէին զինքը կատաղաբար, որոտագոչ :

Դեպի Հայաստան, Դեպի Հայաստան, — բայց... ո՛չ ոք չարժեցաւ իր տեղէն :

*
* *

Վաղանցուկ այդ խանդավառութեան, որ լուրջ տրամադրութեան մը արդիւնք չէր, յաջորդեց դասալիք լքումը : Ճիգին փորձն իսկ ահաբեկեց այդ թուլամօրթ քաղքենիները, որոնք մինչեւ այսօր ալ սնամէջ յաւակնութիւնովը կը տառապին՝ «Ազգ»ը պարփակելու, ներկայելու և ղեկավարելու :

Գեղեցիկ էր արդարեւ Հայաստանը, դասական անուրջներու չքնաղ այդ երկիրը, անսպա՛ռ եւ սքանչելի՛ նիւթ քերթուածներու, ճառերու և քարոզներու... :

Ու Պոլսեցին հաւատարիմ մնաց անոր, ցորչափ Հայաստանը երազներու աշխարհն էր միայն :

Բարոյական այդ ժամանցէն դէպի գորշ իրականութիւնը քանի՛ լայն էր այդ վիճը, խոր ու դժպիսի :

Մեր քերթողին գովաբանած Հայաստանը, «Երկիր դրախտավայր»

— և ուր խնայրդներու այդ չոր անապատը, ուր ամէն բան, բայց ամէն բան՝ «միջատ»էն սկսած մինչեւ մարդը խօսք մէկ ըրած էին տանջելու ազնուատո՛հմ Պոլսեցին :

Ու այն օրէն այս օր Պոլսեցին տեղը գամուած է պինդ — կարգախօսը կը մնայ նոյնը, իր մեհենական սրբազնութեանը մէջ քարացած — Իհպի Հայաստան, յաւելուածով մը միայն՝ «Իացէք», բայց երբե՛ք «Երթանք» . . . :

*
* *

Բարձրերը խոյանալու անզուսպ տենչ մը, տառապող խաւերուն հանդէպ անհուն և անյեղլի համակրանք մը, լծուած հզօր և անվկանդ կամքի մը — ահա՛ հազուագիւտ դէմքեր, որոնք կրնային ճողոպրիլ յաւիտենական Բիւզանդիոնի անբարոյիչ աղդեցութենէն : Բանի մը հոգի եղան անոնք, ցաւագինօրէն քիչ : Ինձ ծանօթ եղածներն են Սրիմեան, Փորթուգալեան և Սարըեան, — տարբեր տիպի և տարբեր արժանիքի մարդիկ :

Փորթուգալեանի թափառումները չէ որ պիտի պատմեմ հոս : Պոլսէն Եւդոկիա, Վանէն Կովկաս — կենդանի քարոզ մը և գաղափարի անխոնջ սերմնացան մը եղաւ ան : Ինչ են այդ տարիները, բայց իր կեանքին լաւագոյն՝ կեդրոնական տարիներն եղան անոնք : Փորթուգալեան անոնց կը պարտի իր համբաւը :

Երբ քիչ ետք՝ հալածական իշխանութիւններէն, լքուած իրեններէն ապաստան փնտռեց Մարսիլիա, այլևս առանձնացաւ իր երազներուն հետ, գուրգուրաց անոնց վրայ, ապրեցաւ անոնցմով, վերապրեցուց անոնք իր գրիչով — անվհատ յարատեւութեամբ մը, սկզբունքի հաւատարմութեամբ մը, և յարածուն առաջդիմականութեամբ մը, որ ներդաշնակ լրացումն եղաւ իր գեղեցիկ անցեալին :

Առանձնակ գործիչներէն շատ քիչերը կրցան Փորթուգալեանի պէս անսայթաք և անյողդողդ քալել իրենց երկար ճամբան . . .

*
* *

Երեսուն տարիներ անցած են անկէ ի վեր — Պոլիսը մոռցաւ իր զաւակը, — ոչինչ զարմանալի. զի Պոլիսը կը թաւալի տակաւին, ինչպէս առաջ, նոյն իր եսութեան մէջ, այլամերժ ու ինքնաբաւ :

Ինքնամփոփումի երեսուն դժբախտ տարիներէն բան մը չսորվեցաւ Պոլսեցին : Հինգ տարուան սահմանադրական կեանքը, որ չերազուած պատենութիւններու խոստմնալից շրջան մը բացաւ մեր առջեւ — նորէն չազդեց Պոլսոյ հայ մտայնութեան վրայ :

Պոլսեցին չկրցաւ բարձրանալ իր գձուձ եսամոլութենէն դէպի այն գերագոյն պաշտումը «Ես»ին, չոր կրնայ փթթիլ ընկերային համերաշխութեան ու գործակցութեան ոլորտներուն մէջ միայն :

Պոլսեցին նոյն խաժամուծն է իր նախնական ըմբռնումներովը ընկերային բարոյականի մասին — ինչ որ եղած էր միշտ, ինչ որ էին հնումը բոլոր հայ «քաղաք»ները, ինչ որ Անին կը հանդիսանար իր անկումի օրերուն :

Եւ բնական է որ Պոլիսը — Հայութեան խորթ դաւակը, չուզեց ճանչնալ Փորթուգալեանը, որ հարազատն իսկ էր հարազատ Հայութեան:

Փորթուգալեանը կը յիշուի այսօր Հայաստանի մէջ, կ'ողջունուի այսօր հարազատ Հայերու կողմէ, զինքը կը գնահատեն բոլոր այն նոր մտաւորականները որոնք սարափի և մանիֆարուրանիի փորատնչերէն դուրս ու վեր՝ իտէալներ կը հետապնդեն վսեմ ու հանրօգուտ:

*
* *

Բայց մե՛ծ է մանաւանդ Փորթուգալեանի երախտիքը, իբրև մէկը առաջին սիստէմատիկ աշխատողներէն նուիրուած Հայ ֆաղսֆալիսն կազմակերպութեան ստեղծումին: Առաջիններէն մէկը ըմբռնեց ան, որ Հայ ցեղը անկարող էր այլևս իր գոյութեան պայքարը մղել հին ուժերով:

Հայ արքունիքը և նախարարական տոհմերը շատոնց արդէն սնհեա, անոնց ետեւէն՝ վերջին ազդակը՝ Եկեղեցին, տակաւ կը սահմանափակուէր իր զուտ կրօնաբարոյական դերին մէջ:

Նոր և հզօր գաղափարներու կրակոտ դրոշմը կրնար միայն կուռուսեղով շարժել ստեղծել ցիրուցան և իրերամերժ սյդ հատուածներէն, որ Հայ Ազգն էր ու է այսօր ալ, խորթ ու անջատ իրարմէ՝ դաւանութիւններով, լեզուով, բարքերով ու բնակավայրով:

— «Կազմակերպուեցի՛ք» — ահա՛ թալիսմանը զոր պտտցուց Փորթուգալեան Պոլսէն Վան ու Կովկաս, յու՛յիլ բայց յամառ, առաջ բերելով կազմաւորումը Արմենական կուսակցութեան, որ անուն մը թողուց իր կատարած կարեւոր դերովը 1896ի Վանեան կռիւներուն մէջ:

*
* *

Կ'անցնին տարիներ, երբ այսօրու ան կիրքերը վաղո՛ւց դերեզման մտած կը լինին օրուան «խենթերուն» ու «խելօքներուն» հետ, երբ ժամանակից դէպքերը բաժին կը դառնան անաչառ պատմութեան, երբ կ'ստեղծուի Հայ Ազգ մը իր արմատներուն վրայ՝ գիտակից և տէր իր ճակատագրին, — այն ատեն է որ պիտի ճշդուի ընկերաբանական դերը այն մեծ ու հզօր զոր կատարեց Հայ Յեղափոխութիւնը այդ կազմաւորումին մէջ: Այն ատեն է որ պիտի գնահատուի ազգ-կերտողներու արդէն շիջած այդ սերունդը, որոնց մէջ և Փորթուգալեան:

Այսօր, ողջունենք սրտագին մեր Վեթերան սերմնացանը, ողջունենք անոր դարձը հայրենի հողին վրայ:

Անոր ալիւոր մագերուն վրայ Արծրունեաց աւերակներուն փոշին է որ կը ճերմկի, բայց ահա՛նջ անոր սրտին — հոն անչէջ կը պլպլայ Հաւատքը որ սրտատրոփ կ'սպասէ... Մհերի Դռան բացուելուն:

Ողջո՛յն անոր զոր Հաւատքը չքեց և որուն քայլերուն կամքը առաջնորդեց:

Ա. ՎՌԱՄԵԱՆ



ՄՕՏԱԻՈՐ ԱՆՑԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

1880ի գարունը յատկանշական էր Երկրին մէջ :

Ձոջկանց տաղասաց ծիծեռնակները դեռ նոր դարձեր էին տարագնացութենէ . Մասիսի կողերէն՝ կտուց-կտուց շալկած ու բերած նուիրագործ հողերու պաղունցներով՝ էնոնք զբաղուած էին օծելու իրենց բոյները, ու կը ճուռողէին քաղցրիկ տաղերը հայրենի գարունին, ու, էտ գարունը ունէր իր աւերը, իր ցաւերը, բայց և լի էր դեռ-տեսիկ խանդերով ու ոգեւորութիւնով :

Այո՛, ցաւկոխ ու սարտասանքով էր, որովհետև 1877ի պատերազմական տազնապներուն ատեն, մեր արեւելեան ծայրագաւառներու, մանաւանդ Բագրեւանդի, Վասպուրականի կողմեր առաջ եկած արհաւիրքն ու թշուառութիւնը՝ տարուէ տարի աւելի ծանրանալով՝ ընդարձակ տարածութիւններու վրայ՝ վիժեր էին սովի սոսկալի համաճարակ մը, որուն մանգաղին զոհ կ'երթային չքաւոր-անօթի դժբախտներ . . .

Լի էր և նոր խանդերով, որովհետև բարենորոգումներ գործադրուելու յոյսեր թե առեր կը սաւառնէին՝ բնաշխարհի հորիզոնին վերև : Հորիզոնին վերև, որուն ներքեւը՝ Մեծ Ծերունին, Հայրիկն Հայրենեաց՝ Վարագայ դարաստանին վրայէն՝ կ'որոճար իր խոհանքները, հայրենասէր, ու սրտառուչ կոչերով՝ հանրային նպաստ ու օգնութիւն կը հասցնէր իր անօթի-սովալլուկ զաւակներուն :

Սրուանձտեանց՝ հոգեգիր վարդապետը՝ գաւառէ գաւառ ինկած, իր անուշ շունչը կը տարաղնէր բանին կենաց ծարաւի հոգիներուն . նա՛ Մոփաց ու Բիւրականց վրայէն Տարօն ու Սալնոճոր կ'իջնար, ու կապուտակ լճին ալիքներով՝ քաղած ծաղկունաց փունջերը կը տանէր Հայրիկին Հայրենեաց . . .

Ու Տարօնոյ մէջ, որ բարեբաղդարար ոչ միայն զերծ էր սովի սուկումէն, այլ սովահարներուն հաց կը մատակարարէր իր Հացեաց գաւառներէն, կը փայլէին իրենց կորովի պաշտօնավարութեամբ Գրիգորիս Ալէաթճեան, Յովսէփ Սարաճեան վարդապետները . սարկաւազ Յակորբ բանտէ ներս ու բանտէ դուրս կը պտտցնէր իր գանգասանաց ու հառաչանաց թղթերը, քաղցրախօս քարոզիչը՝ Մամբրէ եպիսկոպոս՝ մէկ կողմէ Ս. Կարապետի թալանը ետ կ'առնէր Զազա յափշտակիչներէ, միւս կողմէ՝ Ներսէս պատրիարքի նոր ողջոյնները կ'արձագանգէր եկեղեցւոյ բեմէն . . .

Ու մինակ ասոնք չէին . հետզհետէ կը հասնէին և ուխտաւոր ծիծեռնք սար աշխարհաց գաղթական հայերէ, կովկասէ ևն . : Ահա մի խումբ, Այվատեան վարդապետի հետ՝ Թաւաքալեան և ընկերները, որոնք կը քալէին Վարագէն Վան, ու Տարօնէն Գլակ, Աշտիշատ . . . Բաֆֆիի Կայծերը կը պծրուտային, Ծերենցի Երկունիք կ'ըմբոշխնուէր ու կը ցոլացնէր Խութեցի Յովնանին դէմքը Խութայ քարքարուաններուն մէջ . . .

Ահա՛ և Ծերենց ինքը, անձամբ-անձին, սիպոսակ-սրպրրկիկ ալիքով՝ Կամսարալանի, Կուսիկովի և այլոց հետ . Վանէն կ'իգար Տարօն, Տարօնէն Խարբերդ ու Վարդալառին դարձեալ Գլակայ — Ս. Կարապետի բարձունքը . —

Ահա և նորելուկ ուխտաւորութիւն մըն ալ՝ վեց-եօթ հոգինոց խմբի մը, որ Խուճրիկեանի (Սեբաստացի) առաջնորդութեամբ՝ Տրդատի ու Մամիկոնէից վանքը կուգար ողջունելու հոն խոնուած տոհմիկ ուխտաւորներու երամբ . . .

Ու, այս ամէնուն հետ տեղի ունեցած էր նաև ուրիշ աւելի նշանակալից ու լուսաբեր առաքելութիւն մը հայրենիքի մտաւորապէս խաւարամած անապատին մէջ :

Լուսաւորութեան, դաստիարակութեան առաքելութիւնը, որուն, ի մէջ այլոց գլխաւոր կարապետներն էին Մկրտիչ Փորթուգալեանը, Խիզանցի Երեցեան եղբարք, Մկրտիչ Սարեանը . . .

Փորթուգալեանը այն ինքնամատոյց մշակներէն էր, որ կիզար նուիրւելու հայրենի լուսաւորութեան : Ես անձնապէս ծանօթ մը չէի իրեն, բայց իր անունը՝ իբր հայրենասէր գործիչի և դաստիարակի՝ արձագանգիր էր մեր մօտ . . .

Եւ այս՝ այն օրերուն, երբ հայրենի աշխարհը խորասագումած էր ստուերներու տակ, ծարաւի դիտութեան մշակներուն . ու հազիւ թէ կը պլպլային քանի մը բնիկ — հնօք դպրատուններ՝ կարին ու վան, Գլակայ ու վարագայ Սիրակ սարերուն վրայ, ու այդ ստուերոտ օրերուն էր որ յանկարծ՝ բարիլուսիկ աստղի նման ցոլք տուին Փորթուգալեանի վարժարանը վանի մէջ, Արարատեանի նորաբաց վարժոցները Բագրեւանդի—Տուրուբերանի մէջ եւն . : Փորթուգալեանը շուտով զգացեր էր մեծագոյն պէտքը ազգ. դաստիարակութեան, որու բովէն անցնողները կրայուած մնային հայրենիքին, ու ձեռնարկեր էր բարձրացնել իր դպրոցը, որ վնասուած մարդը հասցնէր ստուերամած երկրին, և ո՛չ թէ անգործ իմաստակներ :

Բայց ժամանակի դժնդակ պայմանները ստիպեցին զայն վտարանդիի ցուպը վերցնել ու օտար ափի վրայ հիմնել իր սիրած Արմէնիայի համանուն թերթը, որուն նուիրեց՝ անընդհատ — անվհատ՝ իր սիրտն ու գրիչը՝ մինչև այսօր : Իր ձեռագիր — վիմատիպ անդրանիկ թերթերը մինչև գաւառի խորերը հասան առաջին ատիւ ու «Արմէնիա»ն պահունի թերթիկն եղաւ ժամանակի եռանդուն պատանեկութեան, և միայն անոնց չէ, այլ բարձրաստիճան ընթերցողներու էլ :

1890ին, մեր հայրենակից անմոռնալի Մարգար վարժապետի հետ՝ Պոլիս էինք ու օր մը օրանց՝ առաջնորդեց ինձ՝ Հայրիկի մօտ, Գուգկունձուք : Եկեղեցւոյ բակը հասէհաս էինք և ա՛նա երեւցաւ, իր վեհափառ հասակով, Հայրիկը, որուն ծրար մը մատոյց ուղեկիցս : Հայրիկը առաւ ու դէպ նաւամատոյց մէկ ուղղուեցաւ : Կամուրջին վրայ Հայրիկ՝ ձեռքերը պարթև հասակին ետև ու փոքրիկ ծրարը բռնած, ծանրաքայլ կը յառաջանար : Հայրիկը կը յառաջանար, իսկ Մարգար ինչ որ ծանր յուզումի մէջ էր :


— Ի՞նչ ունիս, ի՞նչ կայ արդեօք, ըսի :


— Լոտիսներու ցանցի մէջ ենք և Հայրիկի ձեռքի ծրարը — «Արմէնիա»ներ են, փսփսաց ակամջէս :

Այդ միջոցին կամուրջի գլուխը հասեր էինք . Հայրիկը կառք նստելու ատեն կարծես կռահելով մեր յուզումը, անվրդով՝ ասաց .

— «Մի՛ վախնաք, «Արմէնիա»ի Հայրիկը չի խուզարկուիր, և եթէ խուզարկել էլ ուղեն, պէտք է լսել Փորթուգալեան»ը :

ԳՆՂԱՄ Տ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ





ԳԻՆ 5 ՂՐՈՒՇ